

ՀԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՔԱՐՏՁԱԳՐՈՒՄ  
ՄԵԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ  
ՕԳՆՈՒԹՅԱՄԲ

**ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՅՅԱԼ  
ՆԱՀԱՆգՆԵՐՈՒՄ ԵՎ  
ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ  
ՀԱՅԿԱԿԱ ՍՓՅՈՒՌԻ  
ՈՒՍՈՒՄՆԱԻՐՈՒԹՅՈՒՆ**

Սույն ուսումնասիրության մեջ արտահայտված կարծիքները պատկանում են հեղինակներին և պարտադիր չեն, որ արտահայտեն Միգրացիայի միջազգային կազմակերպության (ՄՄԿ) տեսակետը: Ուսումնասիրությունում օգտագործված անվանումները և նյութի ներկայացումը չեն ենթադրում ՄՄԿ-ի կողմից ցանկացած երկրի, տարածքի, քաղաքի կամ շրջանի, կամ դրա իշխանությունների իրավական կարգավիճակի կամ դրա սահմանների վերաբերյալ որևէ տեսակետի արտահայտում:

ՄՄԿ-ն հավատարիմ է այն սկզբունքին, որ մարդակենտրոն ու կանոնակարգված միգրացիան ծառայում է ի նպաստ միգրանտներին և հասարակությանը: ՄՄԿ-ի որպես միջազգային կազմակերպության, փոխգործակցությունը միջազգային հանրության իր գործընկերների հետ ուղղված է միգրացիայի ոլորտում առկա մարտահրավերների լուծմանը, միգրացիոն խնդիրների վերաբերյալ իրազեկության մակարդակի բարձրացմանը, միգրացիայի միջոցով սոցիալ-տնտեսական զարգացման խթանմանը, ինչպես նաև միգրանտների մարդկային արժանապատվության արժևորմանն ու բարեկեցության ապահովմանը:

---

Ուսումնասիրությունն իրականացվել է ՄՄԿ-ի Զարգացման հիմադրամի շնորհիվ, Հայաստանում զարգացման խթանումը սփյուռքի ներգրավման միջոցովե ծրագրի շրջանակներում: Ուսումնասիրության մեջ արտահայտված կարծիքները պատկանում են հեղինակին և պարտադիր չեն, որ արտահայտեն ՄՄԿ Զարգացման հիմնադրամի տեսակետը:

Բոլոր քարտեզները նախատեսված են միայն նկարագրդման համար. սահմաններն ու անվանումները, ինչպես նաև օգտագործված որևէ նշումներ չեն արժանացել Միգրացիայի միջազգային կազմակերպության կողմից պաշտոնական հավանության կամ հաստատման:

Հրատարակիչ՝                    Միգրացիայի միջազգային կազմակերպություն  
    ՄՄԿ Հայաստանի առաքելություն  
    Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, ՄՄԿ-ի գրասենյակ,  
    Պետրոս Ադամյան 14 փողոց  
    Հեռախոս՝ +374 10 58 56 92  
    Ֆաք՝ +374 10 54 33 65  
    Էլ. հասցե՝ [IOMArmenia@iom.int](mailto:IOMArmenia@iom.int)  
    Կայք՝ [www.iom.int/countries/Armenia](http://www.iom.int/countries/Armenia)

Ուսումնասիրությունը հրատարակվում է առանց ՄՄԿ պաշտոնական խմբագրման:

Ուսումնասիրությունը հրատարակվում է առանց ՄՄԿ Հրատարակության բաժնի թարգմանության:

Ուսումնասիրությունը թարգմանվել է անգլերեն լեզվից:

Հեղինակ՝                            © Լուսիա Սավչիկ  
Զեկուրումը՝                        © Արամ Ուռուտյանի

Հղումների համար՝ Միգրացիայի միջազգային կազմակերպություն (ՄՄԿ) 2021: Հմտությունների քարտեզագրում մեծ տվյալների օգնությամբ: Ամերիկայի միացյալ նահանգներում և Ֆրանսիայում հայկական սփյուռքի ուսումնասիրություն: ՄՄԿ Հայաստան:

ISBN 978-92-9068-946-1 (PDF)

© ՄՄԿ 2021



Որոշ հեղինակային իրիավունքներ պաշտպանված են: Ուսումնասիրության արտոնագիր՝ [Creative Commons Attribution-NonCommercial-NoDerivs 3.0 IGO License \(CC BY-NC-ND 3.0 IGO\)](#).\* (CC BY-NC-ND 3.0 IGO):\*

Այլ մանրամասների համար տես՝ հեղինակային իրավունքը և օգտագործման պայմանները

Սույն հրատարակումը չի կարող օգտագործվել, պահպան և տարածվել կոմերցիոն նպատակներով, այլ կարող է օգտագործվել գուտ կրթական նպատակներով, ինչպես, օրինակ, դասագրքերում ներառելը:

Թույլտվություն՝ Կոմերցիոն կամ արտոնագրի հետ կապված այլ հարցերով դիմեք [publications@iom.int](mailto:publications@iom.int).

\* <https://creativecommons.org/licenses/by-nc-nd/3.0/igo/legalcode>

ՀԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒՄ  
ՄԵԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ  
ՕԳՆՈՒԹՅԱՄԲ

**ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՅՅԱԼ  
ՆԱՀԱԳՆԵՐՈՒՄ ԵՎ  
ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ  
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌԻ  
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ**

2019թ. դեկտեմբեր



# **Բովանդակություն**

Ալյուսակների ցանկ	v
Հապավումներ	vii
Ամփոփ նկարագիր	ix
Ներածություն	xii
Սփյուռքի ներգրավվածության մոդելի վերանայում	1
Գրականության ուսումնասիրություն	3
Սփյուռքի սահմանում	6
Հմուտ աշխատանքի սահմանում	9
Սփյուռքի վարգացման շաղկապը՝ մարդասիրական օգնությունից մի քայլ առաջ	12
Սփյուռքի քարտեզագրման համար մեծ տվյալների օգտագործման նախադեալ	13
Մեթոդաբանություն	14
Տվյալների շտեմարանների բնութագրեր	16
Կիրառական անվանաբանություն	18
Google Analytics	19
Ֆոկուսային խմբեր և հարցավրույցներ հիմնական շահագրգիռ կողմերի հետ	21
Մարտահրավերներ	24
Հայտնի շեղումներ	25
Գաղտնիություն	27
Ապագա օգտագործում	28
Արդյունքներ	29

Համաշխարհային ակնարկ	30
Ժողովրդագրություն	33
Լեզու	35
Հետաքրքրություններ	37
Անդադարձ սփյուռքի ներգրավվածության վրա	41
Սփյուռքի բնութագիր՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներ	42
Նյու Յորք	45
Բնստոն և Լու Անջելես (Ութերթառուն և Գլենդել)	46
Սփյուռքի բնութագիր՝ Ֆրանսիա	48
Փարիս	51
Մարսել և Լիոն	52
Անդադարձ սփյուռքի ներգրավվածության վրա	54
Հմուտ սփյուռք	55
Մասնագետներ	55
Ուղղություններ	56
Մասնագիտություններ	58
Գիտական համայնք	61
Ուղղություններ	62
Զբաղվածություն	64
Կրթություն	65
Անդադարձ սփյուռքի ներգրավվածության վրա	69
Արտաքնակներ, վերադարձողներ և սփյուռք	70
Եվրափակիչ դիտողություններ և առաջարկություններ	72
Մեջբերվող աշխատություններ	74

## **Աղյուսակների ցանկ**

Աղյուսակ 1՝ 2018 թվականի հունվարի 1-ից 2019 թվականի հունվարի 1-ը վերլուծված օգտատերերի ընդհանուր թիվը՝ ըստ լրատվական աղբյուրի	19
Աղյուսակ 2՝ Սփյուռքի բնակչության գնահատականներ՝ ըստ ՄԱԿ-ի Տնտեսական և սոցիալական հարցերի վարչության միգրանտների թվաքանակի, ՏՀՁԿ-ի արտերկրում ծնված բնակչության և «Google Analytics»-ի տվյալների	31
Աղյուսակ 3՝ Տարիքային բաշխության ամփոփ պատկեր, ԱՄՆ, Ֆրանսիա և Ընդհանուր Սփյուռք	33
Աղյուսակ 4՝ Գենդերային բաշխումն ըստ քաղաքի, Համաշխարհային սփյուռք	34
Աղյուսակ 5՝ Լուրեր ընթերցողների լեզվական նախասիրություններ՝ ըստ երկրի	36
Աղյուսակ 6՝ Հակվածության առանձին կատեգորիաներ, Ներշուկայական հատվածներ և այլ կատեգորիաներ	38
Աղյուսակ 7՝ Հայազգի բնակչություն ունեցող 10 ամենամեծ քաղաքները Միացյալ Նահանգներում	43
Աղյուսակ 8՝ ԱՄՆ-ի 10 նահանգներն ամենամեծ հայազգի բնակչությամբ	44
Աղյուսակ 9՝ Եյու Յորք քաղաքում հայկական թաղամասերի սոցիալ-տնտեսական բնութագրերը	45
Աղյուսակ 10՝ Հայազգի բնակչություն ունեցող 10 ամենամեծ քաղաքները Ֆրանսիայում	50
Աղյուսակ 11՝ Մասնագիտությունների բաշխում ամբողջ Երկրում, հմուտ մասնագետներ	56
Աղյուսակ 12՝ Նպատակակետ նահանգներ և գավառներ, հմուտ մասնագետներ	57
Աղյուսակ 13՝ Մասնագիտություններ ըստ հայազգի մասնագետների և ընդհանուր բնակչության, հմուտ մասնագետներ	58

Աղյուսակ 14՝ Հայկական մասնագիտություններ ԱՄՆ-ում և Ֆրանսիայում, հմուտ մասնագետներ	59
Աղյուսակ 15՝ մասնագիտություններ, ակադեմիական համայնք	64
Աղյուսակ 16՝ Միացյալ Նահանգների հիմնական քաղաքներ՝ ըստ միգրացիայի նպատակի, ակադեմիական համայնք	66
Աղյուսակ 17՝ Ֆրանսիայի հիմնական քաղաքներ՝ ըստ միգրացիայի նպատակի, ակադեմիական համայնք	68
Աղյուսակ 18՝ Ուսման կամ աշխատանքի երկրներ և հայագի վերադարձների տոկոս	70

## **Հապավումներ**

<b>ԱՀՀ</b>	Ամերիկյան համայնքի հետապոտոլթյուն
<b>ՀՍԱՀ</b>	Հայկական սփյուռքի առցանց հետապոտոլթյուն
<b>ՀԱՀ</b>	Հայկական սփյուռքի հետապոտոլթյուն
<b>INSEE</b>	Institut National de la Statistique et des Études Économiques
<b>ՏՀԶԿ</b>	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն
<b>ORCID</b>	Open Researcher and Contributor ID
<b>ՄԱԿ</b>	Միավորված ազգերի կազմակերպություն
<b>ՄԱԿ ՏԱԳԿ</b>	ՄԱԿ-ի տնտեսական և սոցիալական գործերի վարչություն (բնակչության բաժին)
<b>ՄՄԿ</b>	Միգրացիայի միջազգային կազմակերպություն



# Ամփոփ նկարագիր

**Նպատակ՝** «մեծ տվյալների» ուսումնասիրման մեխանիզմների օգնությամբ կազմել հայկական սփյուռքի առանձնահատկությունների պրոֆիլները երկու թիրախային երկրներում՝ Միացյալ Նահանգներում և Ֆրանսիայում։ Կրթության մակարդակի, վրայվածության և ուսման ոլորտի նույնացուցիչներ պարունակող ժողովրդագրական և հմտությունների պրոֆիլների ստեղծման նպատակով վերլուծվել են տվյալների շտեմարաններ։ Ավելի լավ հասկանալ հմտություններ ունեցող սփյուռքի համայնքները և պարզել, թե ինչպես կարելի է գիտելիքների փոխանցման նախաձեռնությունների շրջանակներում ներգրավել նրանց պարգացման գործընթացներում, ընդ որում քանակական վերլուծությունը լրացվել է հիմնական շահառուների, փորձագետների և սփյուռքի ներկայացուցիչների հետ հարցապրոցերով։

**Նախագծում և մեթոդաբանություն՝** խառը մեթոդների մոտեցումը համադրում է դաշտային աշխատանքը, գրականության ուսումնասիրությունը և ուսումնասիրված տվյալների շտեմարանների վերլուծությունը՝ կազմելով սփյուռքի համայնքների ամբողջական պատկեր։ Ընտրված տվյալների շտեմարանները վերլուծվում են տվյալների ուսումնասիրման եզակի մեթոդով՝ նպատակ ունենալով վերհանել սփյուռքում գործարար և ակադեմիական համայնքների ներկայացուցիչներին։ Այսուհետև այս մեթոդն անցնում է սփյուռքի մի ենթախմբի տվյալների ուսումնասիրմանը, որը բնութագրվում է որպես «բարձր հմտություններ ունեցող ենթախումբ»՝ այս եվրոպյան S&ZԿ-ի սահմանմաբ (Chaloff and Lemastre, 2009, 11)։ Սփյուռքին նվիրված նախորդ ուսումնասիրությունների որակական վերլուծությունը, գրականության Նյու Յորքում, Փարիզում և Մարսելում ֆոկուսային խմբերի հետ ունեցած հարցապրոցերը նպաստել են ըսդիանուր հետազոտության իրականացմանը։ Հայկական անունների տվյալների կանգվածների անվանաբանական ճանաչման քանակական վերլուծությունը թույլ է տալիս պատկերացում կազմել սփյուռքի հմտություններ ունեցող հատվածի մասին։ Ընդհանուր համայնքների վերլուծությունը համալրվում է հայկական լրատվամիջոցների համացանցային վերլուծական տվյալների լրացուցիչ հատկանիշներով, ինչպիսիք են՝ հետաքրքրությունները, հակումները և կարևոր լուսաբանված իրադարձությունները՝ բաշխված ըստ փոստային կոդի։

## Հիմնական եվրակացություններ՝

Սփյուռքի հմուտ ներկայացուցիչների արտագաղթի օրինաչափությունները վկայում են Ուսումնաստանի Դաշնությունում և Միացյալ Նահանգներում բարձրագույն կրթության նկատմամբ նախապատվության մասին, թեև Գերմանիան հանդես է գալիս որպես մասնագիտական փորձի համար առավել նախընտրելի երկիր։

Իրենց մասնագիտական ուղու սկզբնական և ավարտական փուլերում գտնվող հարցապ-րույցի մասնակիցներն առավել հետաքրքրված էին սփյուռքի գործերով, ընդ որում նրանք, ովքեր ունեին կայուն աշխատանք, չին ձգտում այլ հարստացնող գործողությունների՝ առանձ-նապես օգուտ չտեսնելով Ներգրավվածության մեջ:

Ուսումնասիրության արդյունքում այն միտումն է դիտվել, որ առցանց նորություններ ընթեր-ցող ֆրանսահայերն զգալիորեն ավելի երիտասարդ են, քան ամերիկահայ կամ աշխարհում հայկական սփյուռքի Ներկայացուցիչները, ընդ որում ընթերցողների 19 տոկոսը է 18-ից 24 տարեկան է, իսկ 34 տոկոսը՝ 25-ից 34 տարեկան: Համեմատության համար նշենք, որ Ամերիկայի Միացյալ Նահանգներում հայկական նորություններ ընթերցողների 6 տոկոսը 18-ից 24 տարեկան են, իսկ 16 տոկոսը՝ 25-ից 34 տարեկան, ինչը նշանակում է երկու երկրներում երիտասարդության ներգրավման ռազմավարությունների վրա:

**Հիմնական առաջարկություններ՝** այն տարածքներում, որտեղ ըստ ունեցած տվյալնե-րի կան սփյուռքի բազմաթիվ ներկայացուցիչներ, ՀՀ կառավարությունը պետք է վրադպի ուղղակի կապերի ստեղծմամբ համապատասխան հաստատությունների, քաղաքների և մասնագիտական միավորումների հետ: Դա պետք է արվի առկա ցանցերի միջոցով՝ ծառա-յելովհամակարգված, ներառական ռազմավարության ստեղծմանը և առաջին հերթին կենտրոնանալով ցածր մուտքային շեմ ունեցող ոլորտների և սփյուռքի ներկային նախաձեռ-նությունների վրա, ինչպես նաև հանդես գալով որպես ինկուբատոր և նպաստող գործոն: Այլ համայնքներում լավագույն փորձ ներդնելու տեսանկյունից՝ հարկավոր է ուսումնասիրել ավե-լի մեծ առցանց ներգրավվածության դրսորման ոլորտները (օրինակ՝ Ֆրանսիայում երիտա-սարդ ընթերցողների թվի կտրուկ աճը): Ուսման և աշխատանքի նպատակով մեկնող միգրանտների համար հիմնական նպատակակետ քաղաքները պետք է լինեն ժամանակա-վոր վերաբարձի նախաձեռնությունների և գիտելիքների փոխանցման հնարավորությունների ուշադրության կենտրոնում:

## Ներածություն

2016 թվականին ՆյուՅորք Թայմս օրաթերթում լույս տեսավ ամբողջ Մի էջ վրաղեցնող կոչ՝ ուղղված սփյուռքահայությանը: Ականավոր միլիարդատերերի, մշակութային գործիչների, գիտնականների և հասարակական կազմակերպությունների ղեկավարների կողմից ստորագրված այս բաց նամակում խոսվում էր Հայաստանի զարգացման հարցերում կայուն ներգրավման անհրաժեշտության մասին (Sanamyan, 2016թ.): «Աշխարհասփյուռ հայության ապագան հիմա է» խորագրով այս նամակը գործընկերությամբ և համակարգմամբ առանձնացող ներգրավման կոչ էր գործի դնելու սփյուռքի միասնական ռեսուրսները ներառական և խմբային գործողությունների շրջանակներում:

Նամակում առանձին անդրադարձ էր կատարվում կազմակերպությունների և նախաձեռնությունների համար խնդրահարուց մի քանի կարևորագույն հարցերի և հոյս էր հայտնվում, որ այն շրջադարձային կետ կդառնա Հայաստանում սփյուռքի ներգրավման առումով: Չնայած մեծ և համեմատաբար հարուստ ու բարձր հմտություններ ունեցող և հայրենիքի գործերում խորապես ներգրավված սփյուռքի գոյությանը՝ առ այսօր դրա ազդեցությունը եղել է անբավարար: Տեղում հնչող հիմնական քննադատությունն այն էր, որ սփյուռքը երբեմն անդառնալիորեն պառակտված է, գտնվում է արձագանքողի դերում է և չափավանց կենտրոնացած է անմիջական արդյունքների վրա՝ չունեսալով երկարաժամկետ ազդեցություն: Ոմանք բարերար սփյուռքի և պետություն միջև եղած հարաբերությունները բնութագրել են որպես հիմնականում «դրական զգացումներ առաջացնող» կամ հայրենասիրական նախաձեռնություններին ուղղված բարեգործություն: Ըստհանուր համաձայնությունը սփյուռքում հազվադեպ երևություն է, բայց շատերը համաձայն են, որ ռեսուրսները տևորինվում և օգտագործվում են անարդյունավետ կերպով:

Սփյուռքահայերը հիմնականում քնակվում են կրթության բարձր մակարդակ ունեցող, հարուստ և զարգացած երկրներում, ինչպիսիք են՝ Ամերիկայի Միացյալ Նահանգները, Կանադան, Ֆրանսիան և Ռուսաստանի Դաշնությունը, որտեղ կենսամակարդակն ավելի բարձր է, քան Հայաստանի Հանրապետությունում: Չնայած նրան, որ շատ դեպքերում հայկական համայնքները հիմնադրվել են դարեր առաջ, սփյուռքն ամուր կապեր ունի մեր օրերի Հայաստանի Հանրապետության հետ՝ հաճախ վերադառնալով հայրենիք մշակութային և ընտանեկան այցերի շրջանակներում, իրենց քնակության վայրերում կազմակերպելով հայկական խմբեր և ակումբներ, ինչպես նաև մասնակցելով դրամահավաքների և խթանելով անդրագային գործարար կապերը: Հաշվի առնելով սփյուռքի խիստ ներգրավված, կրթված և համեմատաբար հարուստ լինելու հանգամանքը՝ Հայաստանի զարգացման դաշտաղ ընթացքը շահագրգիռ և ներգրավված սփյուռք ունեցող այլ երկրների (օրինակ՝ Իսրայել, Հնդկաստան, Իռլանդիա և այլն) համեմատ, առաջնահերթ խնդիր է:

Սույն ուսումնասիրությունը քննության է առնում է հայկական սփյուռքի գիտելիքների ներուժը և դրա ավելի լավ ներկայացման, ընկալման և օգտագործման ուղիները: Դա իրականաց-

վում է նախ և առաջ արտերկրում առկա գիտելիքների համակազմի ընկալմամբ: Այս առումով ուսումնասիրությունը կոչված է Ներկայացնել սփյուռքում առկա հմտությունների, կրթության և մասնագիտական դիրքերի ամփոփ նկարագիրն ավելի լավ հասկանալու համար, թե ինչպես և որտեղ դրանք կարող են նպաստել Հայաստանում գիտելիքների տնտեսության զարգացմանը: Այսուհետև այս տվյալները կարող են օգտագործվել այն ոլորտներում, որտեղ գիտելիքների և հմտությունների փոխանցման միջոցով սփյուռքահայությունը կարող է խթանել տնտեսական աճը՝ որպես լավագույն գործելակերպ որդեգրելով գիտելիքներ փոխանցող սփյուռքի համաշխարհային փորձը:

# Սփյուռքի ներգրավվածության մոդելի վերանայում

Արտերկրում սփյուռքի հիմնադրումից ի վեր՝ իին ու նոր հայրենիքների միջև եղել է մարդկանց, ապրանքների ու գաղափարների շրջանառություն։ Ֆինանսական ներհոսքերը, ուղիղ դրամական փոխանցումները, մարդասիրական օգնությունը և սփյուռքի կողմից ֆինանսավորվող զարգացման նախաձեռնությունները տասնամյակներ շարունակ սատարել են Հայաստանի Հանրապետության տնտեսությունը՝ օգնելով հաղթահարել 20-րդ դարի ցնցումները։ Մինչ օրս գործող սփյուռքի խոշոր կազմակերպությունները ձևավորվել են 19-րդ դարի վերջից մինչև 20-րդ դարի սկիզբն ընկած ժամանակահատվածում, ընդ որում շատ կազմակերպությունների մեկնարկը տրվել է 1900-ականներից հետո։ Դրանց թվում կան կազմակերպություններ, որոնք ստեղծվել են 1980-ականների ավարտից 1990-ականների սկիզբն ընկած ժամանակահատվածում՝ աղետների և քաղաքական վերափոխումների հետևանքով։

1988 թվականի Սահմանակի ավերիչ երկրաշարժին հաջորդեց հասարակական և բարեգործական կազմակերպությունների ստեղծման մի ալիք, որն անհապաղ օգտագործման համար մորիլիկացրեց սփյուռքը և դրա ֆինանսական միջոցները։ Օրինակ՝ երկրաշարժից հետո Ֆրանսիայի հայկական բժշկական միությունը հայց պատմության մեջ ամենամեծ բնական աղետին անհապաղ արձագանքելու նպատակով ստեղծեց մի պատվիրակություն, որում ընդգրկված էր նաև Մարտելի քաղաքապետը (Fonds ARAM, 2019թ.): Անկախությունից ի վեր միայն Միացյալ Նահանգների սփյուռքից կատարվել են հարյուրավոր միլիոնների փոխանցումներ, որոնք հիմնականում ուղղվել են Ենթակառուցվածքային ծրագրերին, փոքր և միջին ձեռնարկությունների դրամաշնորհներին և վերականգնման աշխատանքներին (Gevorkyan and Grigorian, էջ 5)։ Այդ ժամանակահատվածից ի վեր սփյուռքը մորիլիկացնելու առիթների պակաս չի եղել, ընդ որում սփյուռքի ներգրավվածությունը բարձրանում կամ գագաթնակետի է հասնում երկրում առաջացող արտակարգ իրավիճակներում (Tölölyan, 1999թ.): Հայաստանի սահմաններին ընթացող չափարտված պատերազմը, տնտեսական ճգնաժամերը, Մերձավոր Արևելքի հայ համայնքների վրա անդրադառնող հակամարտությունները, ինչպես նաև բժշկական ու հումանիտար պայմանների շարունակական բացթողումները բազմաթիվ բարեգործական նախաձեռնությունների պատճառ են դարձել։

Սփյուռքի այս աջակցությունն անգնահատելի դեր է խաղացել անցումային ժամանակաշրջանում ապրանքների և ծառայությունների մատուցման բացը լրացնելու համար։ Տասնամյակներ շարունակ սփյուռքը, արձագանքելով ճգնաժամերին և արագորեն տրամադրելով օգնություն, գործել է որպես փաստացի անվտանգության ցանց։ Այնուամենայնիվ, սփյուռքի ներգրավվածության մարդասիրական և բարեգործական միտումը բերել է նրան, որ նոյնանման նպատակներ հետապնդող հարյուրավոր կազմակերպություններ մրցակցում են նույն ռեսուրսների համար՝ մտորելով նոյն խնդրի լուծման ուղիների շուրջ։

Սփյուռքի այլ կազմակերպությունների հետ գործընկերական հարաբերություններ չհաստատելու, ինչպես նաև երկարաժամկետ և կայուն արդյունքներ չհետապնդելու հետևանքով՝ գոր-

ծաղրվող ջանքերը կրկնօրինակվել են, իսկ հնարավորությունները, հմտությունները և միջոցներն օգտագործվել են ոչ այդքան արդյունավետ կերպով: Սփյուռքի ջանքերի ամենամեծ թերությունը ցանցերի անարդյունավետությունն է և համընկնող նախաձեռնությունների գերհագեցումը:<sup>1</sup> Այս դեպքերում, երբ կազմակերպություններում մշակվել են կարճաժամկետ նախագծերի իրականացման ենթակառուցվածքներ (օրինակ՝ իրականացնող գործընկերների վերապատրաստման, տեղում գործընկերության ձևավորման կամ իրավական կանոնակարգերի ստեղծման միջոցով), փոխադարձ համագործակցության բացակայությունը դանդաղեցրել է գիտելիքների և լավագույն փորձի տարածումը և թույլ չի տվել, որ տարբեր կազմակերպություններ սովորեն միմյանց սխալներից (Töölöyan, 1999թ.):

Այդուհանդերձ, վերջին հինգ տարիների ընթացքում զարգացման նպատակով սփյուռքի ռեսուրսների օգտագործման պատկերը զգալիորեն փոխվել է, ինչը պայմանավորված է երկու հիմնական միտումներով: Համաշխարհային մակարդակով սփյուռքի մոբիլիզացման ծրագրերն ու քաղաքականությունները բարեգործական նախաձեռնություններից վերածվել են համագործակցային գործընկերությունների, որոնց հիմքում ընկած է փոխադարձ տնտեսական շահը (Larner, 2007թ., էջ 335): Թեև ժամանակին սփյուռքի ներգրավվածությունը հանդես էր գալիս որպես միակողմանի բարեգործություն, որն ուղղված էր բացառապես ցածր եկամուտ ունեցող երկրներին, սակայն այժմ այն իդեալականացվում է որպես համագործակցային, ներառական գործընկերություն, որը կոչված է խթանել տնտեսական աճը նաև միջին եկամուտ ունեցող երկրներում: Նոյն փոխակերպությունը տեղի է ունեցել հայկական սփյուռքի զարգացման կազմակերպություններում: Մարդասիրական նախաձեռնություններն իրենց գագաթնակետին հասան 1990-ական թվականներին, և այսօրվա նախաձեռնությունների շրջանակներում նախապատվությունը տրվում է երկարաժամկետ անձնական և մասնագիտական ներգրավվածությանը, այլ ոչ թե բարեգործությանը:

Երկրորդ՝ պետությունները և զարգացման հարցերով փորձագետները բոլորովին վերջերս են սկսել իրաժարվել «ուղեղների արտահոսք» հասկացությունից, այն է այն գաղափարից, որ հայրենիքում պատրաստված մարդկային կապիտալը կորչում է արտագաղթից հետո: Այլևս չփորձելով գրավիչ դարձնել սփյուռքի ներկայացուցիչների վերադարձը հայրենիք՝ կառավարություններն ուղիներ են փնտրում, թե ինչպես օգտագործել արտագաղթածների ցանցերն ու համայնքները ծագման երկրներ իրենց հմտություններն ու գիտելիքներ բերելու համար՝ առանց պարտադիր հայրենադարձության: Նշանավոր օրինակներից են՝ Շոտլանդիայում, Իռլանդիայում, Նոր Զելանդիայում և Հնդկաստանում իրականացվող նախաձեռնությունները: Այս հայցակարգն արդեն մշակվել և ներդրվել է Հայաստանում, թեպետև ավելի քիչ չափով՝ ինը և կայացած սփյուռքի կազմակերպություններում: Թեև մշակվել են մասնագիտացված ցանցեր, սակայն լավագույն փորձի փոխանակման համար դրանք դեռ պետք է արդյունավետ կերպով գործարկվեն Հայաստանում, կամ էլ պետք է փոխադարձ կապեր ձևավորվեն սփյուռքի ներում:

<sup>1</sup> 2015 թվականին լուծարվեց միասնական առաքելության շուրջ (որամահավաքներից զատ) անկախ կազմակերպությունները միավորելու վերջին նախաձեռնությունը՝ Հայկական միացյալ հիմնադրամը: Մեր ունեցած տեղեկություններով՝ ֆինանսական և մարդկային ռեսուրսներն ի մի բերելու որևէ այլ լուրջ ջանք առ այսօր չի ձեռնարկվել:

## Գրականության ուսումնասիրություն

Սփյուռքի գիտելիքների և կարողությունների օգտագործման նպատակով ապացույցների վրա հիմնված զարգացման ռազմավարություն մշակելու համար հարկավոր է նախ և առաջ հաշվառել հայ համայնքների մասնագիտական ոլորտներն ու հմտությունների համակազմը (Aguinas and Newland, 2012թ., 28): Որպես «սփյուռք» եզրույթի և նույնանուն ամսագրի հիմք՝ փորձ է արվում հայտնաբերել բացթողումները հայկական դեպքերին Նվիրված ուսումնասիրություններում: Սփյուռքի հմտությունները Հայաստանում գործի դնելու համար առաջարկվել են բազմաթիվ գաղափարներ (օրինակ՝ սփյուռքի պարտասովմեր կամ զարգացման բանկեր), թեպետև հստակ տվյալների վրա է հիմնված ընդամենը մի քանի ուսումնասիրություն, ինչը պայմանավորված է սփյուռքի մեծ ծավալներով և բազմազանությամբ:

Այսուամենայնիվ, մի շարք ակադեմիական ոլորտներում կատարվել են հավակնոտ հետազոտություններ, որոնց մեծ մասը շեշտադրում է մարդաբանական կամ ազգագրական հայեցակետերը: Դժվար է գտնել քանակական տվյալներ, իսկ առկա աշխատություններում ուշադրությունը հաճախ սևովում է ինքնության և հիշողության պահպանման վրա: Նմանատիպ օրինակներից է Հայաստանի Հանրապետությունում և Ռուսաստանի Դաշնության Կրասնոդարի երկրամասում հայերի համեմատական ուսումնասիրությունը, որը քննում է ռուսաստանաբնակ և հայաստանաբնակ հայերի ազգագրական տրամադրությունները (Beberyan and Tuchina, 2018թ.): Միացյալ Նահանգների մի շարք վերլուծությունների շրջանակներում մարդահամարի տվյալների միջոցով ուսումնասիրվել են սփյուռքի որոշ ենթախմբեր, օրինակ՝ Լու Անշելեսում բնակվող իրանահայեր և լիբանանահայեր (տեսան Bozorgmehr, Sabagh and Der-Martirosian, 1990թ.): Մեծ արձագանք ստացած հարցումներից ուշագրավ է Բակալյանի 1986 թվականի փոստային հարցումը՝ 584 մասնակիցներով, սակայն դրա հարցաթերթիկը կրկին շեշտը դնում է ինքնության և միաձուլման վրա:

Հարկ է հիշատակել նաև Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնի (ՀՊԿԿ) տարեկան հետազոտությունները, որոնց շրջանակներում առաջնային տվյալներ են հավաքվում սեպունային միգրանտների, վերադարձողների և հայ ընտանիքների կարծիքների և սոցիալ-տնտեսական կարգավիճակի վերաբերյալ: Այս տվյալներում մշտական բնակչությունը հետ մեկտեղ ընդգրկվել են նաև կարճաժամկետ միգրանտները: Այդուհանդերձ, դրանցում ընդգրկված չէ արտերկրում անցկացրած ժամանակը, և դրանք հիմնականում արտացոլում են աշխատանքային միգրացիան դեպի Ռուսաստանի Դաշնություն: Կրոնական հաստատությունների, պետական մարմինների կամ համայնքներում կամավորների (օրինակ՝ Հայ-ամերիկյան տարեգորիդը) կողմից կազմված տեղական ցանկերը հազվադեպ են թարմացվում (տարեգորդի վերջին տարբերակը թողարկվել է 1995 թվականին), իսկ դրանց կազմման մեթոդաբանությունը հստակ չէ:<sup>2</sup> Սփյուռքի կազմակերպությունների կամավոր գրանցումները (օրինակ՝ փոստային և անդամների ցուցակները) կարող են ապահովել աշխարհագրական և Ելակետային ժողովրդագրական տվյալների մի շերտ, ինչպես նաև ցույց տալ տվյալ տարածքում ներգ-

րաված սփյուռքի ներկայացուցիչների մասնաբաժինը, սակայն դրանք մեծ մասամբ հիմնված են հարցումներից ստացված տվյալների վրա:

Վերջերս իրականացված երկու ուսումնասիրությունների, այն է՝ Հայկական սփյուռքի հետապոտության (ՀՍՀ) և Հայկական սփյուռքի առցանց հետապոտության (ՀՍԱՀ) շնորհիվ զգալիորեն հարստացել է սփյուռքի վերաբերյալ հստակ գիտելիքների շտեմարանը: Առաջինը փորձնական նախաձեռնություն է, որն իրականացվել է 2018 թվականին սփյուռքի խոշոր օջախներ ունեցող չորս քաղաքներում՝ Կահիրեւում, Մարտելում, Փասադենայում և Բոստոնում (Հայկական սփյուռքի հետապոտություն): ՀՍԱՀ-ն իրականացվել է 2015-ից 2018 թվականներին (Gevorkyan, 2018թ.):

Այս երկու նախագծերը կոչված են արձանագրել աշխարհում տարբեր դրդապատճառներ ունեցող սփյուռքահայության կարծիքներն ու ժողովրդագրական տվյալները: ՀՍՀ-ն եկակի է տարբեր վայրերում իր ընդլայնված ներկայությամբ և քաղաքների տարեկան ընտրությամբ (2019 թվականի վարկածի համար ընտրվել է Արգենտինայի, Կանադայի, Լիբանանի և Ռումինիայի 14 քաղաք), իսկ ՀՍԱՀ-ն իր յուրահատուկ հարցաշարի միջոցով պարզությունը հարցվածների ներգրավման ժամանակաշրջանում առաջարկությունը Հայաստանի վարգացմանը նպաստելու գործում: Այս դաշտային ծրագրերի որակի և ընդգրկման շնորհիվ՝ նշված երկու հետապոտություններից ստացված տվյալները դիտվում են սույն ուսումնասիրությունում ընդգրկված մեր որակական հարցարկությունների և ֆոկուսային խմբերի համեմատությամբ:<sup>3</sup> Բացի ՀՍԱՀ-ի հայցակետերից՝ մեր ունեցած տեղեկություններով դեռևս որևէ մի փորձ չի արվել իրականացնել սփյուռքի հմտությունների, կրթական նկարագրերի և մասնագիտությունների վրա կենտրոնացած որևէ հատուկ ուսումնասիրություն: Այս ուսումնասիրությունը նպատակ ունի լրացնել այս քննարկում՝ ներկայացնելով մեծ տվյալների օգտագործմամբ պատրաստված սփյուռքի հմուտ ներկայացուցիչների ժամանակակից քարտեզը:

Ծրագիրը գործում է հարաբերական հիմքերով՝ ազգային երկու պրոֆիլների ստեղծման համար օգտագործելով մեծ տվյալների շտեմարաններ և գրանցամատյաններ: Սփյուռքի հետաքրքրություններում և ժողովրդական տվյալներում օրինաչափություններ հայտնաբերելու համար ուսումնասիրությունը նախ դիտարկում է լրատվական կազմակերպությունների հավաքած առցանց վերլուծական տվյալները՝ ապահովելով համապարփակ ակնարկ: Այսուհետև երկու տվյալների շտեմարանների անվանաբանական վերլուծության միջոցով քարտեզագրություն են ակադեմիական («ORCID») և մասնագիտական («ZoomInfo») տվյալների շտեմարաններում ընդգրկված սփյուռքի օջախներն ու հմտությունների պրոֆիլները Միացյալ Նահանգներում: Անվանաբանական վերլուծության արդյունքում հայտնաբերված հայկական ծագում ունեցող անուններն այսուհետև համեմատվում են Ամերիկյան համայնքի հետապոտության (ԱՀՀ) և «INSEE»-ի բնակչության պաշտոնական թվերի հետ: Բացի համաշխարհային ավելի լայն ակնարկի՝ ներկայացնում ենք Միացյալ Նահանգների և Ֆրանսիայի երկու խորացված պրոֆիլներ՝ նպատակ ունենալով քարտեզագրել սփյուռքահայերի աշխարհագրությունն ու առաջատար ոլորտները:

<sup>2</sup> Ամերիկահայերի տարեգրքում (խմբ Համո Վասիլյան) ներկայացվում է Միացյալ Նահանգներում և Կանադայում բնակվող հայերի և նրանց ձեռնարկությունների, Եկեղեցների, միուլյունների, հասարակական կազմակերպությունների, դպրոցների և թանգարանների ցանկը՝ ըստ նահանգների: Ցանքը, չի հաջողվել կապ հաստատել այս ուսումնասիրության հեղինակի հետ, իսկ այդքան հայկական ծագում ունեցող ձեռնարկությունների քաղաքացիների որոշման մեթոդաբանությունը անհայտ է:

<sup>3</sup> Գյուլբենկյան հիմնադրամի նախագիծ Հայկական սփյուռքի հետապոտությունը (ՀՍՀ) մտադիր է ամեն տարի ընտրել նոր քաղաքներ՝ ապահովելով սփյուռքին նվիրված համաշխարհային հետապոտության հետագա ընթացքը [www.armeniandiasporasurvey.com](http://www.armeniandiasporasurvey.com): Հայկական սփյուռքի առցանց հետապոտությունը (ՀՍԱՀ) նախաձեռնվել է 2015 թվականին տնտեսագետ Ալեքսանդր Գևորգյանի կողմից [www.agevorkyan.com/diaspor-survey](http://www.agevorkyan.com/diaspor-survey):

Այս ոչ ավանդական մեթոդաբանությունը տարբերվում է սփյուռքի ուսումնասիրության հարցում նախկինում կիրառված մոտեցումներից և փորձում է թվային հետքերի օգնությամբ լրացնել արդեն գոյություն ունեցող ուսումնասիրություններն ու տվյալները: Ավելին, հուսով ենք, որ այս մեթոդաբանությունը կհարստացնի տվյալ ոլորտը՝ քաղաքականություններ մշակողներին իրավեկման համար ներկայացնելով կրթության և զբաղվածության վերաբերյալ անանուն և ապախոշորացված տվյալների հավաքման մեթոդ: Այս մոտեցման շրջանակներում համադրվում են քարտեզագրման ավանդական հնարքները, ինչպիսիք են՝ մասնակիցների դիտարկումը, հարցազրույցները և ֆոկուս խմբերը և մեծ տվյալների վերլուծությամբ մոտավոր պատկերացում է կազմվում սփյուռքի հմուտ անդամների բնութագրերի մասին:

## Սփյուռքի սահմանում

Հայկական սփյուռքը սահմանելու համար հարկավոր է միաձուել այս եզրույթի դասական և ժամանակակից մեկնաբանությունները: Հրեա և հոյն սփյուռքերի օրինակով՝ մեծատառով գրվող Սփյուռքի ավանդական սահմանումը բնութագրում է որպես «հետապնդումներից, արհավիրքներից կամ այլ խնդիրների հետևանքով ցրված մի խումբ»: Այսօրվա սփյուռքն արտացոլում է այս պատմական ելակետը, ինչպես նաև ընդգրկում է Հայաստանի Հանրապետությունից վերջերս արտագաղթածներին: Տարերակվում է «հին» և «նոր» սփյուռքը՝ երբեմն ըստ լեզվական նախապատվությունների (արևելահայերեն կամ արևմտահայերեն), աշխարհագրական ծագման և մղիչ գործոնի (Gevorkyan, 2003): Սույն ուսումնասիրության շրջանակներում Հայաստանի Հանրապետության հետ իրական կամ երևակայական կապեր ունեցող անդրազգային բնակչությունները՝ ինչպես հին, այնպես էլ նոր սփյուռքում, դիտարկվում են դասակարգման նույն հովանու ներքո: Շոշափելի կապերը կարող են լինել տնտեսական բնույթի, հիմնված լինել քաղաքացիության վրա, արմատավորված լինել գույքային կամ ընտանեկան կապերի մեջ, կամ էլ լինել ոչ նյութական բնույթի, օրինակ՝ մշակութային կամ ազգային կապեր:

Հին և նոր հայկական սփյուռքի խմբերի ծագումը պարզ է, սակայն այդքան էլ հստակ չէ, թե ով է դրանց պատկանում:<sup>4</sup> Ընդհանրապես, «հին սփյուռք» գաղափարը վերաբերում է նրանց, ովքեր գաղթել են որպես փախստական, կամ ցեղասպանության հետևանքով 20-րդ դարի սկզբին կամ նույնիսկ ավելի շուտ: Հայաստանից հեռու լինելու և նպատակակետ երկրներում սերունդներ շարունակ բարձր ինտերմասն շնորհիվ հին սփյուռքն իր արժեքների առումով հաճախ ավելի շատ սոցիալ-տնտեսական նմանություններ է ունենում իրենց բնակության երկրի քաղաքացիների, քան այսօրվա Հայաստանում ապրող հայերի հետ:

Որպես կանոն նոր սփյուռք հասկացությունը վերաբերում է նրանց, ովքեր հեռացել են Հայաստանից Խորհրդային Միության ֆլուկումից հետո, ինչպես նաև ներկայիս աշխատանքային միգրանտներին և ուսանողներին: Նոր սփյուռքը, ամենայն հավանականությամբ, ունի ընտանեկան կապեր Հայաստանի հետ և հավանաբար դրամական փոխանցումներ է ուղարկում Հայաստան այստեղ վերադառնալու մտադրությամբ: Քանի որ հին և նոր սփյուռքի առաջնահերթությունները տարբերվում են, ուստի դրանց բաժանումը հաճախ բանավեճ է առաջացնում համայնքում պատկանելության և միաձուման հարցերի շուրջ: Ինչպես նկատում է Վերտովեցը՝ «միգրանտների նախորդ սերունդը կարող է շատ սահմանափակ կապեր ունե-

<sup>4</sup> Հարցազրույցները ցույց տվեցին, որ «սփյուռք» եզրույթի ընկալման շուրջ կան մեծ տարբերություններ՝ հնարավոր պատկանելության իմաստով: Օրինակ, Ռուսաստանի Դաշնությունում ծնված սփյուռքը «հին» սփյուռքը համարել է Հայաստանից շատ հեռվացած՝ գրեթե «իրականությունից կտրված» լինելու աստիճան: Նոր սփյուռքի շրջանում ընկալումն այս է, որ հին սփյուռքի ներկայացուցիչներն այնքան երկար են ապրել Հայաստանից դուրս, որ լիովին միաձուվեն են իրենց հյուրընկալող երկրներում:

Նաև հայրենիքի հետ կամ սահմանափակ գիտելիքներ ունենալ երկրում վերջերս տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ, թեպեսն նրանք դեռ հպարտանում են իրենց ազգային ծագմամբ: Նրանք կարող են առհասարակ քիչ ընդհանրություններ ունենալ խիստ քաղաքականացված այն փախստականների կամ աքսորյալների նոր ալիքի հետ, ովքեր ամբողջովին կլանված են հայրենիքում տեղի ունեցող մշակութային և քաղաքական փոփոխություններով» (Vertovec, 2005թ.): Համայնքի բազմազանությունը անմիջապես երևում է, եթե ուսումնասիրենք նոյն փառատոնին կամ տոնակատարությանը ներկա գտնվող Լոս Անջելեսի հայկական համայնքի մի փոքրիկ խումբ, որտեղ ընդգրկված կլինեն սիրիակայ փախստականներ, երկրորդ կամ երրորդ սերնդի լիբանանահայ ընտանիքներ, ֆրանսահայեր, չորրորդ կամ ավելի հին սերնդի ամերիկահայեր և Հայաստանում ծնվածներ:

Սփյուռքի ընդհանուր թիվս աշխարհում տատանվում է 6-ից 8 միլիոն մարդ միջակայքում: Ըստ հաշվարկների ամենամեծը Ռուսաստանի Դաշնության 1,9 միլիոնանց համայնքն է, որին հաջորդում են՝ Միացյալ Նահանգները (850 000 մարդ), Վրաստանը (400 000 մարդ), Ֆրանսիան (250 000), Ուկրաինան (150 000 մարդ) և 100 000-ից ցածր բնակչություն ունեցող համայնքները Լիբանանում, Իրանի Խոլամական Հանրապետությունում, Սիրիայում Արաբական Հանրապետությունում, Արգենտինայում և Թուրքիայում (Tölölyan, 2006, էջ 8): Տեր-Մինասյանի գնահատականներով՝ Միացյալ Նահանգներում հայկական սփյուռքի թիվը կազմում է 900 000 մարդ, ԵՄ-ում՝ 500 000 մարդ, որոնցից 350 000-ն ապրում են Ֆրանսիայում (1997թ., էջ 115): Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի և համագործակցության նախարարության գնահատականներով՝ հայկական սփյուռքը Ռուսաստանի Դաշնությունում կազմում է 2,3 միլիոն մարդ, Միացյալ Նահանգներում՝ 1,5 միլիոն մարդ, Ֆրանսիայում՝ 400 000 մարդ, իսկ Լիբանանում՝ 230 000 մարդ: Այս թվերը մոտ են հայկական սփյուռքի հանրագիտարանում նշված թվերին (2003թ.), որտեղ Ռուսաստանի Դաշնությունում հայկական սփյուռքի թվաքանակը գնահատվում է 2,2 միլիոն մարդ, Միացյալ Նահանգներում՝ 1,2 միլիոն մարդ, Ֆրանսիայում՝ 450 000 մարդ, Վրաստանում՝ 350 000 մարդ, Իրանի Խոլամական Հանրապետությունում՝ 80 000 մարդ, Արգենտինայում՝ 70 000 մարդ, իսկ Լիբանանում՝ 70 000-ից 80 000 մարդ և այլն: Հարկ է նշել, որ ֆրանսահայ համայնքի պարագայում Ֆրանսիայի կառավարությունը նշում է երկրում բնակվող ավելի քան 500,000 հայերի մասին<sup>5</sup>, այն ժամանակ եթե ֆրանսահայ կազմակերպությունները նշում են 600,000 հազար բնակչություն ունեցող համայնքի մասին<sup>6</sup>:

Ինչպես նշում է Սփյուռքի խմբագիր Խաչիկ Թոլոյյանը՝ սփյուռքի յուրաքանչյուր համայնքում կան այսպիսիք, ովքեր պասիվորեն իրենց նույնականացնում են որպես հայ, նրանք, ովքեր մասնակցում են գրեթե բացառապես միայն ազգային տոններին և մի փոքր խումբ, ովքեր ներգրավված են հայկական գործերում որպես ակտիվիստներ (2006թ., էջ 9): Շատ առումներով սփյուռքահայերի բարգավաճման կարողությունը կախված է «հյուրընկալող» ազգից և եթևիկ բազմազանությունն ընդունելու նրանց կարողությունից: Միացյալ Նահանգներում և Կանադայում միաձուլման նպաստավոր պայմաններն ապահովում են հայկական դպրոցների ու միավորումների ծաղկումը: Սփյուռքի օջախներից են ինչպես Լոս Անջելեսի, Ռոտերդամունի և Մարսելի կենսունակ, հաստատված համայնքները, այնպես էլ Արևի Աբեբայի և Կոլկաթայի նվազող սփյուռքահայ բնակչությունը: Միգրացիայի բազմաթիվ պատմական ալիքները խթանում են ընդհանուր նույնականացման բազմազանությունը, ավանդությունների, կրոնի, սոցիալ-

<sup>5</sup> Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Հոլլանդի հայտարարությունը Հայոց ցեղասպանության վերաբերյալ Փարիզում 2014թ. ապրիլի 24-ին [www.elysee.fr/francois-hollande/2014/04/24/declaration-de-m-francois-hollande-president-de-la-republique-sur-le-genocide-armenien-a-paris-le-24-avril-2014](http://www.elysee.fr/francois-hollande/2014/04/24/declaration-de-m-francois-hollande-president-de-la-republique-sur-le-genocide-armenien-a-paris-le-24-avril-2014):

<sup>6</sup> Les Arméniens en France //Le Point// [www.lepoint.fr/societe/les-armeniens-en-france-22-12-2011-1411512\\_23.php#](http://www.lepoint.fr/societe/les-armeniens-en-france-22-12-2011-1411512_23.php#):

տնտեսական կարգավիճակի և քաղաքական հայացքների պահպանումը: Թեև որոշ ընդհան-րություններ պահպանվում են, սակայն հարուստ պատմությունը դժվարացնում է հայկական սփյուռքի քանակական ներկայացումն ու նկարագիրը: Մասնագետներն առանձնացնում են արտագաղթի մի քանի մեծ ալիք՝ սկսած Պարսկաստանից 1604 թվականի արտաքսումներից: Եթե նշենք մի քանի պատճառ, ապա 1910-ական թվականների ցեղասպանությունից հետո սփյուռքը ձևավորվել է անկախությանը հաջորդող ժամանակահատվածում արտագաղթածներից, 1940-ականների և 1980-ականների արտաքսակ դարձած հայրենադարձներից և վերջապես Լիբանանում, Եգիպտոսում, Իրաքում և Սիրիայում, հակամարտության հետևանքով տուժած հայերից (Tölölyan and Papazian, 2014թ.):

## Հմուտ աշխատանքի սահմանում

Պետություններն իրենց տևականությունն ու հասարակությունը հարստացնելու համար միշտ շահագրգռված են եղել հավաքագրել և պահելտաղանդավոր միգրանտներին: Հայրենադարձ գիտնականներն առաջ են մղել ազգային առաջխաղացումները՝ ստեղծելով տիեզերական ծրագրեր, գրանցելով տեխնոլոգիական առաջխաղացումներ և համապատասխանեցնելով երկրի արդյունաբերությունը միջազգային չափանիշներին: Օրինակ՝ Չինաստանի Գիտությունների ակադեմիայի 81 տոկոսը և ինժեներական ակադեմիայի կեսից ավելին որոշ ժամանակ ուսանել են արտերկրում (Kapur, 2010թ., էջ 126): Ապացուցվել է, որ արտասահմանյան փորձն ու կրթությունը բավարարիվ առումներով դրական ազդեցություն են ունեցել ինչպես ուղարկող, այնպես էլ ընդունող համայնքների վրա և հավանաբար նպաստավոր ցիկլի առաջին քայլն են (տե՛ս Kuznetsov, 2008թ., Kuznetsov and Sabel, 2006թ.):

Հմուտ մասնագետների միգրացիան ՏՀԶԿ-ի կողմից սահմանվում է կրթության, վրայ-մունքի և վարձատրության սանդղակի համադրմամբ: Ընդհանրապես, բարձր հմտություններ ունեցող միգրանտներ համարվում են նրանք, ովքեր ունեն միջնակարգից բարձր կրթություն, այդ թվում՝ մասնագիտական վկայականներ, բակալավրի կամ ավելի բարձր գիտական կոչումներ (Chaloff and Lemastre, 2009թ., էջ 11): Ներգաղթի բարձր մակարդակ ունեցող երկր-ներում գործում են հմուտ միգրանտների ընդունման տարբեր չափանիշներ, այն է՝ Կանադան և Ավստրալիան չափում են կրթության մակարդակը, Միացյալ Թագավորությունը հմուտ աշխատուժի համար սահմանում է աշխատավարձի նվազագույն շեմ, իսկ Ֆրանսիան և Նոր Զելանդիան առաջնորդվում են պահանջարկ ունեցող մասնագիտությունների ցանկով (էջ 11): Կուվայնիա բնութագրում է հմուտ սփյուռքը տաղանդի և ստեղծագործականության միջոցով որպես «բարձր ազդեցություն ունեցող անձանց»՝ սահմանելով նրանց որպես «տևականության շարժիչներ և ձևավորողներ» (2008թ., էջ 267):<sup>7</sup> Նրանք, ում քաղաքային տևականությունը համար Ֆլորիդան բնութագրում է որպես «ստեղծագործ դաս», ունեն ավելի բարձր կրթություն և վար-ձատրություն, ընդ որում քաղաքներն ու երկրներն ագրեսիվ կերպով փորձում են ներգրավել նրանց, որպեսզի նորարար դարձնեն իրենց տևականությունները գիտելիքներով պինված աշխատողների հաշվին (Florida, 2006թ.):

Ամերիկայի Միացյալ Նահանգներում բարձր հմտություններ ունեցող անհատների միգրացիայի վերլուծության հիման վրա կարելի է ենթադրել, որ գիտելիքներով պինված աշխատողները կենտրոնացած են զարգացած մշակութային պայմաններ և բազմազան, հանդուժող հասարակություններ ունեցող տարածքներում (Florida, 2014թ. and OECD, 2008թ.): Գիտելիքներով պինված աշխատողներ գրավող և պահպանող Միացյալ Նահանգների քաղաքներն են՝ Սիեթլը, Սան Ֆրանցիսկոն, Վաշինգտոնը, Դեկվերը և Սան Խոսեն (2014թ.): Ոմանք պնդում

<sup>7</sup> Քանի որ բարձր ազդեցություն ունեցող անձանց պարագայում քանակական միջոցները բացակայում են, ուստի որպես ներկայացուցչական գործու օգտագործվում է բարձրագույն կրթությունը:

Են, որ բարձր որակավորում ունեցող աշխատողների միգրացիայի վրա ապդող գործոնները կախված են մասնագիտությունից, օրինակ՝ գիտևականները կարող են կարևորել աշխատանքը որևէ հեղինակավոր գործընկերոց հետ, մինչդեռ ինժեներները կարող են ավելի արժանորդ մրցունակ աշխատավարձերն ու կենսապայմանները (Mahroum, 2001թ.): Ըստ ունեցած տեղեկությունների՝ որոշակի ազդեցություն կարող են ունենալ նաև նպատակակետ երկրների շրջակա միջավայրը, աշխատատեղի թափանցիկությունը, շարժունակության բարենպաստ քաղաքականությունները և տնտեսական հեռանկարները (OECD, 2008թ., էջ 26):

Բարձր հմտություններ ունեցող միգրանտներին, ստեղծագործ դասը կամ բարձր ապդեցություն ունեցող անհատներին սահմանելիս մենք մտադրություն չունենք կարևորել աշխատանքի որևէ առանձին տեսակ: Բարձր հմտություններ ունեցող աշխատումը, որպես կանոն, ունի մի քանի տարբերակիչ հատկություններ, այդ թվում՝ բարձր աշխատավարձ, աշխատանքային փորձի խիստ պահանջներ, առաջադեմ հմտություններ և բարձրագույն կրթություն: Ցածր հմտություններ ունեցող աշխատողները, որպես կանոն, ավելի քիչ են վաստակում, պետք է ունենան ավագ դպրոցի կամ ավելի ցածր կարգի դիպլոմ և վերապատրաստվում են աշխատանքի ընթացքում: Ցածր հմտություններ պահանջող մասնագիտություններին հաճախ բնորոշ է ֆիզիկական աշխատանքը, ինչպես նաև առողջության կամ անվտանգության ավելի մեծ ռիսկը, քան ավելի բարձր հմտություններ պահանջող աշխատատեղերի պարագայում: Հմուտ միգրանտների հնարավոր ներդրումները ինչպես ծագման, այնպես էլ նպատակակետ երկրներում առհասարակ նման են բարձր հմտություններ ունեցող և կրթված ընդհանուր քնակչության խմբերի ներդրումներին այն առումով, որ միգրանտներն ի վհճակի են փոխանցել արժեքավոր ոչ լյուտականակատիվներ կամ երկրորդական գիտելիքներ, օրինակ՝ արտերկրում ստացած կրթությունն ու փորձը: Նրանք կարող են հանդես գալ որպես գիտելիքների վրա հիմնված տնտեսության, նորարարությունների, ձեռներցության և ստեղծագործության խթաններ՝ հարմարեցնելով լավագույն փորձը և գիտական առաջնադրումը տեղական համատեքստին: Տվյալների և մասնագիտական ցանցերի հասանելիությունը, որն ապահովում են բարձր հմտություններ ունեցող աշխատողները, կարող է ծագման երկրները կապել գիտելիքների և առևտորի համաշխարհային ցանցերի հետ:

Հայկական սփյուռքին նվիրված գրականությունն ընդգրկում է հարցերի լայն շրջանակ՝ ներառյալ ինքնության կառուցում, ինտեգրում, պատմական հիշողություն, ազգագրություն և ցեղասպանագիտություն: Վերջերս կազմված տվյալների շտեմարանը պարունակում է 368 վերնագիր արևելահայերեն և արևմտահայերեն, անգլերեն, ֆրանսերեն, թուրքերեն և ռուսերեն լեզուներով, ինչը վկայում է սփյուռքի վերաբերյալ ուսումնասիրությունների բազմազնության մասին (Aslanov, 2018թ.): Դրանում նշվում են բազմազան մոտեցումներ նմանատիպ թեմաների նկատմամբ տարբեր լեզուներում և երկրներում: Ամերիկյան աշխատությունները կարծես ավելի վերլուծական են իրենց բնույթով և հիմնված են հստակ հասարակագիտական մեթոդաբանության վրա, մինչդեռ ֆրանսիական աշխատությունները նկարագրական են, անձնական և պատմողական: Պարզվեց, որ ֆրանսիական հարցումները նույնպես առավել մեծ ուշադրություն են դարձնում ինքնության և լեզվի վրա (2018թ.):

Հայկական սփյուռքի վերաբերյալ տվյալների պահանջարկը մեծ է՝ հաշվի առնելով ազգային ռազմավարություններում դրա առաջնահերթությունն ու արժեքը: Համաշխարհային լավագույն փորձը և վերջին տարիների սփյուռքին նվիրված փորձնական ծրագրերը բազմաթիվ են, սակայն դրանց մեծ մասը դիտարկում է իրավիճակը վերջերս տեղի ունեցած արտագաղթի դիրքերից՝ քննարկելով հմուտ մասնագետների արտագաղթը զարգացող երկրներից: Թեև այս ամենը կիրառելի է Հայաստանի համատեքստում, սակայն սփյուռքի ներգրավվածությունը և ցրման երկար կորագիծը դժվարացնում են բնակչության այնպիսի խմբերի վրա կենտրոնացած զարգացման մոդելների մշակումը, որոնք ավելի լավ կարելի են բնութագրել որպես արտաքինակ, այն է՝ ծագման երկրում ծնված, այլ ոչ թե բուն իմաստով վերջիններիս ժառանգները հանդիսացող բնակչություն:

Սույն ուսումնասիրությունը շատ չի խորանում սփյուռքի պատմության մեջ, քանի որ այս թեման լավ փաստագրված է և քննվել է տարբեր տեսանկյուններից: Այս ցանկն ամենակին էլ սպառհչ չէ, և գիտական համայնքի ուսումնասիրություններից բացի՝ ինքնության, համայնքի և պատմության ուսումնասիրմանը նվիրված են բազմաթիվ առցանց հոդվածներ, գեղարվեստական համատեղ նյութեր, գրքեր և ամսագրեր: Առավել մանրամասն ուսումնասիրությունների շրջանակներում քննության են առնվում սոցիալ-տնտեսական հատկանիշները տարբեր վայրերում: Դրանցից շատերը կապված են որոշակի ժամանակահատվածի հետ, օրինակ՝ Իրանի Խոլամական Հանրապետության Սպահանի հայ համայնքը 1587 թվականից մինչև 1722 թվականը (Gregorian, 1974թ.) կամ Ինտեգրումը 1920 թվականից մինչև 1947 թվականը Ալֆորվիլում, որը Փարիզի արվարձաններից մեկն է (Ananian, 1999թ.): Ամերիկյան մշակույթում հայերի տեղի փաստագրումը մեծապես հիմնված է եղել մասնակիցների դիտարկումների, մարդահամարի տվյալների և փոքրածավալ հարցումների վրա: Միացյալ Նահանգներում վերջին մի քանի տասնամյակների ուսումնասիրությունները Կալիֆորնիայում և Մասաչուսեթսում (Mirak, 1983թ., Bakalian, 1993թ., Wertsman, 1978թ.) ձևավորել են պատմական համատեքստ:

## Սփյուռքի զարգացման շաղկապը՝ մարդասիրական օգնությունից մի քայլ առաջ

Գևորգյանը սփյուռքը դիտարկում է մակրոտնտեսական տեսանկյունից՝ որպես տնտեսական աճի ռեսուրս: Ներգրավվածության ներկայիս ալիքը նա բնութագրում է որպես Սպիտակի երկրաշարժին հաջորդած նախաձեռնության մաս, եթե նորաստեղծ կազմակերպությունները սկսեցին աջակցել մարդասիրական և մշակութային ջանքերին: Նա ուսումնասիրում է այս հեռանկարները՝ ջատագովելով սփյուռքի և Հայաստանի միջև տնտեսական և գործնական կապերի զարգացումը և միաժամանակ նշելով, որ նախկինում մշակութային ջանքերը լավ են մատուցվել, և սփյուռքի մեծ ներդրումները չպետք է թերագնահատել: Այսուամենայնիվ, բարգաված և կայուն լինելու համար անհրաժեշտ է պահպանել երկարաժամկետ տնտեսական կապերը՝ իրավարվելով դրամահավաքի մողելից: Այս մոտեցման շուրջ սփյուռքի առաջնորդների շրջանում ձևավորվել է հարաբերական համաձայնություն: Վերջին մի քանի տարիների ընթացքում Հարավային Կալիֆոռնիայի համալսարանում «Նորարար Հայաստան» խորագրով «TED Talk» հճով անցկացվեց ամենամյա գիտաժողով, որը կենտրոնացած էր ոչ թե դեղամիջոցների կամ դպրոցների համար միջոցների գոյացման, այլ համագործակցության, գաղափարների և գործընկերությունների մշակման վրա: Այս տեսակի միջոցառումները ցույց են տալիս, որ սփյուռքը ավելի մեծ ջանք է գործադրում, որպեսզի հայրենասիրական մղումները բերեն սփյուռքի և Հայաստանի միջև փոխահավետ գործընկերությանը:

Սեփական շահերը պաշտպանելու, այլ ոչ թե հայրենասիրությամբ պայմանավորված կոչերն արտացոլում են սփյուռքը ներգրավելու լավագույն փորձն աշխարհում: Կուվնեցովը սփյուռքի ամենահաջողված նախաձեռնությունների հիմքում ընկած դրդապատճառները բնութագրում է որպես ինքնակտիվացում, քանի որ դրանով այն ձեռնամուխ է լինում սեփական շահերին և զարգացմանը առավելապես նպաստող գործընթացին: Շատ հաճախ սա համընկում է ազգային մակարդակով բարենպաստ արդյունքների հետ: Այսուամենայնիվ, անհատը և նրա ինքնակտիվացումը պետք է համարվի առաջնահերթ և հաշվի առնվի որպես հայրենասիրությունից կամ բարեգործությունից բարձր դասվող հիմնական դրդապատճառ: Հետազոտության տվյալները հաստատում են այս վարկածները: Հայկական սփյուռքի առցանց հետազոտության (ՀՍԱՀ) շրջանակներում առանձնացվել են գիտելիքների փոխանցման և հմտությունների փոխանակման նպատակով սփյուռքի ներգրավման մի քանի նախընտրելի ուղիներ: Նախաձեռնությունների չիրականացման ամենատարածված պատճառը ժամանակի սղությունն է: Փոխահավետ, այլ ոչ է մարդասիրական կամ արտառարկանական համատեքստում սփյուռքի անհատական զարգացումը կարող է համապատասխանել Հայաստանի ազգային զարգացմանը, եթե վերջինս արդյունավետ կերպով ներկայացվի որպես ցանկալի վայր կրթության, մասնագիտական փորձի և ներդրումների համար:

# Սփյուռքի քարտեզագրման համար մեծ տվյալների օգտագործման և ախաղեա

Սփյուռքի և գաղթական համայնքների քարտեզագրման վերաբերյալ վերջին տասնամյակում նորարարական տեխնոլոգիաների օգտագործմամբ կատարվել են մի շաբթ հետաքրքիր ուսումնասիրություններ: Եվրոպական հանձնաժողովի «D4I» նախագիծը, որից մեկ հատված հիշատակվում է սույն վեկուցում, խոշոր քաղաքներում ներգաղթյալ համայնքների կուտակում-ները քարտեզագրելու համար օգտագործում է խիտ հատիկավոր ( $100 \times 100 \text{ m}^2$ ) միկրոտվյալներ: Ազգային և միջազգային մակարդակներով բնակչության և մարդահամարի տվյալները սպառելուց հետո միգրանտների բնակչության խմբերի ի հայտ բերելու նպատակով հետազոտողներն ավելի հաճախ անդրադառնում են սոցցանցերին և թվային հետքերին: Մի դեպքում ֆեյսբուքյան խմբերի վերլուծությամբ ուսումնասիրվում է բասկետի սփյուռքի բաշխումը (Smith, 2000թ.), իսկ մյուս ուսումնասիրություններն օգտվում են «Twitter» սոցիալական ալյատֆորմից՝ Եվրոպական երկրներում սփյուռքի չափագրման համար հետևելով հայրենի երկրներում կարևոր իրադարձությունների սիրված հեշտեգերին (Jones և ուրիշներ, 2011թ.):

Ավանդաբար միգրանտների թվերը ներկայացվում են մոտավոր՝ օգտագործելով ազգային մարդահամարի շրջանակներում ստացված արտասահմանում ծնված օտարազգի բնակիչների թվերը: Հայաստանի պետականության ձեռքբերումը 1991 թվականին, արտագաղթի երկարատև պատմությունը և ընթացող հակամարտությունը բարդացնում են այս հնարքի միջոցով սփյուռքի քարտեզագրումը: ՄԱԿ-ի Տնտեսական և սոցիալական գործերի վարչության տվյալներով 2017 թվականին արտերկրում բնակվող հայերի թիվը կազմում էր 952 600 մարդ, թեև փորձագետների գնահատականով այս թիվը շատ ավելի մեծ է:<sup>8</sup> Քանի որ սփյուռքի զգալի մասը ծնվել է Խորհրդային Միությունում կամ սերում է Խորհրդային Միության հայ քաղաքացիներից, ուստի այս առումով Ռուսաստանի Դաշնության տվյալներն ավելի օգտակար են: 2010 թվականի բնակչության համառուսաստանյան մարդահամարի տվյալներով Ռուսաստանի Դաշնությունում բնակվում է 1 130 491 հայ:<sup>9</sup>

<sup>8</sup> Տնտեսական և սոցիալական հարցերի վարչության (ՏՍԳՎ) կազմում գտնվող ՄԱԿ-ի Բնակչության բաժինը հինգ տարին մեկ թողարկում է Միջազգային միգրանտների թվաքանակի վերաբերյալ վեկույցը և միջազգային միգրացիայի տվյալների առավել ամբողջական աղբյուրն է: Միգրանտների թվաքանակը ցոյց է տալիս «տվյալ երկրում որոշակի ժամանակահատվածում գտնվող միջազգային միգրանտների ընդհանուր թվաքանակը» (ՄԱԿ-ի վիճակագրության բաժին, 2017թ.): Հարկ է նշել, որ թեև դա աշխարհում սփյուռքի բնակչության մոտավոր թվերի լավագույն և հետապոտողներին ու քաղաքականություն մշակողներին հասանելի տվյալների առավել համապարփակ աղբյուրն է, սակայն այս ցուցանիշը չի ընդգրկում այն խտաբը, որը մենք անվանում ենք «հին սփյուռք», այն էնրանց, ովքեր չեն ծնվել արտասահմանում՝ ներառյալ միգրանտների հետնորդներին:

<sup>9</sup> Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորությունում Ռուսաստանի Դաշնության դեսպանություն (Բնակչության վերաբերյալ տվյալներ) [www.rusemb.org.uk/russianpopulation/](http://www.rusemb.org.uk/russianpopulation/)

## ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ըստ սփյուռքի քարտեզագրման մեր խառը մեթոդի՝ մենք առաջնորդվում ենք երկու ճանապարհով: Նախ մենք համայնքները նույնականացնում ենք հարաբերական առումով՝ ստեղծելով ողջ սփյուռքի քարտեզը, որը մանրամասն ներկայացված է ըստ փոստային կոդերի: Այնուհետև, ուսումնասիրում ենք սփյուռքի հմուտ անդամների պրոֆիլները, որոնք նույնականացված են «ORCID» և «ZoomInfo» տվյալների շտեմարաններում: Դա իրականացվել է հայկական լրատվամիջոցներից համացանցային երթևեկության վերլուծության և ընդհանուր առմամբ 261,2 միլիոն գրառումներով տվյալների շտեմարաններում պրոֆիլների անունների ճանաչման միջոցով:


Այսուհետև, օրինաչափությունները և շեղումները դուրս բերելու համար նշված տվյալները հարաբերական եղանակով համեմատվել են միգրանտների թվաքանակի պաշտոնական ազգային թվերի հետ: Հնարավորության դեպքում՝ վերլուծությունը հարստացնելու համար դրանում ընդգրկվել են բնակչության խտության, միջին հարստության և բնակարանային ծախսների վերաբերյալ ազգային ժողովորդագրական տվյալները: Այնուհետև մենք ընտրել ենք տարբեր ոլորտների մասնագետների վերաբերյալ տվյալների շտեմարաններ, որպեսզի «NamSor API»-ի միջոցով որոշենք մասնագետների աշխարհագրությունը և նրանց, ովքեր համարվում են բարձր որակավորում ունեցողներ: \* Արդյունքները նախ ուսումնասիրվում են համաշխարհային մակարդակով, ինչին հաջորդում է Միացյալ Նահանգների և Ֆրանսիայի ազգային պրոֆիլների ուսումնասիրությունը: Այս առաջին մոտեցմամբ մենք առաջարկում ենք աշխարհում սփյուռքի բնակչության պրոֆիլը, դրա ժողովորդագրական կազմը, հետաքրքրությունները, շուկայավարման հակումների կատեգորիաները, ինչպես և նաև ուշագրավ պատմություններ՝ ըստ քաղաքների և դրանց հարակից տարածքների: Մասնագիտական և ակադեմիական տվյալների շտեմարանները մշակելուց հետո մենք այսուհետև կարող ենք կառուցել բարձր հմտություններ ունեցող սփյուռքի համայնքների պրոֆիլներ ըստ քաղաքների և դրանց հարակից տարածքների հետևյալ տվյալների հավաքագրմամբ՝ սեռ, կրթության վայր և տարիներ, հաստատության անվանում, ուսումնասիրվող ոլորտներ, ստացված աստիճաններ, պաշտոնների անվանում, աշխատանքի գումարը վայր, կառավարման մակարդակ և մասնագիտական ոլորտ: ԱՄՆ-ի և Ֆրանսիայի սփյուռքի դիտարկման շրջանակներում մենք ներառում ենք մեր դաշտային աշխատանքի արդյունքները, որոնք ուղղված են գիտելիքների փոխանցման նախաձեռնություններում հետաքրքրվածության ու ներգրավվածության ուսումնասիրմանը:

\* «NamSor SAS»-ը «մեծ տվյալների» ուսումնասիրման ծրագիր է, որն օգնում է իրականացնել տարբեր տեսակի անվանաբանական վերլուծություններ: Անվանաբանական վերլուծությունը կիրառվում է «մեծ տվյալների» կորպորատիվ և ուսումնասիրման շրջանակներում և դասակարգում է հասուլ անուններն ըստ տարբեր կարգաբանության (օրինակ՝ սեռ, լեզվական, մշակութային և ազգային ծագում): «NamSor»-ն օգտագործում է կիրառական անվանաբանության այս տեխնոլոգիան սփյուռքի քարտեզագրման և սփյուռքի ներգրավվածության թիրախային նախաձեռնությունների համար:

Անվանաբանական վերլուծությանը և համացանցային վերլուծությանը գումարվում են քարտեզագրման ավանդական գործողությունները, ինչպիսիք են՝ ֆոկուսային խմբերը, հարցարույցները հիմնական շահագրգիռ կողմերի հետ և գրասենյակային հետապոտությունները: 2019 թվականի ապրիլին և մայիսին դաշտային հետապոտություններ են իրականացվել Բոստոնում, Նյու Յորքում, Լոս Անջելեսում և Փարիզում, հարցարույցներ են անցկացվել Միացյալ Նահանգներում և Ֆրանսիայում գտնվող սփյուռքահայ համայնքի վաթսուն անդամների, ինչպես նաև Հայաստանի, Ռուսաստանի Դաշնության և Միացյալ Թագավորության շահագրգիռ կողմերի և փորձագետների հետ: Թեև Ռուսաստանի Դաշնությունը նոր սփյուռքի մեջ մասի համար նպատակետ երկիր է, սակայն համառոտության նկատառումներից ելելով դրա խորը վերլուծությունը գիտակցաբար չի ընդգրկված սույն ուսումնասիրությունում:

## Գծապատկեր 1

### Համայնքային պրոֆիլներ ստեղծելու համար օգտագործվող տվյալների վերլուծության մեթոդներ ու տվյալների շտեմարաններ



## Տվյալների շտեմարանների բնութագրեր


«ZoomInfo»-ն խոշոր, ձեռնարկությունից ձեռնարկություն (business-to-business, B2B) սկզբունքով գործող գրանցամատյան է, որը սպասարկվում է Միացյալ Նահանգներում գործող մասնավոր ընկերության կողմից: Դրոֆիլների մեծ մասը ստեղծվում է «ZoomInfo»-ի և ամբողջական ցանց մուտքի դիմաց իրենց ընկերության տեղեկագրերից տվյալներ տրամադրող և բաժանորդագրված այլ ընկերությունների միջև փոխանակման արդյունքում: Օգտատերերը չեն ստեղծում իրենց անձնական պրոֆիլները, սակայն ունեն մասնակցությունից հրաժարվելու և իրենց գրառումը ջնջելու իրավունք և հարավորություն: «ZoomInfo»-ն նաև տվյալներ է կորպում հանրային գրանցամատյաններից՝ խաչաձև համեմատելով դրանք ազգային տվյալների շտեմարանների և «LinkedIn» ցանցի տվյալների հետ: Տվյալների շտեմարանը պարունակում է 156 միլիոն գրառում:

«ORCID»-ը նոյնականացման և վերագրման մեխանիզմ է: «ORCID» հապավումը բացվում է որպես «Open Researcher and Contributor ID», որը եկակի նոյնացուցիչ է հետազոտողների համար: Օգտատերերը կարող են միասնակարգին՝ առցանց գրանցվելով և ստանալով նոյնացուցիչ, որն այսուհետև օգտագործվում է իրենց հրապարակումներում և կապվում դրանց հետ: Օգտատերերն իրենց պրոֆիլը հարստացնելու, իրենց բնագավառում այլցներկայացնելու և հնարավոր համագործակցություն հաստատելու համար նշում են իրենց կրթության և աշխատանքային փորձի մակարդակությունը: Նոյնացուցիչը կոչված է եկակի նոյնականացման միջոցով դյուրացնել հետազոտության վերագրման գործընթացը և դարձնել այն առավել ճշգրիտ: Մեր վերլուծության պահին «ORCID» համակարգում եղել է 5,2 միլիոն գրառում:

Լայն քարտեզագրման մեր աշխատանքներում ֆրանսիայի «Սպիտակ Էջեր» տեղեկատու թույլ է տալիս իրականացնել անվանաբանական վերլուծության լրացուցիչ մի շերտ: Թեև անհնար է ավելի մեծաթիվ բնակչության տվյալներից առանձնացնել բարձր հմտություններ ունեցող բնակչության թվաքանակը, սակայն այս գրացուցակը՝ ավելի քան 100 միլիոն բնակչության հասցե պարունակող նմուշների չափով, կարելի է համեմատել ազգային մարդահամարի տվյալների հետ: Ֆրանսիայի բնակչությունը կազմում է շուրջ 66,9 միլիոն մարդ, և այս տվյալների շտեմարանում արձանագրված կրկնօրինակ գրառումները կարելի են բացատրել մեկ անձի անունով մի քան տան կամ յուրաքանչյուր տան համար բազմաթիվ հեռախոսային գծերի առկայությամբ: Բացի այդ, «Սպիտակ Էջերում» արտացոլված տվյալները խիստ փոխկապակցված են ֆրանսիայում բնակչության միտումների հետ, որոնք կրկնօրինակում են բնակչության կենտրոնների միտումները (տե՛ս Գծապատկեր 2):

**Գծապատկեր 2 «INSEE» բնակչության տվյալները (2018թ. մուգ կապույտով)  
հակասում են ֆրանսիայի «Սպիտակ էջեր» տեղեկատուի  
տվյալներին (բաց կապույտով) ըստ վարչական շրջանների**

Population Data: INSEE and White Pages by Department



## Կիրառական անվանաբանություն

Անվանաբանությունը հանրալեզվաբանության ճյուղ է, որն ուսումնասիրում է անոնների ձևաբանությունը: Անվանաբանությունը կարող է կիրառվել մեծ տվյալների ուսումնասիրման և դրանց հիման վրա անոնների ու ազգանունների տեսակավորման համար՝ ըստ տարբեր կարգաբանությունների, օրինակ՝ ըստ սեռի, լեզվական և մշակութային ծագման: Տվյալների կորպման և մշակման մասնագիտացված ծրագրային ապահովման մատակարար «NamSor»-ը մշակել է տվյալների մեծ զանգվածներ՝ այս նախագծի շրջանակներում ծագումով հայ անձանց ի հայտ բերելու նպատակով: «NamSor»-ի դասակարգիչը նախ սովորում է անոնների առանձնահատկությունները (այդ թվում՝ դրանց հաճախականությունը, ձևաբանությունը և վերջավորությունները), իսկ այսուհետև վավերացնում է դրանք խիստ գաղտնիության համաձայնագրով հայկական սփյուռքի մի համաշխարհային կազմակերպության կողմից տրամադրված փոստային հասցեների հիման վրա, որն էլ իր հերթին ստուգվում է կենդանի հետազոտողի կողմից: «NamSor»-ի մեթոդաբանությունը մեջբերվում է հավելվածում բերված ամբողջական վեկույցում:

## Google Analytics

Ենք քարտեզագրում ենք ուսումնասիրության ուղղությունը վեր վնասրկչի տվյալների միջոցով՝ նախ հաստատելով տարիքի և սեռի ցուցանիշներն ըստ աշխարհագրական դիրքի, նախընտրած լեզվի և դիտարկման միջոցի: Այսուհետև մենք դիտարկում ենք լրատվական կայքի հետ աշխատելիս օգտատիրոջ վարքագիծը: Այս ուսումնասիրության շրջանակներում հետազոտողը և ՄՄԿ-ի հայաստանյան գրասենյակը դիմել են լրատվամիջոցներին: Կապմակերպությունները պաշտպանելու համար լրատվամիջոցները սույն վեկուցում չեն հիշատակվում իրենց անվանումներով և փոխարինվում են «Ա»-ից «Ե» նույնացուցիչներով: Մի շաբթ լրատվամիջոցներին առաջարկվել է մասնակցել ուսումնասիրությանը, ընդ որում հնարավորինս մեծ նմուշ հավաքագրելու համար հաշվի են առնվել սփյուռքում և Հայաստանում դրանց գործունեությունը, քաղաքական կողմնորոշումը և գաղափարական ուղղվածությունը: Լրատվամիջոցներին հնարավորություն է տրվել տվյալները տրամադրել կամ հրահանգների միջոցով, կամ ժամանակավոր մուտք տալով իրենց «Google Analytics» հաշիվներին:

Այսուհետև հետազոտողն առանձին և միասին ուսումնասիրել է հինգ աղբյուրներից յուրաքանչյուրի ամբողջական տվյալները 2018 թվականի հունվարի 1-ից մինչև 2019 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածի համար: Այսպիսի փոփոխականները, ինչպիսիք են՝ վնասրկչի լեզվուն, աշխարհագրական դիրքը և ժողովրդագրությունը, անհրաժեշտության դեպքում, չափագրավել են «օգտատերերի» և «էջի դիտումների» համեմատությամբ: Տվյալները բաժանված են աշխարհագրական չորս կատեգորիաների, այն է՝ բոլոր օգտատերեր, սփյուռքի բոլոր օգտատերեր (սահմանվում են որպես «բոլոր օգտատերեր՝ բացառությամբ Հայաստանից դիտող օգտատերերի»), բոլոր օգտատերեր Ամերիկայի Միացյալ Նահանգներում և բոլոր օգտատերեր Ֆրանսիայում: Սա հնարավորություն տվեց ավելի մանրամասն վերլուծել հետաքրքրությունները, ժողովրդագրական տվյալները և լեզվական նախասիրությունները՝ ըստ տարածաշրջանի ընդհանուր բնակչության համեմատ: Գովազդային որևէ տվյալներ չեն վերլուծվել:

### Աղյուսակ 1

**2018 թվականի հունվարի 1-ից 2019 թվականի  
հունվարի 1-ը վերլուծված օգտատերերի ընդհանուր թիվը՝  
ըստ լրատվական աղբյուրի**

Ա	Բ	Դ	Դ	Ե
<b>6 612 380,</b>	<b>10 783 660,</b>	<b>2 871 928,</b>	<b>9 537 182,</b>	<b>33 245 273</b>


Աղյուսակ 1 ցույց է տալիս ընթերցողների ընդհանուր թվի տարբերությունները և յուրաքանչյուր լրատվամիջոցի ծածկույթը: Հետագայում սույն փաստաթղթում բերվող «Google Analytics»-ի բոլոր թվերը ներկայացված են համեմատական կարգով, քանի որ հինգ աղբյուրներում մեծ խնդիր է կրկնակի հաշվարկը: Շատ հավանական է, որ «Ե» աղբյուրը հաճախ ընթերցող օգտատերը, ստանում է տեղեկատվություն նաև «Գ» աղբյուրից: «Google»-ը հավաքում է IP հասցեներ, որոնք հնարավոր է համապատասխանեցնել օգտատերին կրկնօրինակները վերահսկելու համար, սակայն այդ տվյալները չեն տրամադրվում վերջնական օգտատերերին: Հետևաբար, կրկնօրինակների հնարավոր ազդեցությունը նվազեցնելու համար նախքան միասին դիտարկելը մենք յուրաքանչյուր աղբյուրի միտումները վերլուծում ենք առանձին-առանձին:

## Ֆոկուսային խմբեր և հարցավրույցներ հիմնական շահագրգիռ կողմերի հետ

Լրացուցիչ որակական տվյալներ ստանալու համար հետազոտողը հինգ ամսվա ընթացքում առանցքային միջոցառումների և փառատոնների ընթացքում անցկացրել է մասնակիցների դիտարկումներ և հարցավրույցներ Միացյալ Նահանգների և Ֆրանսիայի սփյուռքի համայնքներում: Հետազոտողը մասնակցել է հատուկ միջոցառումներին և հիշատակի օրերին, ինչպիսիք են՝ ցեղասպանության հիշատակի օրը, անկախության տոնը, ազգային տոները, մտավորականների և գործարարների համաժողովները և հավաքույթները՝ սոցիալական և տնտեսական տարբեր շերտերից սփյուռքի ներկայացուցիչների ավելի մեծ նմուշ հավաքելու նպատակով:


Հարցավրույցի մասնակիցներին տրվել են հարցեր ժողովրդագրական հիմնական տվյալների վերաբերյալ, այն է՝ տարիք, սեռ, կրթության մակարդակ, ծննդավայր և սերունդ սփյուռքում: Մեր վերլուծության մեջ «սփյուռքի առաջին սերնդի ներկայացուցիչ» եկրույթը վերաբերում է Նրանց, ովքեր Հայաստանի սահմաններից դուրս ծնված ընտանիքի առաջին սերնդի անդամ են: Եվրոպի հետ կապված խառնաշփոթից խոսափելու համար Հայաստանի Հանրապետությունում ծննդավայր մասնակիցներին խնդրել են նշել Հայաստանից վերջինը եկած ընտանիքի անդամին: Նրանց հետազոտողը հատկացրել է առանձին կոդ: Հարցավրույց տվյալներից «0»-ով են նշվել Նրանք, ովքեր ծնվել են Հայաստանում, «1»-ով՝ Նրանք, ում ծնողներն են ծնվել Հայաստանում, իսկ «2»-ով՝ Նրանք, ում տատիկը կամ պապիկն են ծնվել Հայաստանում և այլն:

### Գծապատկեր 3 Հարցավրույցների մասնակիցների ժողովրդագրական տվյալները, սեռ



18-ից 29 տարեկան խմբում հարցվածների ճնշող մեծամասնությունը՝ 76 տոկոսը, իրեն համարել է երկրորդ սերնդի սփյուռքի ներկայացուցիչ, իսկ նոյն խմբի 14 տոկոսն իրեն նոյնականացրել է որպես 3-րդ սերնդի ներկայացուցիչ: Առավել խառը տարիքային խումբն էր 40-ից 49 տարեկանների խումբը, որոնցից 42 տոկոսն առաջին սերնդի, 36 տոկոս «զրոյական սերնդի», իսկ 17 տոկոսը երկրորդ սերնդի ներկայացուցիչներ էին: Քանի որ առաջին և զրոյական սերնդի մասնակիցները շատ էին, ուստի ամբողջ խմբի սերնդի միջին ցուցանիշը կազմեց 1,5 միավոր:

#### **Գծապատկեր 4 Հարցազրույցների մասնակիցների ժողովրդագրական տվյալները, տարիք**



Ծննդավայրի կամ հարցազրույցների անցկացման վայրերի, ինչպես նաև սերունդների բաժանման կամ սեռերի միջև որևէ տարբերակելի օրինաչափություններ չեն հայտնաբերվել: Ըստ հանուր գենդերային հարաբերակցությունը մեր ընդհանուրի համեմատ հարաբերականորեն կայուն էրգ Փարիզում կանաց մասնաբաժինը կազմում էր 68 տոկոս, Լու Անժելեսում՝ 63 տոկոս, իսկ Բոստոնում՝ նվազում մինչև 40 տոկոս: Քանի որ որակական հարցազրույցներում օգտագործվել է նմուշառման «ձևագունդ» հնարքը, ուստի նմուշները Բոստոնում և Լու Անժելեսում համամասնորեն հակված են դեպի 18-ից 29 և 30-ից 39 տարեկան տարիքային խմբերը (որոնք կազմում են յուրաքանչյուր քաղաքում մասնակիցների 76%) և դեպի 40-ից 49 և 50-ից 59 տարիքային խմբերը՝ Փարիզում (72%): Անհատական հարցազրույցների 70 տոկոսն անցկացվել է Միացյալ Նահանգներում, իսկ Ֆրանսիայում դրանք կազմել են 30 տոկոս:

Հարցազրույցների մասնակիցներին տրվել են նախապատրաստական հարցեր, որոնք յուրաքանչյուր հարցազրույցի դեպքում վերադասավորվել կամ փոքր-ինչ փոփոխվել են՝ ենելով համատեքստից և խոսակցությունից, այն է՝ սփյուռքում ներգրավվածության պատճառը, կապը սփյուռքի և Հայաստանի հետ, սփյուռքի գործունեության մեջ ներգրավվելու պատրաստակամությունը, այցերը Հայաստան, կարծիքները Հայաստանի մասին, մասնագիտական զարգացումը և զարգացման աշխատանքներին մասնակցելու պատրաստակամությունը: Ինստիտուցիոնալ մակարդակով կազմակերպությունների հետ հարցազրույցներն իրականացվել են նոյն տրամաբանությամբ: Ավելի երիտասարդ տարիքի հարցվածները հաճախ սեփական նախաձեռնությամբ պատմում էին իրենց ընտանիքի արտագաղթի պատճառների մասին՝ որպես իրենց հայ ինքնության և միգրացիայի պատմության առանցքային տարր, թեև այդ հարցն ընդգրկված չէր մեր հարցաշարում: Մասնավորապես, ուսանողներն իրենց նոյնականացնում էին որպես ցեղասպանությունից փրկվածների հետևորդներ, թեպետև մենք որևէ առն-

չություն չենք հայտնաբերել այս պատասխանների և նրանց գտնվելու վայրի միջև: Ավելի բարձր տարիքային խմբում՝ ինչպես Միացյալ Նահանգներում, այնպես էլ Ֆրանսիայում, ավելի քիչ հավանականություն կար, որ նման տեղեկությունները ներկայացվեն ինքնաբուլս կերպով, ընդ որում նշված խմբում որպես սփյուռքում իրենց ինքնությունը ձևավորող իրողություն սովորաբար նշվում էր համայնքը:

Նման մեծ և բազմազան սփյուռքի հետ աշխատելիս խիստ բարդ խնդիր է ներկայացուցչական նմուշ ստանալը: Այնուամենայնիվ, քանի որ մեր հետապոտության հիմնական ուշադրությունը սևոված է մեծ տվյալների վրա, ուստի համայնքի անդամների և հիմնական շահագրգիռ կողմերի հետ որակական հարցավորույցները մեկ համար ծառայել են որպես մեկնաբանությունների ու առաջարկությունների ուղղորդման լրացուցիչ միջոց: Մեր հարցավորույցներից ստացված տվյալները լրացնելու համար մենք օգտվում ենք վերջին լայնածավալ հետապոտությունների (ՀՍՀ և ՀՍԱՀ) արդյունքներից:

## Մարտահրավերներ

Սույն վեկույցում վերլուծված տվյալների շտեմարանների ողջ բազմազանությունը մի շարք մարտահրավերներ է ներկայացնում խիստ տարբեր չափերի և աշխարհագրական հատիկավորության Նմուշները համեմատելու առումով: Յուրաքանչյուր աղբյուրում օգտագործվում են տվյալների հավաքման տարբեր եղանակներ և ընդգրկվում բնակչության տարբեր հատվածներ: Այս թերությունը հաղթահարելու համար տվյալների յուրաքանչյուր աղբյուր ներմուծելիս մենք կողք կողքի համեմատում ենք այն ԱՄՆ-ի մարդահամարի գրասենյակի և Ֆրանսիայի Վիճակագրական գրասենյակի («INSEE») պաշտոնական տվյալների հետ: Այս մեթոդով հուսով ենք հաստատել ավանդաբար ընդունված սփյուռքահայ համայնքների ներկայությունը և բացահայտել ինարավոր նոր օրինաչափություններ:


Թեև Միացյալ Նահանգներում հավաքվում են տվյալներ տանն օգտագործվող լեզուների, ծննդյան երկրի, անձի հայտնած ազգության և ծագման վերաբերյալ, սակայն Ֆրանսիան օրենքով սահմանված կարգով (Loi N 94-664) չի հավաքում կամ հրապարակում որևէ տվյալներ ծագման, կրոնի կամ լեզվի վերաբերյալ: Սա առանձնապես դժվարացնում է միգրանտների և սփյուռքի բնակչության գնահատումը: Ֆրանսիայի համայնքների չափագրման համար օգտագործվում է երկու տվյալների շտեմարան՝ հանրամատչելի Ֆրանսիայի «Սպիտակ Էջեր» տեղեկատուն և «D4I» տվյալների շտեմարանը, որը մշակվում է Եվրոպական հանձնաժողովի Համատեղ հետազոտական կենտրոնի (ՀՀԿ) կողմից: «D4I»-ն տվյալներ է տրամադրում միգրանտների վերաբերյալ՝ ըստ ծննդյան երկրի, մինչդեռ «Սպիտակ Էջեր» տեղեկատուն տրամադրում է բոլոր բնակիչների վերաբերյալ ըստ անվան վերլուծված տվյալներ: Հետևաբար, մենք համարում ենք, որ «Սպիտակ Էջեր» տեղեկատուն ավելի արդյունավետ և հուսալի աղբյուր է, և Ֆրանսիայի վերլուծության համար այն օգտագործվում է որպես գերակա աղբյուր:

Դժբախտաբար, մուտքի հետ կապված խնդիրները թույլ չտվեցին, որ սփյուռքում ներկայացնություններ ունեցող խոշոր լրատվամիջոցները ներառվեն մեր վերլուծության մեջ: Ուսումնասիրության շրջանակներում փորձ արվեց տվյալներ ստանալ ակնհայտորեն Միացյալ Նահանգներում և Ֆրանսիայում տեղակայված առցանց լրատվական աղբյուրներից, սակայն մեկ չհաջողվեց ստանալ համապատասխան թույլտվություններ: Այսուամենայնիվ, վերլուծված հինգ լրատվամիջոցներից չորսն լրաբանում է նորությունները մեկ այլ լեզվով ևս, ընդ որում դրանցից բոլորը հասանելի են ամբողջ աշխարհում: Հետևաբար, այս ուսումնասիրության «Google Analytics»-ի մասը պետք է ընկալվի որպես հայկական նորությունների նկատմամբ սփյուռքի հետաքրքրության դիտարկում, այլ ոչ թե որպես աշխարհում հայ համայնքի քարտեզագրում:

## Հայտնի շեղումներ

«ZoomInfo» տվյալների շտեմարանում մեծ տեսակարար կշիռ ունեն Միացյալ Նահանգներում տեղակայված օգտատերերը, ընդ որում ողջ տվյալների շտեմարանի 74 տոկոսը կազմում են Միացյալ Նահանգները, Մեծ Բրիտանիան, Կանադան, Հնդկաստանը և Ավստրալիան: Նույն երկրներում, որոնցում վերահսկվում է հայկական ծագում ունեցողների թիվը, վերջիններս կազմում են տվյալների շտեմարանի 80 տոկոսը: Թեև ընդհանուր բնակչության, թեև հայազգի բնակչության առումով Միացյալ Նահանգները կազմում են գրառումների ավելի քան 55 տոկոսը: Սեռերի բաշխման առումով արական սեռի հայազգի ներկայացուցիչները մի փոքր գերակայում են տվյալների շտեմարանում՝ 59:41 հարաբերակցությամբ, ընդ որում ընդհանուր բնակչության մեջ այդ հարաբերակցությունը կազմում է 56:43 (տես Գծապատկեր 5): Գոյություն ունեն զգալի գեներացիան շեղումներ տարբեր երկրներում, սակայն մեծ թվով հայազգի բնակչություն ունեցող երկրներում դրանք ներկա չեն:<sup>10</sup>

### Գծապատկեր 5 Գեներացիային հարաբերակցություն



Աղյուր՝ «ZoomInfo» տվյալների շտեմարան:

<sup>10</sup> Տվյալների շտեմարանում ընդհանուր բնակչության գծով տղամարդիկ Սառույան Արաբիայում, Պակիստանում, Աֆղանստանում, Եմենում և Լիբիայում կազմում են ավելի քան 80 տոկոս:

Սույն ուսումնասիրության մեջ օգտագործված տվյալների շտեմարանների ներկայացուցչականության աստիճանը տարբեր է, ընդ որում դրանցից մի քանիսը շատ սերտորեն համապատասխանում են բնակչության ընդհանուր թվերին: «INSEE»-ի պաշտոնական մարդահամարի տվյալների համեմատ Ֆրանսիայի «Սպիտակ Էջեր» տեղեկատուի ուսումնասիրությունն ի հայտ է բերում աշխարհագրական տվյալների կետերի միջև մեծ փոխկապակցվածություն, որի «r» արժեքը կազմում է. 00001, իսկ և «r» քառակուսին՝ .857: Համաշխարհային մակարդակի տվյալների շտեմարանները, ինչպիսիք են՝ «Google Analytics»-ի, «ORCID»-ի և «ZoomInfo»-ի տվյալների շտեմարանները, ունեն ավելի շեշտակի շեղումներ և հարմար չեն ռեգրեսիոն վերլուծության համար: Շեղումներն առավել ակնհայտ են «ZoomInfo» և «ORCID» տվյալների շտեմարաններում: Այսուամենայնիվ, քանի որ դրանք մասնագետների գրանցամատյաններ են, մենք չենք ակնկալում, որ դրանք կիետնեն բնակչության ընդհանուր կանխատեսումներին և չենք փորձում չափել դրանք որպես այդպիսիք: «ORCID»-ում մեծ տեսակարար կշիռ ունեն ճշգրիտ գիտությունները, իսկ հայկական սփյուռքի առնչությամբ տվյալների շտեմարանը ցույց է տալիս բարձր կենտրոնացում բժշկական և առողջապահական գիտությունների, բնագիտության, ֆիզիկայի, քիմիայի, մաթեմատիկայի և ճարտարագիտության ոլորտներում: Այս ոլորտները միասին կազմում են սփյուռքի բոլոր հմուտ մասնագետների 69 տոկոսը:

## Գաղտնիություն

Մեծ տվյալների օգտագործման առումով առաջնային նկատառումներից ու խնդիրներից է այն անձանց գաղտնիության, իրավունքների և անվտանգության ապահովումը, ում տվյալները դիտարկվում են: Հաշվի առնելով տվյալների նորարարության՝ կայուն վարգացմանը նպաստելու ներուժը՝ Միավորված ազգերի կազմակերպությունն ունի մի շարք աղբյուրներ և ուղեցույցներ, որոնք օգտագործվել են սույն վեկույցը կազմելիս: Ծրագիրն իրականացվել է ՄԱԿ-ի Գլոբալ Պոլսի (2018թ.) կողմից իրապարակված 2030 օրակարգում, ինչպես նաև Տվյալների վարգացման նորարարության ուղեցույցում (2016թ.) իրապարակված մեծ տվյալների վերաբերյալ ուղղորդող ծանոթագրության համաձայն: Այս աշխատանքների հիմնական առանձնահատկություններն են տվյալները նվազագույնի հասցելը, անվտանգությունը, թափանցիկությունը և համագործակցող երրորդ կողմերի պատշաճ ջանասիրությունը:

Սույն վեկույցում ներկայացված բոլոր տվյալներն ամբողջությամբ համախմբված և անանուն են: Վերլուծության արդյունքում սույն վեկույցի շրջանակներում կամ դրա կազմմանը մասնակցած գործընկերներին չեն բացահայտվել որևէ անձի անհատական տվյալներ (այդ թվում՝ անունների հետ կապված աշխարհագրությունը և աշխատանքային պատմությունը): Այն դեպքերում, եթե վերլուծությունն իրականացվել է խիստ հատիկավոր մակարդակի վրա (օրինակ՝ բարձր հմտություններ ունեցող աշխատանքային ուղի, վերլուծություն՝ 70 էջում, Արտաքինական վերադարձողներ և «Սփյուռք» բաժնում), և կա անհատների նույնականացման վտանգ, տվյալները բաց են թողնվել: Սույն հետազոտության իրականացման ընթացքում հատուկ ուշադրություն է դարձվել բոլոր մասնակիցների գաղտնիության պահպանմանը, ընդ որում տվյալները մշակվել և հեռացվել են ապահով եղանակով: Տվյալների անվտանգությունն ամրապնդվել է աշխատանքների ապակենտրոնացմամբ, ընդ որում հիմնական հետազոտողին «NamSor»-ը, ՄԱԿ-ը կամ ՀՀ կառավարությունը որևէ անուն կամ գտնվելու վայր չի տրամադրել:

## Ապագա օգտագործում

Մեծ տվյալների մշակումն ու ուսումնասիրումը բնակչության հետազոտություններում սահմանափակված է միայն տվյալների շրջանակով և դրանց աղբյուրի բնութագրերով և կարող է կիրառվել ցանկացած համատեքստում: Հետագա ուսումնասիրությունները, օրինակ, կարող են անդրադառնալ բնակչության տվյալներին կամ արտոնագրային թույլտվություններին քաղաքի մակարդակով: Թեև այս նախազի շրջանակներում քավարար ժամանակ չենք ունեցել ներառել ԱՄՆ-ի «Սպիտակ Էջեր» տեղեկատուն որպես տվյալների շտեմարան, սակայն ֆրանսիական տարբերակի հետ համեմատական վերլուծությունը կարող է ծառայել որպես արժեքավոր աղբյուր: Այս մեթոդաբանությունը կարող է օգտագործվել քավարար չափով չուսումնասիրված կամ չսպասարկված բնակչությունը քարտեզագրելու համար, ինչպես նաև նրանց քարտեզագրման համար, ովքեր չեն քավարարում մարդահամարում ընդգրկվելու շեմը:

Հայ համայնքը շատ առումներով իդեալական առարկա է քարտեզագրման մեթոդաբանության վիրաբերկման համար, ինչը պայմանավորված է սփյուռքի համայնքների մեծ տեսանելիությամբ և համայնքների ղեկավարների կամ կազմակերպությունների միջոցով միտումների հաստատման հեշտությամբ: Օրինակ՝ «Google Analytics»-ի տվյալների նախնական վերլուծությամբ ի հայտ բերվեց զգալի բնակչություն նախկինում անհայտ վայրում՝ Կանգաս նահանգի Ջոֆիվիլ քաղաքում: Նույնիսկ 10 000 բնակիչ չունեցող այս փոքր քաղաքը չունի հայկական կազմակերպություններ, մթերային խանութներ, եկեղեցիներ կամ որևէ արտաքին տարբերակիչ նշաններ, որոնք ցույց կտան, որ բնակչության ավելի քան 50 տոկոսն ունի հայկական ծագում, ինչպես վկայում էին ուսումնասիրված տվյալները: Մենք դիմեցինք քաղաքի տեղական թերթ՝ խնդրելով օգնել վերլուծական տվյալների վավերացման հարցում, ընդ որում թերթը երբեք սփյուռքի մասին պատմություններ չէր հրատարակել և տեղյակ չէր այդ տարածքում գտնվող որևէ առանձին եթևիկական համայնքների մասին: Կապ հաստատվեց նաև այդ տարածաշրջանի սփյուռքի կազմակերպությունների հետ նպատակ ունենալով քննարկել անդամակցության և այդ տարածքում նրանց գործունեության հարցերը: Օգտագործելով Միացյալ Նահանգներում հայերի մեծ տեսանելիությունը՝ հարցումներից պարզվեց, որ անոմալիան բխում է ԱՄՆ-ի աշխարհագրական միջնամասում Ջոֆիվիլի դիրքից, որի արդյունքում այն ծառայում է որպես «լոելյայն» տեղանք, որին «Google»-ը վերագրում է երկրում անվերագրելի արժեքները:

## Արդյունքներ

Այս բաժինը կազմակերպված է հետևյալ կերպ՝ նախ մենք նախանշում ենք ընդհանուր սփյուռք՝ ըստ համացանցային վերլուծության տվյալների և չբաժանելով դրանք հատվածների ըստ հմտությունների կամ կրթության մակարդակի: Սա արվում է նախ համաշխարհային և ազգային մակարդակներով՝ շեշտ դնելով Ամերիկայի Միացյալ Նահանգների և Ֆրանսիայի դեպերի վրա: Այսուհետև մենք անցնում ենք բարձր հմտություններ ունեցող սփյուռքի ներկայացուցիչներին՝ տարածելով ակադեմիական և գործարար համայնքները ներկայացնող մասնագետների երկու տվյալների շտեմարաններից, այն է՝ «ORCID»-ից և «ZoomInfo»-ից ստացված տեղեկությունները: Դրանք վերլուծվել են նաև համաշխարհային մակարդակով, ինչին հաջորդել է վերլուծությունն ազգային մակարդակով: Այսուհետև մենք այդ իրողությունները կապել ենք քաղաքային մակարդակով պրոֆիլների հետ՝ ավելի մանրամասն ուսումնասիրելով, թե որտեղ են կենտրոնացած սփյուռքի տաղանդավոր անդամները և ինչպիսին կարող է լինել նրանց կրթության մակարդակը: Ցանցային երթնեկության տվյալներն իրենցից ներկայացնում են բոլոր հինգ աղբյուրների միջին ցուցանիշը, եթե այլ բան նշված չէ:

## Համաշխարհային ակնարկ

Սփյուռքի բնակչության գնահատականները հայտնի են իրենց տարբերության և հուսալիության բարձր մակարդակով: Հավաստի տվյալների որևէ մեկ աղբյուրի բացակայության պայմաններում հաճախ այդ գնահատականները տարբեր նկատառումներով ուժացվում են հաստատությունների, քաղաքական գործիչների կամ գիտնականների կողմից, ինչն էլ հաճախ կրկնում են նրանց հաջորդողները: Զանի որ մեթոդները հավադեպ են հայտարարվում, գնահատականները շարունակում են շրջանառվել, ինչը կարող է վևաս հասցել սփյուռքին ուղղված քաղաքական նախաձեռնություններին՝ մեծապես կենտրոնանալով մեկ աշխարհագրական ուղղության վրա և անտեսելով մնացածները: Հայկական սփյուռքի բազմաթիվ վարգացած հաստատություններ, կազմակերպություններ, կրոնական համայնքներ և ցանցեր օգնում են ժամանակին հետևել աշխարհում սփյուռքի գործունեությանը: Սփյուռքի ամենահաճախ մեջբերվող թիվը կազմում է 8 միլիոն մարդ, որոնցից 700 000-ից 1 միլիոն ԱՄՆ-ում (Bulbulian, 2001թ.): Ըստ գնահատականների՝ Ռուսաստանի Դաշնությունում ապրում է 1,9 միլիոն մարդ (թեև հարկ է նշել, որ 2010 թվականի համառուսաստանյան մարդահամարի տվյալներով այդ թիվը մոտավոր կազմում է 1,1 միլիոն մարդ), Վրաստանում՝ 400 000 մարդ (Tölölyan, 2006թ.), իսկ Ֆրանսիայում՝ 500 000 մարդ:

Թեև այդ թվերի հիմքում ընկած մեթոդաբանությունը պարզ չէ, սակայն այն, ամենայն հավանականությամբ, օգտագործում է պատմական միզրացիայի ցուցանիշները, որոնք ժամանակի ընթացքում հարմարեցվում են ըստ աճի նպատակակետ երկրներում և խաչած ստուգվում են դիվանագիտական ներկայացուցչությունների և տեղի համայնքների կողմից: Այսուամենայնիվ, աշխարհում աճող շարժունակության պայմաններում պաշտոնական վիճակագրությունն իր բնույթով չի կարող հետևել իրավիճակի վարգացմանը: Հակամարտությունները, տնտեսական ճգնաժամերը, միզրացիոն քաղաքականությունը և արտերկրում եղած հևարավորությունները բոլորը միասին ավելի են երկար ժամանակ սփյուռքի հենակետ համարվող կայացած համայնքների վրա: Հետևաբար, սփյուռքի ցանկացած վերլուծություն չի կարող պարզապես դիտարկել ծագումը, այլև պետք է հաշվի առնի, թե որքանով են սփյուռքի ներկայացուցչներն առաջնորդվում և զբաղվում հայրենիքի գործերով: Չափելով հետաքրքրությունը Հայաստանի Հանրապետության գործունեության, նորությունների, ֆինանսների և քաղաքականության նկատմամբ՝ մենք հոյս ունենք ընդգրկել սփյուռքի այն ենթախումբը, որն ըստ էության ոչ նոր է, ոչ էլ հին, այլ ավելի շուտ որևէ կերպ ներգրավված է Հայաստանի Հանրապետության գործերում կամ առնվազն պարբերաբար հետաքրքրություն է ցուցաբերում Հայաստանի ընթացիկ գործերի նկատմամբ:

Գնահատումներն ուսումնասիրվում են ստորև բերվածներքում, որոնք դասակարգված են ըստ պաշտոնական տվյալների աղբյուրների՝ համացանցային վերլուծության արդյունքների համեմատությամբ: Չեղք բերված վերլուծական տվյալները ուսումնասիրելիս յուրաքանչյուր լրատվամիջոցի մասով արձանագրվել են ընթերցողների տարբեր ժողովրդագրական

տվյալները, ինչպես նաև նրանց հիմնական երկրները: Բոլոր երկրներում Հայաստանն ընթերցողների, այն է՝ միջինում 1,9 միջինում օգտատիրոց համար առաջատար աղբյուր էր: Անհատական լրատվամիջոցներից շեղումները վերահսկելու համար Աղյուսակ 2 նշվում են ինչպես բոլոր լրատվամիջոցների միջին ցուցանիշները, այնպես էլ դրանց միջակայքերը:

Բացի Ռուսաստանի Դաշնությունից, Ուկրաինայից և Հունաստանից, ընթերցողների ընդհանուր թիվը կապել է սփյուռքի ակնկալվող բնակչության հետ՝ ըստ միջազգային թվերի: Վերջին սյունակում ցուցադրված լրատվամիջոցների ընթերցողների միջև եղած մեծ միջակայքը ցույց է տալիս Ռուսաստանի Դաշնությունում և Ուկրաինայում մեր բազային տվյալներում հնարավոր բացթողումները, ընդ որում հարկ է նշել, որ հետազոտության մեջ ներառված չեն հրապարակումները բացառապես ռուսերեն կամ ուկրաիներեն լեզուներով: Հնարավոր է նաև, որ նախկին խորհրդային հանրապետություններում սփյուռքը պակաս հետաքրքրված է հայկական լրատվամիջոցներով և նախընտրում է ազգային լրատվական աղբյուրները: Վերլուծված աղբյուրներից չորսը նորությունները լուսաբանում են հայերեն, անգլերեն և ռուսերեն, իսկ մեկն է՝ հայերեն և անգլերեն լեզուներով: Դժբախտաբար, նախագծի շրջանակներում չհաջողվեց տվյալներ ձեռք բերել ֆրանսալեզու որևէ հրապարակումից:

## Աղյուսակ 2

### Սփյուռքի բնակչության գնահատականներ՝ ըստ ՄԱԿ-ի Տնտեսական և սոցիալական հարցերի Վարչության միգրանտների թվաքանակի, ՏՀԶԿ-ի արտերկրում ծնված բնակչության և «Google Analytics»-ի տվյալների

Սփյուռքի բնակչության գնահատականներ՝ ըստ աղբյուրի					
Դասակարգում («Google Analytics»)	Երկիր	Ընթերցողների միջին թիվը, «Google Analytics»	Ընթերցողների նվազագույն և առավելագույն թիվը, «Google Analytics»	ՄԱԿ-ի Տնտեսա- կան և սոցիալա- կան հարցերի վարչության միգրանտների (2019թ. վերանայում)	ՏՀԶԿ-ի միջազգային միգրացիայի վերաբերյալ վիճակագրա- թվաքանակ կան տվյալների շտեմարան <sup>i</sup>
1	Ռուսաստանի Դաշնություն	277 210	109 368-431 866	527 163	511 150*
2	Ամերիկայի Միացյալ Նահանգներ	153 247	122 649-174 750	101 757	90 946
3	Ֆրանսիա	67 246	26 939-92 455	21 012	29 631*
4	Գերմանիա	34 432	24 055-44 527	21 263	9 000*
5	Պերու <sup>ii</sup>	20 296	0-36 129	0	..
6	Վրաստան	19 896	9 969-31 319	12 736	..
7	Ուկրաինա	13 565	5 759-27 299	47 780	..
8	Իսպանիա	11 793	6 291-17 438	9 860	10 836
9	Բելգիա	11 778	7 821-15 372	1 607	1 530
10	Կանադա	11 694	6 523-14 224	4 419	3 500*

<sup>i</sup> Օտարերկրյա բնակչության թվաքանակ՝ ըստ ծննդյան երկրի, 2017 թ.

<sup>iii</sup> Հնարավոր վիճակագրական սխալմունք

\* Վերջին հասանելի ցուցանիշ

Աղյուր՝ Google Analytics:

Վերը նշված աղյուսակի առաջին տողերի երկրները, բացառությամբ՝ Հայաստանի, դասակարգված են ըստ «Google Analytics»-ի առաջին և երկրորդ սյունակներում, իսկ դրանց համեմատության համար բերվում են պաշտոնական թվերը՝ երրորդ և չորրորդ սյունակներում: «Google Analytics»-ից վերցված գրառումները ցուցադրում են ընթերցողների միջին թիվը, որին հաջորդում են ըստ լրատվամիջոցի բերված նվազագույն և առավելագույն թվերը, որոնք զգա-

լիորեն տարբերվում են: «Google Analytics»-ի համեմատ բերվող պաշտոնական վիճակագրության տվյալներից երևում է հին սփյուռքի չափագրման հավանական պատկերացումներ, որոնք արտացոլված չեն միզրացիային վերաբերող վիճակագրության մեջ: Այն դեպքում, եթե պաշտոնական թվերում ընդգրկված են արտերկրուում ծնված անձինք կամ նոր սփյուռքի ներկայացուցիչներ, տեղական նորությունների նկատմամբ «Google Analytics»-ի միջոցով չափագրությունը կարող է օգնել որոշել, թե որտեղ են ապրում ինչպես միզրանտները, այնպես էլ նրանց հետնորդները: Բելգիայի և Կանադայի պարագայում ՄԱԿ ՏՍԳՎ-ի թվերը գերազանցող սփյուռքի բնակչությունը խիստ հավանական է՝ հաշվի առնելով պատմական միզրացիան և մեծ սփյուռքի ներկայությունը հարևան երկրներում՝ Միացյալ Նահանգներում և Ֆրանսիայում:

Այսուամենայնիվ, Պերուի՝ որպես սփյուռքի առաջնային նպատակակետ, հինգերորդ արդյունքը, անհավանական է թվում և, ըստ երևոյթին, վիճակագրական սխալմունք է մեր տվյալներում: Այս օրինակով ՄԱԿ ՏՍԳՎ-ի և ՏՀՁԿ-ի պաշտոնական թվերն օգնում են հաստատել մեր թվերը, քանի որ հավանական է, որ Բրազիլիայի, Ուրուգվայի կամ Արգենտինայի հայ սփյուռքի թվերը, ամենայն հավանականությամբ, ծածկում են Լատինական Ամերիկայում ցանկացած այլ ներկայության: Զանի որ Պերուն բարձր տեղ է զբաղեցնում հինգ աղբյուրներից չորսում (որոնցից մեկը չի արձանագրում ցանցային երթնեկությունը), ուստի այդ թվերը կարող են վկայել «բռութերի» միջոցով առաջացած ցանցային երթնեկության մասին:<sup>11</sup> Հակառակ դեպքում՝ Պերուում հայկական նորությունների նկատմամբ հետաքրքրության կտրուկ աճը կարող է լինել երկու երկրների միջև գործարար հետաքրքրության մեծացման, ժամանակավոր գործուղումների կամ Լատինական Ամերիկայի այլ երկրներից սփյուռքի տեղափոխման արդյունք:

<sup>11</sup> Բնականաբար, մենք չենք կարող բացառել ոչ մարդկային դերակատարների, օրինակ՝ «վեբ սողացողների», բուտերի, վիրտուալ մասնավոր ցանցերի կամ «VPN» ծառայությունների միջամտության հնարավորությունը: Աշխարհում բռնապետական վարչակարգերի ներքո կամ լրատվամիջոցների սահմանափակման պամաներում ապրող մարդկանց կողմից առցանց գործունեությունը թաքցնելու, կառավարությունների կողմից արգելված կայքեր մուտք գործելու և առցանց կապերում գաղտնիությունը պահպանելու համար այլ երկրով «IP» հասցեի վերահասցեավորմամբ «VPN»-ների օգտագործումն աճում է:

## Ժողովրդագրություն

### Աղյուսակ 3

### Տարիքային բաշխվածության ամփոփ պատկեր, ԱՄՆ, Ֆրանսիա և Ընդհանուր Սփյուռք

Տարի	Միացյալ Նահանգներ	Ֆրանսիա	Ընդհամենք
<b>18-ից 24</b>	<b>6%</b>	<b>19%</b>	<b>7%</b>
<b>25-ից 34</b>	<b>16%</b>	<b>34%</b>	<b>25%</b>
<b>34-ից 44</b>	<b>30%</b>	<b>27%</b>	<b>31%</b>
<b>45-ից 54</b>	<b>20%</b>	<b>10%</b>	<b>18%</b>
<b>55-ից 64</b>	<b>17%</b>	<b>7%</b>	<b>13%</b>
<b>65-ից բարձր</b>	<b>10%</b>	<b>3%</b>	<b>6%</b>

Աղյուսակ՝ Google Analytics:

Դիտվում է առցանց լրատվամիջոցների աշխարհասփյուռ ընթերցողների երիտասարդացման միտում (ինչպես երևում է վերը նշված Աղյուսակ 3), ընդ որում օգտատերերի 56 տոկոսը նույնականացվել է որպես 25-ից 44 տարեկան անձինք: Այդուհանդերձ, ազգային մակարդակով Ամերիկայի Միացյալ Նահանգների և Ֆրանսիայի սփյուռքի երիտասարդ սերնդի շրջանում նկատվում է զգալի տեղաշարժ: Ֆրանսիայի սփյուռքում 18-ից 24 տարեկանների բաժինը գերազանցում է ավելի քան 3 անգամ նույն տարիքային խումբը Միացյալ Նահանգներում: Եվ հակառակ՝ Միացյալ Նահանգներում 55 տարեկանից բարձր անձինք զգալիորեն ավելի ակտիվ են հետևում հայկական նորություններին, քան Ֆրանսիայում նույն տարիքային խմբի ներկայացուցիչները:

Համացանցային վերլուծությունների տվյալների ընթերցման ժամանակ մեր հիմնական ենթադրությունն այն է, որ հայկական նորություններ փնտրողներն ավելի շատ հետաքրքրված կլինեն Հայաստանի Հանրապետությունում նեգրավման մեջ: Հետևաբար, տվյալները ցույց են տալիս, որ Ֆրանսիայում սփյուռքի երիտասարդ ներկայացուցիչներն ավելի շատ են հաղորդակից դառնում հայրենիքի գործերին, քան ամերիկահայ սփյուռքի երիտասարդները: Նմանապես, Միացյալ Նահանգներում 45 տարեկանից բարձր ընթերցողները կազմում են ընդհանուր բնակչության գրեթե կեսը, ինչը տարբերվում է Ֆրանսիայից, որտեղ նրանք կազմում են 20 տոկոս և ընդհանուր սփյուռքից, որտեղ նրանք կազմում են 37 տոկոս: Այս արդյունքները համապատասխանում են 2018 թվականի Հայկական սփյուռքի հետապոտության արդյունքներին, ըստ որոնց 55 տարեկանից բարձր հարցվածների 43 տոկոսը երբեմն կամ հաճախ կամավոր հիմունքներով մասնակցել են հայկական կազմակերպություններում (26): Նմանապես, հետապոտության արդյունքում պարզվել է, որ Ամերիկայի Միացյալ Նահանգների հին սփյուռքի 43 տոկոսը (մասնավորապես՝ Բնոտոնում), ամենայն հավանականությամբ,

հակված է հետևել Հայաստանի ընթացիկ իրադարձություններին: Միացյալ Նահանգներում տարեց բնակչության և ֆրանսիայում երիտասարդ բնակչության ներգրավվածության նպատակային վերլուծությունը կարող է լրացնության պատկերացում տալ սփյուռքի այս խմբերի հետ հաղորդակցման լավագույն փորձի վերաբերյալ:

#### **Աղյուսակ 4 ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԲԱԺԽՈՒՄՆ ԸՍՏ ՔԱՂԱՔԻ, ՀԱՄԱՀԽԱՐԻԱՅԻՆ ԱՎՀՈՒՆՔ**

Քաղաք.	Երկիր	Կին	Տղամարդ
Մոսկվա,	Ռուսաստանի Դաշնություն	34%	66%
Լու Անջելես,	ԱՄՆ	33%	67%
Գլենդել,	ԱՄՆ	37%	63%
Կրասնոդար,	Ռուսաստանի Դաշնություն	35%	65%
Փարիզ,	Ֆրանսիա	41%	59%
Սանկտ Պետերբուրգ,	Ռուսաստանի Դաշնություն	41%	59%
Թբիլիսի,	Վրաստան	51%	49%
Սոչի,	Ռուսաստանի Դաշնություն	41%	59%
Դուսի Ռոստով,	Ռուսաստանի Դաշնություն	38%	62%
Օսլո,	Նորվեգիա	35%	65%
Լոնդոն,	Միացյալ Թագավորություն	38%	63%
Բըրբենք,	ԱՄՆ	37%	63%
Նյու Յորք,	ԱՄՆ	30%	70%
<b>Միջինը՝ աշխարհում</b>		<b>53%</b>	<b>47%</b>

Աղյուսակը հարցում է աշխարհում աղյուսակում՝ գենդերային բաշխումը տարբերակվում է ըստ ընթերցողների քաղաքի: Այդուհանդերձ, պահպանվում է բավականին հավասար հարաբերակցություն ամբողջ աշխարհում, այն է՝ 53 տոկոսն իգական սեռ, 47 տոկոսը՝ արական: Մոսկվայում և Կրասնոդարում արական սեռի ավելի մեծ բնակչությունը կարող է պայմանավորված լինել նրանով, որ դրանք աշխատանքային միգրացիայի ընդունված ուղղություններ են, թեպետև նկատվում է հավասար բաշխում Սանկտ Պետերբուրգում և Սոչիում: Արական սեռի ընթերցողներ ունեցող քաղաքներն ընդհանուր առմամբ գերակայում են, թեև հաշվի առնելով ամբողջ տվյալների շարքը, թվերն առհասարակ մի փոքր հավասարվում են իգական սեռի օգտին:

## Լեզու

«Google»-ը որոշում է օգտատիրոջ խոսացած, կարդացած և հասկացած լեզուները՝ օգտագործելով վնասարկիչի, հեռախոսի և որոնման պատմության կարգավորումները կամ այն գովազդները, որոնց վրա տվյալ օգտատերը սեղմել է նախկինում (Google 2019): Համակարգչի կամ հեռախոսի վրա լեզվական նախապատվությունները սահմանվում են օգտատիրոջ կողմից սկզբնական տեղադրման ընթացքում կամ փոփոխվում են ձեռքով: Հայերեն տառատեսակը լայն տարածում ունի և սպասարկվում է տարբեր վնասարկիչներում և ընթեռնելի է բոլոր գործող համակարգերում, սակայն հատկանշական է, որ «Apple»-ի արտադրության հեռախոսներում հայերեն լեզուն չի սպասարկվում: Հետևաբար, եթե օգտատերն իր «Apple» հեռախոսի կամ պլանշետի միջոցով այցելում է որևէ կայք, ապա կարգավորված գերադասելի լեզուները, հավանաբար, կլինեն անգլերենը կամ ռուսերենը: Հետևաբար, հայոց լեզվի իմացության ցածր մակարդակը, հավանաբար, կարող է լինել սփյուռքի ներկայացուցիչների կողմից հայերենով նյութերի ցածր դիտման արդյունք:

Ամբողջ աշխարհում (այդ թվում՝ Հայաստանում), միջինում օգտատերերի 48 տոկոսի համար նախընտրելի լեզուն ռուսերենն է, որին հաջորդում է անգլերենը (38,3%), ֆրանսերենը (4,2%) և գերմաներենը (2,8%): Լրատվամիջոցներն օգտատերերի համար ունեն տարբեր լեզվական նախապատվություններ, որոնք տատանվում են ռուսերենի կամ անգլերենի միջև և վկայում են լրատվամիջոցների տարբեր ընթերցողների մասին: Անգլերենը տատանվում էր ընթերցողների 32 տոկոսից 51 տոկոսի շրջանում՝ կախված լրատվամիջոցից, իսկ ռուսերենը՝ 36-ից 51 տոկոսի շրջանում:

Սփյուռքում (բացառությամբ Հայաստանի, արտացոլված է Աղյուսակ 5) գերմաներենը, կարծես, առավել նախընտրելի է, քան ֆրանսերենը և հայերենը: Ամերիկյան ընթերցողները, կարծես, լեզվական առումով ամենաքիչ բազմազանն են, և միայն 8 տոկոսն է խոսում անգլերենից բացի այլ լեզվով, թեպետև ռուսերենը երկրորդ ամենատարածված լեզուն է: Ի տարբերություն դրա, Ֆրանսիայի բնակչության շրջանում դիտվում է հայոց լեզվի փոքր-ինչ ավելի լավ տիրապետում, իսկ ռուսալեզու բնակչությունը երեք անգամ ավելի շատ է, քան Միացյալ Նահանգներում: Հետաքրքիրն այն է, որ Ֆրանսիայում սփյուռքահայ ընթերցողների 40 տոկոսը հավասար հակվածություն է ցուցաբերում ֆրանսերենի և անգլերենի նկատմամբ: Համաշխարհային մակարդակով ռուսաց լեզուն գերակշռում է լեզվական բնապատկերում, ինչն այդքան էլ զարմանալի չէ՝ հաշվի առնելով Հայաստանից Ռուսաստանի Դաշնություն աշխատանքային միգրացիայի մեծ ծավալները, ինչպես նաև երկու երկրների միջև եղած պատմական կապերը:

## Աղյուսակ 5

### Էլեկտրոնային հետազոտություններ՝ ըստ երկրի

Միացյալ Նահանգներ	Փրանսիա	Ամբողջ սփյուռք	
Ռուսերեն	<b>6,6%</b>	<b>18,4%</b>	<b>68%</b>
Անգլերեն	<b>92,4%</b>	<b>40%</b>	<b>25%</b>
Հայերեն	<b>0,7%</b>	<b>1,4%</b>	<b>2,3%</b>
Ֆրանսերեն	<b>0,1%</b>	<b>40%</b>	<b>1,4%</b>
Գերմաներեն	<b>0,05%</b>	<b>0,2%</b>	<b>2,8%</b>

Աղյուսակը՝ Google Analytics:

Հայկական սփյուռքի հետազոտության շրջանակներում լեզուն նույնացվում է որպես սփյուռքի խնդրական հիմնական հատկանիշներից մեկը, ըստ որում առաջին սերնդի հարցվածների 74 տոկոսը, երրորդ սերնդի հարցվածների 62 տոկոսը և երրորդ սերնդի հարցվածների 47 տոկոսը լեզուն բնութագրում են որպես իրենց խնդրական կարևորագույն տարրերից մեկը (2018թ., էջ 11): Հնարավորությունները տարբերվում են կախված համայնքից և տարիքային խմբից, իսկ հետազոտության արդյունքում պարզվել է, որ հարցվածների 80 տոկոսն ունի հայոց լեզվի իմացության որոշակի մակարդակ: Ամերիկայի Միացյալ Նահանգներում մեր սեփական դաշտային հետազոտությունները տվյալներու մի փոքր այլ արդյունքներ, այն է՝ 10 հարցվածներից 5-ը խոսում էր հայերեն: Մեր հարցվածների շրջանում այդ թիվը զգալիորեն ավելի բարձր էր Կալիֆորնիայի հարավում բնակչող երիտասարդ խմբերում, ըստ որում 25 տարեկանից ցածր հարցվածների 73 տոկոսն ուներ հայերենի որոշակի իմացություն:

Մասնագիտացված դպրոցներ հաճախածներն ու չհաճախածները բաժանվեցին մոտավորապես հավասար խմբերի, ըստ որում հակառակ դպրոցներում սովորողները որպես կանոն հայերենը սովորում էին տասը տարիքով ավելի մեծ հարազատներից, դպրոցական խմբակներում կամ ավելի հավատեա՞՝ կրոնական խմբերում: Հարցվածներից 30-ից 49 տարեկաններն պակաս հավասականությամբ էին խոսում հայերեն, քան մինչև 29 տարեկանները (32%), եթե չէին ծնվել Միացյալ Նահանգներից դուրս: Ինչպես Միացյալ Նահանգներում, այնպես էլ Ֆրանսիայում անցկացրած հարցազրոյցներում Մերձավոր Արևելքից և Շուաստանի Դաշնությունից արտագաղթածների 66 տոկոսը խսացել է հայերեն որոշ չափով: Մինչև 35 տարեկան գրեթե բոլոր հարցվածները ցավում էին, որ չունեն հայերենի ավելի լավ իմացություն և նշում էին դա որպես անձնական զարգացման գերակայություն՝ ապատ ժամանակ գտնելու դեպքում:

## Հետաքրքրություններ

«Google Analytics»-ն օգտատերերին բաժանում է գովազդի և շուկայավարման նպատակով եվակի խմբերի, որոնք հայտնի են որպես հակվածության կատեգորիաներ, ներշուկայական հատվածներ և այլ կատեգորիաներ: Այս հատվածները կարելի է լավագույնս ընկալել որպես ձագար, ընդ որում «այլ կատեգորիաները» հանդես են գալիս որպես առավել յուրահատուկ և հատիկավոր չափման մակարդակ: Հակվածության կատեգորիաները բնութագրվում են մի եղանակով, որը նման է հեռուստատեսային լսարանների դասակարգմանը, իսկ ներշուկայական սեգմենտները թույլ են տալիս պատերացնել ապրանքների գնման հետաքրքրությունները՝ ցույց տալով այն խմբերը, որոնք, ամենայն հավանականությամբ, կսպառեն տվյալ նյութը՝ ելնելով վնասարկման վարքից (Google Analytics, 2019թ.):

### Գծապատկեր 6 «Google Analytics»-ի կատեգորիաների նմուշ

#### Հակվածության կատեգորիա

Օրինակ՝ «Նորություններ հաճախակի ընթերցող»

#### Ներշուկայական հատված

Օրինակ՝ (հաճախակի ամրագրումներ) հյուրանոցներ և տարածքներ Մարտելում

#### Այլ կատեգորիաներ

Օրինակ՝ քաղաքական նորություններ հաճախակի ընթերցող

Աղյուր՝ Google Analytics:

Աղյուսակ 6 ներկայացված է կատեգորիաների և հետաքրքրությունների հատվածների ընտրանի՝ բաժանված ըստ օգտատերերի Միացյալ Նահանգներում, Ֆրանսիայում և սփյուռքի այլ երկրներում և ընդգրկում է Հայաստանից բացի բոլոր օգտատերերին: Առանց ելակետի դժվար է տարրերակել մշակութային ավելի լայն ուղղությունները սփյուռքի ներսում: Օրինակ՝ արդյոք ամերիկահայերն իրենց հանգիստն ավելի շատ են անցկացնում լողափերում, քան ֆրանսահայերը, կամ արդյոք ամերիկացիներն իրենց հանգիստն ավելի շատ անցկացնում են լողափերում, քան ֆրանսահացիները: Ֆուտբոլն ավելի բարձր է դասվել ֆրանսահայերի, քան ամերիկահայերի շրջանում՝ 3:1 հարաբերակցությամբ, բայց քանի որ Միացյալ Նահանգներում այդ մարզաձևն ավելի քիչ է տարածված, ուստի տվյալ միտումը հաստատելու համար անհրաժեշտ կլիներ ընդհանուր բնակչությունն ընդգրկող Միացյալ Նահանգների և Ֆրանսիայի խոշոր լրատվամիջոցներից վերցված նմուշը:

Համաձայն ունեցած տվյալների՝ ֆրանսահայերը համարյա 7 անգամ ավելի մեծ հավանականությամբ կմեկնեն Ասիա-Խաղաղօվկիանոսյան տարածաշրջան, քան ամերիկահայերը, թեպետև ամերիկացիներն ավելի մեծ հավանականությամբ կմեկնեն Մոսկվա: Ֆրանսահայերի 27 տոկոսը դասակարգվում է որպես հաճախակի ճանապարհորդներ, ովքեր որոնում են վարձույթով ավտոմեքենաներ, ավիատոսմեր և երկաթուղային տոմսեր և հյուրանոցներ՝ ի տարբերություն ամերիկահայերի 15 տոկոսի, ինչը վկայում է Ամերիկայից ավելի քիչ ճանապար-

հորդությունների մասին: «Google Analytics»-ի տվյալներով՝ ֆրանսահայերն 2,3:1 հարաբերակցությամբ ավելի շատ են կենտրոնացած ընտանիքի վրա, քան մնացած սփյուռքը: Ֆրանսահայերը նույնպես ավելի մեծ հավանականությամբ, քան ամերիկյան հատվածը հաճախակի ընթերցում են նորությունները, թեպետև երկու խմբերն էլ միջինից ցածր ցուցանիշ ունեն: Արտադրանքի համար լավագույն լսարանը որոշելու համար շուկայագետների օգտագործվող կատեգորիաները բերված են ստորև ներկայացվող աղյուսակում՝ նշանակալի միտումներով հանդերձ:

## Աղյուսակ 6

### Հակվածության առանձին կատեգորիաներ, ներշուկայական հատվածներ և այլ կատեգորիաներ

	Միացյալ Նահանգներ	Ֆրանսիա	Ընդհանուր սփյուռք
<b>1. Հակվածության կատեգորիաներ</b>	<b>6,73%</b>	<b>9,53%</b>	<b>4,13%</b>
Հաճախակի ներդրողներ	1,04%	0,56%	0,82%
Բիզնեսի ոլորտի մասնագետներ	6,11%	7,58%	7,62%
Նորությունների հաճախակի ընթերցողներ	10,6%	15,93%	20,8%
<b>2. Ներշուկայական հատվածներ</b>			
<b>Ճանապարհորդություններ</b> (ստորև բերված ուղևորությունները որպես ճանապարհորդությունների ընդհանուր թվի տոկոս) <sup>12</sup>			
- Ասիական-Խաղաղօվկիանոսյան տարածաշրջան	15%	26,5%	18,28%
- Եվրոպա	23,5%	94,4%	51,7%
- Հյուսիսային Ամերիկա	11,3%	4,7%	31,2%
- Մերձավոր Արևելք և Հյուսիսային Ամերիկա	47,4%	0%	6,8%
- Մերձավոր Արևելք և Հյուսիսային Ամերիկա	13,9%	1,0%	8,5%
<b>Կրթություն</b>			
- Օտար լեզուների ուսումնասիրություն	0,46%	0,13%	0,58%
- Ուսման ծրագրեր արտերկրում	0,07%	0%	0,07%
- Միջնակարգից բարձր կրթություն	0,85%	0,14%	0,85%
<b>Անշարժ գույք</b>	<b>3,85%</b>	<b>9,24%</b>	<b>8,53%</b>
<b>Ֆինանսական ծառայություններ</b>	<b>5,29%</b>	<b>17,91%</b>	<b>12,98%</b>
<b>Բանկային ծառայություններ</b>	<b>0,64%</b>	<b>9,06%</b>	<b>5,60%</b>
<b>Զբաղվածություն</b>	<b>6,17%</b>	<b>9,35%</b>	<b>7,30%</b>
<b>3. Այլ կատեգորիաներ</b>			
Լեզվական ռեսուրսներ	0,42%	0,78%	0,54%
Օրենք և կառավարում	3,18%	0,34%	1%
Աշխատանք և կրթություն	1,06%	0,29%	0,91%
Բարձրագույն կրթություն	0,57%	0,15%	0,25%
Նորություններ (Քաղաքականություն)	5,34%	0,87%	5,35%
<b>Սոցիալական ցանցեր</b>	<b>2,46%</b>	<b>2,41%</b>	<b>4,14%</b>

Աղյուսակ՝ Google Analytics:

<sup>12</sup> Ըստ ՄԱԿ-ի «M49» կոդավորման համակարգի՝ Հայաստանը աշխարհագրական առողմով ընդգրկված է Արևմտյան Ասիայի տարածաշրջանում, իսկ առավել լայն իմաստով՝ Ասիա-Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում:

Վերոնշյալ աղյուսակի 1-ին «Հակվածության կատեգորիաներ» բաժնում արտացոլված են այն պայմանները, որոնք «Google Analytics»-ն օգտագործում է օգտատերերին տեսակավորելու և նրանց գովազդ ներկայացնելու համար: Այս տեղեկություններից մենք կարող ենք տեսնել, որ ամերիկացի օգտատերերն ավելի հետաքրքրված են ներդրումային հնարավորություններով, քան միջին սփյուռքահայր, և գրեթե երկու անգամ ավելի հետաքրքրված են, քան ֆրանսիայում բնակվողները: Սփյուռքի ներգրավվածության առումով օգտակար կարող են լինել մի շարք տվյալներ, քանի որ դրանք արտացոլում են անձի հետաքրքրություններուն ու սովորությունները, որոնք չափվում են առցանց գործողություններով, այն է՝

- ▶ Ֆրանսիահայերը երկու անգամ ավելի շատ են հետաքրքրված են լրատվամիջոցներով և վվարձանքով, օրինակ՝ երաժշտությամբ և կինոնկարներով: Այս միջոցների վրա կենտրոնացած մշակութային գործունեությունն ավելի մեծ ուշադրության կարժանանա ֆրանսիայում (20%), քան Ամերիկայի Միացյալ Նահանգներում (7,7%) կամ այլուր (10%):
- ▶ Թեև համարվում է, որ ֆրանսիայում սփյուռքի ներկայացուցիչներն ավելի հաճախ են լուրեր ընթերցում, սակայն Միացյալ Նահանգներում բնակվողներն ավելի շատ են հետաքրքրված գրքերով, քայլ ոչ այդքան երաժշտությամբ ու հեռուստատեսությամբ:
- ▶ Միացյալ Նահանգներում բնակվող սփյուռքը հինգ անգամ ավելի մեծ հավանականությամբ, քան ֆրանսիայում բնակվողները կարդա քաղաքական լուրեր և երկու անգամ ավելի մեծ հավանականությամբ կարդա լուրերի գործնական բաժինը: Այդուհանդեռձ, ֆրանսարևակ սփյուռքն ավելի մեծ հավանականությամբ կարդա ֆիզիկական թերթ, քան ԱՄՆ-ում բնակվողները:

2-րդ բաժնի կամ ներշուկայական հատվածների ներքո քննվում է, թե ինչ են ուսումնասիրում կամ պլանավորում օգտատերերը (Google Ads, 2019թ.): Այստեղ կարող են արտացոլվել այն ապրանքները, որոնք որոնվել են առցանց կամ այն հոդվածները, որոնք կարդացվել են ապրանք կամ ծառայություն գնելու մտադրությամբ:

- ▶ Ֆրանսիայում բնակվողներն ավելի մեծ հավանականությամբ են ձանապարհորդում (26,5%), քան ամերիկացիները (15%): Այնուամենայնիվ, նրանք դժվար թե գնեն վրոսաշրջային փաթեթներ (0,1%), որոնց ամերիկացիներն ու առհասարակ սփյուռքն ավելի շատ են հակված (0,5%):
- ▶ Ամերիկահայերն ավելի մեծ հավանականությամբ համացանցում կինտրեն աշխատանքի խորհրդատվական ծառայություններ կամ խորհրդուներ:
- ▶ Համեմատած Միացյալ Նահանգներում բնակվողների 5 տոկոսի հետ՝ ֆրանսահայերն ավելի մեծ հավանականությամբ (17,9%) կինտրեն ֆինանսական, օրինակ՝ բանկային կամ ներդրումային ծառայություններ:
- ▶ Ամերիկահայերն ավելի մեծ հետաքրքրություն են դրսնորում որևէ օտար լեզու սովորելու հարցում (0,46%), քան ֆրանսահայերը (0,13%) և մի փոքր ավելի մեծ հավանականությամբ կինտրեն արտերկրում ուսանելու ծրագրեր:
- ▶ Ամերիկացիներն ավելի մեծ հավանականությամբ կմեկնեն Իսրայել, որը կապմում է բոլոր ամերիկահայերի դեպի Միջին Արևելք և Հյուսիսային Աֆրիկա ուղևորությունների մեջ երրորդը, քայլ դեպի Իսրայել ողջ սփյուռքի ուղևորությունների ընդամենը մեկ տասներորդը: Իսրայել ուղևորվելու առումով որևէ հետաքրքրություն չի հայտնաբերվել ֆրանսիայի ընթերցողների շրջանում:

Վերլուծական տվյալներն ապահովում են մի քանի հետաքրքրական ցուցանիշներ կապված առանձին ուղղությունների հետ, ինչպիսիք են՝ հսկայելը և Հորդանանք, սակայն Հայաստանը որպես տվյալների կետ առկա չէ: Հետաքրքրի է, որ Եգիպտոս, Հորդանան կամ Լիբանան ուղևորվելու որևէ հետաքրքրություն չի արձանագրվել ամերիկյան կամ ֆրանսիական հատվածներում, սակայն գրանցվել է ամբողջ սփյուռքում: Սա կարող է վկայել հյուսիսամերիկյան և արևմտաեվրոպական սփյուռքների և Մերձավոր Արևելքում բնակվողների միջև սերտ կապի բացակայության մասին:

Եվ վերջապես, 3-րդ բաժնի Աղյուսակ 6-ում ներկայացվում են «Google Analytics»-ի տվյալների առավել թիրախային և հատուկ մակարդակները:

- ▶ Ֆրանսիայի սփյուռքը մի փոքր, այն է՝ 0,78 տոկոսով ավելի շատ է հետաքրքրված լեզվական ռեսուրսներով, քան ընդհանուր սփյուռքը, ինչը կարող է վկայել կաևմ նման ռեսուրսների անհրաժեշտության պակասի, կամ դրանց նկատմամբ հետաքրքրության առկայության մասին:
- ▶ Ամերիկահայերի շրջանում օրենքի և կառավման, ինչպես նաև քաղաքական լուրերի նկատմամբ մեծ հետաքրքրությունը (5%) վկայում է քաղաքականապես ավելի ակտիվ բնակչության մասին, քան Ֆրանսիայում կամ առհասարակ սփյուռքում: Ամերիկացիներին հետաքրքրում են նաև ֆինանսական շուկաները, տնտեսական նորությունները և բիզնեսի բաժինը:
- ▶ Սոցիալական ցանցերի օգտագործումը երկու անգամ ավելի տարածված է ողջ սփյուռքում, քան Ամերիկայի Միացյալ Նահանգներում և Ֆրանսիայում:
- ▶ Ամերիկացիներն ավելի մեծ հավանականությամբ, կիրականացնեն առցանց հետապոտություններ համալսարանների և բարձրագույն կրթության վերաբերյալ, քան մնացած սփյուռքը:

# ԱՆԴԱԴԱՐԾ ՍԻՋՈՒԹՔԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Վերոհիշյալ տվյալները կարող են օգտակար լինել սիյուռքի ներգրավման ցանկացած ռազմավարություն կազմելիս՝ ներդրումային և ֆինանսական ծրագրերի, մշակութային ծրագրերի, զբոսաշրջության զարգացման կամ կապի ոլորտներում։ Օրինակ, դրանով կարող է առաջնահերթություն տրվել տուրիստական փաթեթներին, որոնք կոչված կլինեն նպաստել Հայաստանում ամերիկացիների զբոսաշրջության զարգացմանը, ինչպես նաև առաջարկել սիյուռքի ցանցերից օգտվելու հնարավորություն՝ Միացյալ Նահանգներում թիրախային ներգրավվածության միջոցով աշխատանքային աճի վերաբերյալ խորհրդատվություն ստանալու նպատակով։ Ֆրանսիայում սիյուռքահայության հետ շփումների ընթացքում կարելի է ավելի մեծ ուշադրություն դարձնել մշակույթին և արվեստին, օրինակ՝ երաժշտական փառատոնների միջոցով, կամ էլ նպաստել գիտելիքների փոխանցման նախաձեռնություններին ռադիոյով կամ հայկական կինոփառատոններում գովազդների միջոցով։ Հաշվի առնելով ֆինանսական ծառայությունների նկատմամբ ցուցաբերված հետաքրքրությունը՝ սիյուռքին ուղղված ցանկացած պարտատոմսերի կամ ներդրումային ծրագիր կարող է լավագույս ուղղվել Ֆրանսիայի սիյուռքին, քանի որ երկարաժամկետ ֆինանսական պլանավորման գործիքները (օրինակ՝ գույքը կամ թոշակը) ավելի տարածված են ամերիկացիների շրջանում։ Սիյուռքի ֆինանսական ծրագրերը մշակելիս այդ տվյալները պետք է օգնեն որոշել ֆոկուսային խմբերի և որակական հետապոտությունների ուղղությունները։

«Google Analytics»-ն նաև որոշակի պատկերացում է տալիս սիյուռքի հետ կապ հաստատելու լավագույս միջոցների մասին։ Ֆրանսիացի ընթերցողները երկու անգամ ավելի մեծ հավանականությամբ կնախընտրեն նորություններ ստանալ ֆիկիկական թերթի ձևաչափով, քան ամերիկացիները, ովքեր ավելի մեծ հավանականությամբ կնախընտրեն կաբելային կամ հեռարձակվող նորությունների ձևաչափը։ Ըստ երևոյթին, սոցցանցերն ավելի շատ տարածված են սիյուռքում ԱՄՆ-ից և Ֆրանսիայից դուրս, ընդ որում Ռուսաստանի Դաշնությունում, Եգիպտոսում կամ Լիբանանում սիյուռքի թիրախային ուսումնասիրությունը կարող է հաստատել, որ սոցիալական կայքերը նման խմբերի հետ կապ հաստատելու ավելի լավ միջոց են։ Բացի այդ, հաշվի առնելով հայոց լեզվի նկատմամբ մեծ հետաքրքրությունը և դրա իմացության տարբեր մակարդակները, լեզվի ուսուցման նախաձեռնությունների աջակցությունը և դրանց ընդլայնման ընթացքի խթանումը կարող են ծառայել որպես կապ հաստատելու հեռանկարային եղանակ։

Ֆրանսիայի ընթերցողների շրջանում նկատվում էր ավելի մեծ հետաքրքրություն զբաղվածության նկատմամբ, քան սիյուռքի միջին անդամի մոտ, ինչպես նաև ամերիկացի ընթերցողներից ավելի շատ՝<sup>13</sup> 3:2 հարաբերակցությամբ։ Ընթերցողների բնակման երկրներում գործազրկության մակարդակը մոտավորապես արտացոլում է այս ցուցանիշը (Ֆրանսիայում գործազրկությունը 2019 թվականի երրորդ եռամյակում նվազել է մինչև 8,5 տոկոս, իսկ Միացյալ Նահանգներում՝ 3,6%):<sup>13</sup> Այսուամենայնիվ, երրորդարանությունից պարզ չէ, թե արդյոք «Google»-ի պնդմամբ այս օգտատերերը գործազրուրկ են եղել, թե՛ պարզապես փնտրել են նոր հնարավորություններ (ՏՀԶԿ, 2019թ.): Այսպիսով, հարկ է ուսումնասիրել Ֆրանսիայում և Հայաստանում ընկերությունների և հաստատությունների հետ կարճաժամկետ փոխանակման ծրագրերը։

<sup>13</sup> «Eurostat», Աշխատանքային վիճակագրության բյուրո։

# Սփյուռքի բնութագիր՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներ

Այժմ անցում կատարենք Միացյալ Նահանգների հայկական սփյուռքի ավելի լայն պրոֆիլին՝ «Google Analytics»-ի տվյալների համար ելակետ սահմանելու համար օգտագործելով Ամերիկյան համայնքի հետազոտությունը (ԱՀՀ): Թեև նմուշի չափն ազգային մարդահամարից փոքր է, սակայն ԱՀՀ-ն հավաքում է տարեկան տվյալներ, որոնք սովորաբար ընդգրկված են միայն տաս տարին մեկ անցկացվող մարդահամարում, օրինակ՝ հարցվողի հայտնած ծագումը:

Ստորև բերված գծապատկերում ներկայացված է ԱՄՆ-ի բնակչության ընդհանուր խտության (աջ կողմում՝ նարնջագույնով) և հայազգի բնակչության (ձախ կողմում՝ կապույտով) տարբերությունը: ԱՄՆ ընդհանուր բնակչությունը բաշխված է շատ ավելի հավասարաչափ, քան սփյուռքահայությունը, որը կենտրոնացած է հիմնականում Կալիֆորնիայի հարավում: Բնակության առաջին քաղաքներն են Լոս Անջելեսը, Ֆրեյլոնը և Փասադենան: Սպեկտրի վերջում կարելի է տեսնել հայտնի սփյուռքի կենտրոնը՝ Լոս Անջելեսի արվարձան Գլենդելում, որտեղ ամերիկահայերը կազմում են ընդհանուր բնակչության 15,4 տոկոսը և հանդես են գալիս որպես մեծաթիվ համայնքում ակտիվորեն ներգրավված փոքրամասնություն:

## Գծապատկեր 7 Բնակչության խտություն՝ ամերիկահայ և ազգային



Աղյուր՝ ԱՀՀ, 2013-2017թթ.:

ԱՀՀ-ի գնահատականներով ամերիկահայության ընդհանուր թիվը կազմում է 465 344 մարդ (ԱՀՀ, 2013-2017թթ.): Բնակության քաղաքների առաջին տասնյակից 9-ը գտնվում են Կալիֆորնիայում, ինչպես նշված է Աղյուսակ 7-ում: Վաշինգտոն քաղաքը Կալիֆորնիա նահանգի Լա Կրտեսենտա քաղաքի հետ նույն տեղն է զբաղեցնում: ԱՀՀ-ի թվերի համեմատ՝ «Google Analytics»-ն ներկայացնում է մի փոքր ավելի բարձրական տվյալների պատկեր, ըստ որի բնակության միջև տարբերությունը նահանգներում և քաղաքներում դիտվում է ավելի բարձր: Միացյալ Նահանգների ընդհանուր բնակչության հետ համեմատ՝ հայերն անհամաշափ են ներկայացված և ցուցաբերում են շեշտակի նախապատվություն Կալիֆորնիա և Մասաչուսեթս նահանգների նկատմամբ, ինչպես նշված է Աղյուսակ 8:

## Աղյուսակ 7

## Հայապահ բնակչություն ունեցող 10 ամենամեծ քաղաքները Ամերիկայի Միացյալ Նահանգներում

Ամերիկան համայնքի հետազոտություն	Քաղաք	«Google Analytics» <sup>14</sup>	Ամերիկահայ ընդհանուր բնակչության տոկոս
Գլենդել, Կալիֆոռնիա	15,41%	Լոս Անջելես, Կալիֆոռնիա	29,68%
Հյուսիսային Հոլիվուդ, Կալիֆոռնիա	4,82%	Գլենդել, Կալիֆոռնիա	11,87%
Լոս Անջելես, Կալիֆոռնիա	3,25%	Թեմբրիջ, Մասաչուսեթս	10,46%
Վեն Նայս, Կալիֆոռնիա	2,97%	Կանզաս Սիթի, Միսսուրի	4,91%
Բրոբենիք, Կալիֆոռնիա	2,83%	Նյու Յորք, Նյու Յորք	4,76%
Ֆրեզնո, Կալիֆոռնիա	2,11%	Բրոբենիք, Կալիֆոռնիա	3,32%
Փասադենա, Կալիֆոռնիա	1,99%	Էլ Կախոն, Կալիֆոռնիա	2,79%
Տույունգա, Կալիֆոռնիա	1,41%	Բոստոն, Մասաչուսեթս	1,27%
Լա Կորտենտա, Կալիֆոռնիա	0,96%	Սան Ֆրանցիսկօ, Կալիֆոռնիա	1,24%
Վաշինգտոն, Կոլումբիայի շրջան	0,96%	Վաշինգտոն, Կոլումբիայի շրջան	1,07%

Աղյուս՝ ԱՀՀ, 2013-2017թ., «Google Analytics»:

Ըստ վերլուծական տվյալների՝ ավելի մեծ ներկայություն է դիտվում Կալիֆոռնիայից դուրս գտնվող քաղաքներում, օրինակ՝ Թեմբրիջ, Կանզաս Սիթի և Նյու Յորք քաղաքներում: «Google Analytics»-ի օգնությամբ քաղաքները վերլուծելիս ի հայտ են բերվել մի շարք վիճակագրական սխալմունքներ, որոնք, կարծես, կապված են տվյալների մշակման մեծ կենտրոնացման առկայության հետ, ինչպես նշված է ծանոթագրությունում: 14 Կանզաս Սիթին դժվար թե ունենա ավելի մեծ սփյուռքահայ բնակչություն, քան Նյու Յորքը կամ Վաշինգտոնը, բայց չի կարող ամբողջությամբ բաց թողնվել վերլուծությունից այնտեղ սփյուռքի հայտնի ներկայության պատճառով: Հետաքրքիր է, որ «Google Analytics»-ն և ԱՀՀ-ն գրեթե չեն տարբերվում Վաշինգտոն քաղաքի թվերի առումով, ընդ որում դրանք շատ մոտ են Կալիֆոռնիայի Բրոբենիք և Գլենդել քաղաքներին: Լոս Անջելեսի արվարձանները, որոնք տարբերակված են ԱՀՀ-ում (օրինակ՝ Վեն Նայսը և Հյուսիսային Հոլիվուդը), օգնում են հաշվի առնել ԱՀՀ-ի և «Google Analytics»-ի տվյալների միջև եղած անհամապատասխանությունները:

<sup>14</sup> 7-րդ և 8-րդ այլուսակներից հանվել են մի շարք ավաներ և քաղաքներ, որպես ի հայտ բերված վիճակագրական սխալմունք: Կանզաս նահանգի Թոֆիվիլ քաղաքը բերված է «Ապագա օգտագործում» բաժնում (տես էջ 19) որպես «Google»-ի տվյալների սխալ, մինչդեռ Վիրջինիա նահանգի Էշբրոն քաղաքում, ըստ ունեցած տեղեկությունների, տեղակայված է Միացյալ Նահանգների ամենամեծ տվյալների սերվերներից մեկը: Հաշվի առնելով դրա հարեւանությունը Վաշինգտոն քաղաքին, ամենայն հավանականությամբ, Էշբրոն ունի հայագիտ բնակչություն, ասկայև հաշվի առնելով այլ աղյուրներից դրա զգալի շեղումը, մենք ցանցային երթևեկությունը սահմանում ենք որպես անկանոն: Նմանապես, Փենսիլվանիա նահանգի Դեվոլտ և Օրեգոն նահանգի Բորդման քաղաքները բաց են թողնվել, քանի որ այնտեղ կան տվյալների մեծ կենտրոններ՝ բնակչության անհամաշափ գնահատականներով: Դժբախտաբար, Լոս Անջելեսում նույնպես տեղակայված են տվյալների խոշոր կենտրոններ, թեպես մեկ չհաջողվեց դրանք նույնականացնել և բացառել վերլուծությունից:

## Աղյուսակ 8

## ԱՄՆ-ի 10 նահանգներն ամենամեծ հայազգի բնակչությամբ

Ամերիկյան համայնքի հետապոտություն	«Google Analytics»		
Նահանգ	Ամերիկահայ ընդհանուր բնակչության տոկոս	Նահանգ	Ամերիկահայ ընդհանուր բնակչության տոկոս
Կալիֆոռնիա	<b>59,78%</b>	Կալիֆոռնիա	<b>59,50%</b>
Մասաչուսեթս	<b>6,12%</b>	Մասաչուսեթս	<b>13,54%</b>
Նյու Յորք	<b>4,56%</b>	Նյու Յորք	<b>6,05%</b>
Ֆլորիդա	<b>2,59%</b>	Միսսուրի	<b>5,18%</b>
Նյու Ջերսի	<b>2,35%</b>	Վերջինիա	<b>1,56%</b>
Միչիգան	<b>2,35%</b>	Նյու Ջերսի	<b>1,55%</b>
Փենսելվանիա	<b>1,95%</b>	Տեխաս	<b>1,44%</b>
Տեխաս	<b>1,49%</b>	Վաշինգտոն	<b>1,19%</b>
Վաշինգտոն	<b>1,37%</b>	Կոլումբիայի շրջան	<b>1,07%</b>
Վերջինիա	<b>1,36%</b>	Փենսելվանիա	<b>1,05%</b>

Աղյուր՝ ԱՀՀ, 2013-2017թթ., «Google Analytics»:

«Google Analytics»-ի թվերը բավականին լավ են արտացոլում պաշտոնական վիճակագրությունը, մասնավորապես՝ Կալիֆոռնիա, Տեխաս, Վաշինգտոն և Վերջինիա նահանգներում: Նահանգային մակարդակով Միացյալ Նահանգներում հայկական սփյուռքի կեսից ավելին ապրում է Կալիֆոռնիայում, որին հաջորդում են Մասաչուսեթս և Նյու Յորք նահանգները՝ ըստ ԱՀՀ-ի և «Google Analytics»-ի տվյալների: Հետաքրքիր է, որ ցանցային երթևեկությունը վկայում է Մասաչուսեթսում պաշտոնականից երկու անգամ ավելի մեծ կենտրոնացման մասին, իսկ Ֆլորիդա նահանգում ցույց է տալիս ԱՀՀ-ի թվի կեսից էլ ավակաս (1,01%): Միսսուրին, կարծես, զգալիորեն գերազանցում է պաշտոնական տվյալները՝ արտացոլելով ավելի բարձր արդյունքները Կանզաս Սիթիում:

Երկրում սփյուռքի գործունեության օջախներ հանդիսացող Գլենդելը Կալիֆոռնիայում և Ուոթերթափունը Մասաչուսեթսում համարվում են հիմնական կենտրոններ, որտեղ գտնվում են սփյուռքի մի շարք կազմակերպությունների գլխամասերը: Այլ նշանավոր համայնքներից են Վաշինգտոնի (0,96%), Նյու Յորքի (0,89%), Լաս Վեգասի (0,69%), Ֆիլադելֆիայի (0,33%), Դիկագոյի (0,26%) և Սիեթլի (0,25%) համայնքները: (ԱՀՀ, 2013-2017թթ):

## Նյու Յորք

Նյու Յորքի սփյուռքի բնակչությունը արտացոլում է ինչպես այս մետրոպոլիայի, այնպես էլ հենց բուն սփյուռքի բազմազանությունը: ԱՀՀ-ի միջոցով փոստային կոդով վերլուծությունը ցույց է տալիս ամենաբարձր ներկայությունը (0,16%) Բրուքլինի Բրայթոն Բիչ թաղամասում, որը նախկին Խորիրուային Միությունից ներգաղթյալների պատմականորեն մեծ թվաքանակ ունեցող տարածք է:<sup>15</sup> Հաջորդ ամենամեծ խումբը հայտնվում է Մանհեթենում՝ հարուստ վերին հսկ Էնդ թաղամասում և կազմում է 0,05 տոկոս:

### Աղյուսակ 9

### Նյու Յորք քաղաքում հայկական թաղամասերի սոցիալ-տնտեսական բնութագրերը

Փոստային կոդ	Թաղամաս	Հայազգի բնակչություն	Ընդհանուր հայազգի բնակչության տոկոսն ԱՄՆ-ում	Արտասահմա- նում ծնվածնե- րի տոկոս	Եկամտի միջին մակարդակ	Միջին ամսա- կան բնակա- րանային ծախսերը (պրադեցրած բնակարաններ)
11 235	Բրայթոն Բիչ, Բրուքլին	1,328	0,29%	63%	49 653 ԱՄՆ դոլար	1 241 ԱՄՆ դոլար
10 021	Լենոքս Հիլ Մանհեթեն	408	0,09%	22%	123 842 ԱՄՆ դոլար	2 110 ԱՄՆ դոլար


Աղյուր՝ Ամերիկյան համայնքի հետազոտություն, 2017թ.:

Նյու Յորք քաղաքը խիստ բազմազան է, քանի որ քաղաքի բոլոր թաղամասերում ներկայացված են նոր ու հին ներգաղթյալ համայնքներ: Թեև Նյու Յորքն ունի շատ էթնիկական անկյալներ, օրինակ՝ հսպանական Հարլեմը, Չայնաթաունը և այլն, սակայն Փոքրիկ Հայաստանը (հսկ Սայդի 62-րդ փողոցին ներքն), որը հայտնի է նաև որպես Մյուրեյ Հիլ, ավելի քիչ է արտահայտված, քան Լու Անժելեսի Փոքր Հայաստանը՝ պակաս ինստիտուցիոնալ և մշակութային արտաքին ներկայությամբ: Համայնքի բազմատեսակ գործունեությունը կենտրոնացած Մուրեյ Հիլի սուրբ Վարդան Մայր տաճարի շուրջ, իսկ հարցվածները նշում են այդ հուշարդանը և դրա հայտարարությունների տախտակները որպես քաղաքով իրենց երթուղու սովորական վայր: Ի տարբերություն դրա՝ Լու Անժելեսի հայկական թաղամասերն անմիջապես տեսանելի են արտաքին դիտողին, քանի որ անհնար է այցելել Գլենդել արվարձան և չնկատել հայերենով փողոցային նշանները, եկեղեցիները, մսավաճառների խանութները, փուռերը և փողոցային արվեստը:

Առավել մարդաշատ հայկական բնակչությունը, որը ներկայացված է ըստ Մեծ Նյու Յորքի թաղամասերի և Նյու Զերսի ու հարակից որոշ տարածքների, գտնվում է Բրուքլինի հարավարևմտյան ծայրամասում՝ Բրայթոն Բիչի փոստային կոդի տարածքում: Քանի որ Բրայթոն Բիչը հետխորհրդային միգրանտների շրջանում սիրված և հայտնի թաղամաս է, այստեղ կարելի է գտնել ավելի նոր սփյուռքի ներկայացուցիչների, ովքեր ավելի շատ ընտանեկան կապեր ունեն Հայաստանի հետ, քան Կալիֆորնիայի կամ Մասաչուսեթսի հին բնակավայրերում ապրողները: Կարելի է նաև նշել հայազգի բնակչությունը Բուլինսոն, Բրուքլինում և Վերին Վեսթ Սայդում, ինչպես նաև Նյու Զերսի Քլիֆսայդ Դարկ շրջանում:

<sup>15</sup> 2017 թվականի դրույթամբ Բրայթոն Բիչ թաղամասը, որի փոստային կոդն է 11235, ունեցել է 63% արտասահմանում ծնված բնակչություն: Ըստ ունեցած տեղեկությունների՝ թաղամասի բնակչությունը 16%-ն ունեն ռուսական ծագում, իսկ 10%-ը՝ ուկրաինական: (ԱՄՆ մարդահամարի բյուրո, 2013-2017թթ. բնակչության հիմքամայնականներ)

## Գծապատկեր 8 Նյու Յորքի իր արվարձաններով, հայազգի բնակչություն




Աղյուր՝ ԱՀՀ, 2013-2017թթ.:

## Բոստոն և Լոս Անջելես (Ուոթերթառուն և Գլենդել)

Սփյուռքի կազմակերպությունների, թանգարանների և տպագիր հրապարակումների ճշշող մեծամասնությունը կարելի է գտնել պատմականորեն հայկական Գլենդել և Ուոթերթառուն քաղաքներում: Երկու քաղաքներում էլ գործում են խոշոր համալսարաններ, որոնք ուղղված են Ուոթերթառունի մերձակայքում գտնվող Բոստոն և Քեմբրիջ քաղաքների, իսկ Գլենդելի մերձակայքում (թեաթետ ավելի փոքր չափով) Լոս Անջելեսի երիտասարդ բնակչությանը: Թեև այս երկու քաղաքային գոտիներն էլ իրենց արվարձաններով լավ կապակցված են, սակայն մինչև 35 տարեկան հարցվածների շրջանում դիտվել է միտում, ըստ որի նրանց 87 տոկոսն ունի այս պատմական տարածքներում բնակող ընտանիքի անդամներ, իսկ մնացածներն ընտանիքի անդամներ ունեն միևնույն նահանգի այլ քաղաքներում կամ արվարձաններում: Այս ենթախմբի հարցվածներն իրենք չեն բնակվում այդ տարածքներում: Այս հանգամանքը կարելի է բացատրել Լոս Անջելեսում ապրուատի և սեփական տուն ունենալու հետ կապված մեծ ծախսերով, ինչպես նաև նրանով, որ Ուոթերթառուն իր բնույթով արվարձան է, որտեղ ավելի քիչ թվով երիտասարդներ են բնակություն հաստատում:

Երկու քաղաքներում էլ հարցվածներն ունեն խիստ խառը ծագման նախապատմություն և ներգրավվածություն Հայաստանում, ըստ որում Լոս Անջելեսում դիտվել է Մերձավոր Արևելքի երկրներից, օրինակ՝ Սիրիայից և Իրանից, նոր սփյուռքի ավելի մեծ թվաքանակ: Երկու քաղաքների և տարիքային խմբերի միջև դիտված գլխավոր ընդհանրությունը որևէ ընդհանրության բացակայությունն է: Հարցարույցներ են անցկացվել առաջին և երկրորդ սերնդի միգրանտների հետ՝ հավասար հարաբերակցությամբ: Բացի այդ, համեմատելի հարաբերակությամբ հարցարույցներ են անցկացվել նրանց հետ, ովքեր չեն նշել, թե երբ է երկիր ժամա-


## Գծապատկեր 9 Բուստոնի տարածք, հայակա բնակչություն



Աղյուր՝ ԱՀՀ, 2013-2017թթ.:

Նել իրենց վերջին նախնին: Ընդհանուր առմամբ, իրենց մասնագիտական կյանքի սկզբնական և ավարտական փուլերում գտնվող տղամարդիկ և կանայք առավել հետաքրքրված էին սփյուռքի գործերով, ըստ որում նրանք, ովքեր ունեին կայուն աշխատանք, չեն ձգտում իրենց կյանքը հարստացնող այլ գործողությունների՝ առանձնապես օգուտ չտևսելով ներգրավվածության մեջ:

## Գծապատկեր 10 Լոս Անջելեսի հայկական համայնքներ



Աղյուր՝ ԱՀՀ, 2013-2017թթ.:

## Սփյուռքի բնութագիր՝ Ֆրանսիա

Փոքրիկ Հայաստաններ կան Ֆրանսիայի գրեթե բոլոր խոշոր քաղաքներում, որոնք հեշտովաճամբ կարելի է ճանաչել մթերային խանութներից, դպրոցներից և հաճախ կրոնական բնույթի շենքերից: Փարիզի արվարձաններից մեկում՝ Ալֆորվիլում կա հայալեկու ռադիոկայան, հրատարակություններ, դպրոցներ և եկեղեցիներ, իսկ տեղի բնակչությունը համեմատելի է Մասաչուսեթս նահանգի Ուոթերթաուն քաղաքի հետ: Թեև Ֆրանսիայում ապրող սփյուռքահայերի մեծ մասը Ֆրանսիայի քաղաքացիներ են և ներգրավված չեն հայկական ծրագրերում, սակայն առանձին թաղամասեր (օրինակ՝ Լիոնի Դեսին և Մարսելի Բումոն թաղամասերը) շարունակում են մնալ համայնքային կենտրոններ:


Ֆրանսիայի «Փոքրիկ Հայաստան» թաղամասերը զգալիորեն տարբերվում էն Ամերիկայի Միացյալ Նահանգների նմանատիպ թաղամասերից: Թեև սփյուռքի քարձը ներկայություն ունեցող քաղաքներում, օրինակ՝ Ֆրանսիայի Մարսել և ԱՄՆ-ի Գլենդել քաղաքների սփյուռքի համայնքները կազմակերպվում են քաղաքական և համայնքային հարցերի շուրջ, սակայն ամերիկյան անկյան ստվորաբար ավելի հեշտ է ճանաչել տեսքից: Երկու քաղաքներն էլ ունեն հայկական անուններով հիմնական փողոցներ, օրինակ՝ Արարատ պողատան, թեաթուն հայոց լեզուն և գրեթոն ավելի ցայտուն կերպով ցուցադրված են Ամերիկայի Միացյալ Նահանգներում: Դա կարող է մասամբ պայմանավորված լինել սփյուռքի օջախների մեծ տարածվածությամբ Ամերիկայի Միացյալ Նահանգներում, որտեղ հինդի, չինարեն կամ կորեերեն գրերով ավելի խոշոր սփյուռքի համայնքների փողոցային նշանները և խանութների վահանակները հաճախ ճամփա են հարթում այլ փոքրամասնությունների ներկայացվածության համար: Հայագի մեծ բնակչություն ունեցող Ֆրանսիական և Եվրոպական քաղաքներում սովորաբար որևէ վայրի կամ ձեռնարկության անվանումը նախ նշվում է տեղի լեզվով և միայն դրանից հետո օգտագործվում են հայոց գրերը, հայոց եռագույնը կամ էլ խանութների անվանումները հայերեւն տառադարձությամբ: Սա կարելի է բացատրել նաև Ֆրանսիայում 1994 թվականին ընդունված օրենքի պահանջով, համաձայն որի հաստատված անվանումը ֆրանսերեն լեզվով դրվի առաջին տեղում՝ այլ լեզուներով թարգմանություններից առաջ:<sup>16</sup>

<sup>16</sup> Տուրոնի օրենք, կամ օրենք 94-665, ընդունված 1994թ օգոստոսի 4-ին:

---

**Գծապատկեր 11 Ֆրանսիայում հայազգի բնակչության բաշխում ըստ  
Երկրամասի, աղբյուր՝ Ֆրանսիայի «Սպիտակ էջեր» տեղեկատու**


---



Աղբյուր՝ ԱՀՀ, 2013-2017թթ.:

Տարածաշրջանային մակարդակով հայազգի ամենամեծ բնակչությունը գտնվում է Օվրեն-Ռոն-Ալպեր երկրամասում, որտեղ ապրում է Ֆրանսիայի ընդհանուր բնակչության 14,4 տոկոսը: Ցրվածությունը որոշ չափով հետևում է Ֆրանսիայի ընդհանուր վիճակագրական տվյալներին, ըստ որոնց Օվրեն-Ռոն-Ալպերը Ֆրանսիայի երկրորդ ամենամարդաբնակ երկրամասն է Իլ դը Ֆրանսից հետո: Թեև Փարիզ (երկրամաս՝ Իլ դէ Ֆրանս) և Մարսել (երկրամաս՝ Պրովանս-Ալպեր-Լազուր ափ) քաղաքներն ունեն ամենամեծ բնակչությունը՝ 0,63 տոկոս և 0,24 տոկոս, սակայն Ֆրանսիայի մեծ արևելքում հայկական անունների տարածվածությունը հատկանշական է, քանի որ դա երկրի չափով 6-րդ ամենաբնակեցված տարածաշրջանն է:

## Գծապատկեր 12 Ֆրանսիայում հայագիտական շրջանի և երկրամասի, աղբյուր՝ Ֆրանսիայի «Սպիտակ էջեր» տեղեկատու



Աղբյուր՝ «Սպիտակ էջեր» տեղեկատու:

Ըստ վարչական շրջանի, որը Ֆրանսիայում հաջորդ տարածքային միավորն է, Բուշ դյու Ռոն վարչական շրջանը (ընդգրկում է Մարսել քաղաքն իր արվարձաններով) հանդես է գալիս որպես բնակչության ամենամեծ համակենտրոնացում՝ 8,3 տոկոսի չափով, որին հաջորդում է Փարիզը՝ 7,9 տոկոսի չափով (75-րդ վարչական շրջան): Ինչպես քաղաքային, այնպես էլ թաղամասային մակարդակով Մարսելի քարտեզագրումն ըստ «Սպիտակ էջեր» տեղեկագրի հաստատում է մի շարք ավանդական թաղամասեր, ինչպիսիք են՝ 15-րդ, 13-րդ և 12-րդ թաղամասերը: Այս նաև ենթադրում է, որ համեմատելի բնակչություն ապրում է հյուսիսի Էքս ան Պրովանս երկրամասում, որտեղ արձանագրվել են նոյն թվերը, ինչ Մարսելի 8-րդ, 9-րդ և 11-րդ թաղամասերում:

Այս դեպքերում, եթե վարչական շրջաններում ու երկրամասերում երևում են ավելի մեծ քանակային տարբերություններ, «Սպիտակ էջեր» տեղեկատուի անվանաբանական վերլուծությունը կատարված է այս դեպքում:

## Աղյուսակ 10 Հայագիտական բնակչություն ունեցող 10 ամենամեծ քաղաքները Ֆրանսիայում

Ֆրանսիայի «Սպիտակ էջեր» տեղեկատու			«Google Analytics»		
Քաղաք	Գնահատական	Ֆրանսիայի բնակչության ընդհանուր տոկոս	Քաղաք	Գնահատական	Ֆրանսիայի բնակչության ընդհանուր տոկոս
Փարիզ	4 470	0,87%	Փարիզ	45 034	64,59%
Մարսել	3 979	0,77%	Լիոն	2 756	3,95%
Լիոն	1 147	0,22%	Կոլոն	2 547	3,51%
Թուլուզ	711	0,14%	Մարսել	2 445	2,21%
Ալֆորվիլ	476	0,09%	Ստրասբուրգ	1 540	1,46%
Նանտ	443	0,09%	Լիլ	927	1,09%
Վիլյորբան	436	0,09%	Լա Ռոշ այուր Ֆոն	855	0,95%
Էքս ան Պրովանս	435	0,09%	Ալֆորվիլ	800	0,80%
Վալանս	375	0,07%	Նիցցա	758	0,69%
Լիլ	373	0,07%	Շալան	752	0,67%


Աղբյուր՝ «Սպիտակ էջեր», «Google Analytics»:

Նը քաղաքային մակարդակով ի հայտ է բերել նմանատիպ բաշխում (յուրաքանչյուր քաղաքում 1 տոկոսից պակաս) հայ անուններ ունեցող անձանց և ընդհանուր բնակչության շրջանում: Քանակական տվյալները զգալիորեն ուղճացված են Փարիզում («Google Analytics»-ի համաձայն՝ 45 034, իսկ «Սպիտակ էջեր» տեղեկագրի համաձայն՝ 4 470), սակայն դրանք կրկին համապատասխանում են (Մի քանի հազարի սահմաններում) «Սպիտակ էջեր» տեղեկատուի թվերին Մարտելի և Լիոնի պես խոշոր քաղաքային կենտրոններում: Առաջիններից «Google Analytics»-ն հայտնաբերել է հետաքրքրաշարժ շեղումներ Ստրասբուրգ, Լա Ռոշ սյուր Ֆոն և Շալան քաղաքներում (տեսաԱղյուսակ 10):

## Փարիս

Փարիզի Աֆորվիլ արվարձանում գտնվող հայկական գաղթօջախն արտացոլված է քաղաքի սահմաններից դուրս առաջին փոստային կողով, որտեղ ապրում է 476 մարդ, որոնց հաջորդում է 15-րդ թաղամասը (461 մարդ): Փարիզն իր արվարձաններով հայտնի չէ էթնիկական թաղամասերով, սակայն համարվում է, որ 9-րդ թաղամասում ապրում է մեծ հայկական համայնք: Մեր տվյալներում 9-րդ թաղամասն արտացոլված է որպես Փարիզում հայկական բնակչությամբ 11-րդ փոստային կողով և կազմում է Ֆրանսիայի ընդհանուր բնակչության ընդամենը 0,13 տոկոսը, թեպետև սփյուռքի մի շարք մշակութային հաստատություններ գտնվում են հենց այս տարածքում: 15-րդ թաղամասում չկան հայկական թաղամասի որևէ արտաքին հատկանիշներ, չնայած այստեղ կա ավելի մեծ ներգաղթային համայնք, որի բնակչության 20 տոկոսը ծնվել է Ֆրանսիայի սահմաններից դուրս: Սա կարող է վկայել արտերկրում ծնված նոր սփյուռքի ներհոսքի մասին կամ պարզաբես կարող է լինել ընդհանուր տների շուկայական գներով պայմանավորված ընդհանուր միտում:

### Գծապատկեր 13 Փարիզի հայկական համայնքը




Աղյուր՝ «Սպիտակ էջեր» տեղեկատու:

## Մարսել և Լիոն


Մարսելի տվյալները հաստատում են 12-րդ, 13-րդ և 15-րդ թաղամասերի Բումոն, Սեն Ժերոմ և Սեն Անտուան թաղերի, ինչպես նաև դրանցից դուրս՝ եթև ան Պրովանս երկրամասի Լե Տոլոնե համայնքի տվյալները: Սփյուռքի այս թաղամասերը հաստատված են ֆրանսիայում հայերի վերաբերյալ գրականության մեջ (Belmonte, 1999թ., Temime, 2007թ., Le Tallac, 2001թ. և Hovanessian, 1988թ.) և նկատելիորեն շեղվում են ընդհանուր բնակչության կենտրոնացումներից: Լիոնի վերլուծությունը, որը բերված է Գծապատկեր 15, վկայում է սփյուռքի բարձր կենտրոնացումների մասին Վիլյորբանում և Դեսինում՝ համեմատած յուրաքանչյուր տարածքում ընդհանուր բնակչության 0,04 տոկոսի և 0,01 տոկոսի հետ: Հետևաբար, թեև Փարիզի թաղամասերը հիմնականում հետևում են ընդհանուր բնակչությանը գուգահեռ քաղաքային միտումներին, սակայն Մարսելի և Լիոնի պես համայնքներում ի հայտ են գալիս նախապատվություններ:

### Գծապատկեր 14 Մարսելի հայազգի բնակչությունը



Աղյուր՝ «Սպիտակ Էջեր» տեղեկասով:

## Գծապատկեր 15 Լիոնի հայազգի բնակչությունը



Աղբյուր՝ «Սպիտակ էջեր» տեղեկատու:

## ԱՆԴԱԴԱՐԾ ԱՎՋՈՒԹՔԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Աշխարհագրական տվյալները հաստատում են շատ քաղաքներ և ավաններ, որոնք հայտնի են սփյուռքի մեջ ներկայությամբ, օրինակ՝ Ալֆորվիլ, Գլենդել, Ուտթերթաուն և Մարսել քաղաքները: Աշխարհագրության առումով Միացյալ Նահանգների կամ Ֆրանսիայի վերաբերյալ ոչ մի էական անակնկալ կամ վիճակագրական սխալմունք չի հայտնվել:

Գերմանիայում, Իսպանիայում, Բելգիայում և Կանադայում սփյուռքի նախաձեռնությունները պետք է արժանանան ավելի մեծ ուշադրության, իսկ դրանց պատրաստումը պետք է ուսումնասիրվի ֆրանսիայի նախաձեռնությունների հետ զուգահեռ: Բացի այդ, քանի որ չնայած վերջին տարիների վատ տնտեսական հեռանկարներին և ռուբլու արժեվրկմանը սփյուռքի ներկայությունը Ռուսաստանի Դաշնությունում շարունակում է մնալ բարձր, ուստի պետք է ընդլայնվի Ռուսաստանի Դաշնությունում սփյուռքի հետ կապը և ուսումնասիրությունները: Քանի որ Ռուսաստանի Դաշնությունում տնտեսական և ինստիտուցիոնալ մարտահրավերները հաճախ ավելի սերտորեն առնչվում են Հայաստանի Հանրապետության Խնդիրներին, քան ֆրանսիական կամ ամերիկյան փորձին, ուստի փորձի և գիտելիքների փոխանցման նախաձեռնությունները պետք է իրականացվեն նաև Ռուսաստանի Դաշնությունում:

## Հմուտ սփյուռք

Քանի որ հմուտ սփյուռքի մեր երկու հիմնական տվյալների շտեմարանները («ZoomInfo» և «ORCID») ապահովում են հատիկավորության և մանրամասների տարբեր շերտեր, ուստի դրանք այստեղ վերլուծվում են առանձին: «Զեռնարկությունից ձեռնարկություն» սկզբունքով գործող տվյալների շտեմարանը տրամադրում է գրառումներ նրանց մասին, ովքեր հիմնականում աշխատում են մասնավոր հատվածում: Ընկերությունները շահույթ հետապնդող, մրցակցային և հաճախ շուկայական պայմաններով առաջնորդվող կազմակերպություններ են: Այս տվյալների մեջբերումը դյուրացնելու համար դրանք քննարկելիս մենք օգտագործում ենք «մասնագետներ» եկրույթը: Նմանապես, քանի որ «ORCID»-ի տվյալների շտեմարանում ներկայացված են հիմնականում բարձրագույն կրթության ոլորտներում հետազոտողների և գիտնականների գրառումները, ուստի այս տվյալները դասվում են «ակադեմիական հանրության» շարքը, թեպետև ակադեմիական վերլուծության շրջանակներում հարկ է հաշվի առնել նաև շահույթ հետապնդող քոլեջներն ու ինստիտուտները:

## Մասնագետներ

Մասնագիտական համայնքում բնակության համար առաջին երկրներն են՝ ԱՄՆ-ն, Հայաստանը, Կանադան, Միացյալ Թագավորությունը, Ավստրալիան, Ֆիլիպինները, Ռուսաստանի Դաշնությունը և Հնդկաստանը: ԱՄՆ-ի գրանցված տվյալները կազմում են հայագիշտական անունների 67,7 տոկոսը, որոնք հիմնականում կենտրոնացած են գործառնական և բժշկական մասնագիտությունների ոլորտներում:

## Ուղղություններ

### Աղյուսակ 11

### Մասնագիտությունների քաշխում ամբողջ Երկրում, հմուտ մասնագետներ

Մասնագիտություն	Երկիր							
	Միացյալ Նահանգներ	Հայաստան	Կանադա	Միացյալ Թագավորություն	Աստրալիա	Ֆիլիպիններ	Ռուսաստան	Հնդկաստան
Խորհրդի անդամներ	3,40%	0,17%	0,27%	0,10%	0,07%	0,02%	0,03%	0,01%
Խորհրդատվություն	2,45%	0,19%	0,27%	0,25%	0,17%	0,08%	0,07%	0,06%
ճարտարագիտական և տեխնիկական ոլորտներ	9,17%	1,59%	0,73%	0,37%	0,27%	0,25%	0,17%	0,28%
Ֆինանսներ	8,93%	1,30%	0,80%	0,47%	0,34%	0,20%	0,18%	0,06%
Ընդհանուր կառավարում	6,04%	0,63%	0,50%	0,28%	0,17%	0,05%	0,16%	0,05%
Մարդկային ռեսուրսներ	2,48%	0,18%	0,25%	0,13%	0,07%	0,12%	0,03%	0,05%
Իրավական ոլորտ	3,14%	0,26%	0,21%	0,14%	0,10%	0,02%	0,07%	0,01%
Շուկայավարում	3,07%	0,45%	0,29%	0,24%	0,14%	0,08%	0,11%	0,03%
Բժշկություն և առողջություն	9,26%	0,16%	0,42%	0,24%	0,17%	0,04%	0,03%	0,02%
Գործառույթներ	10,86%	0,83%	1,01%	0,60%	0,45%	0,29%	0,17%	0,12%
Վաճառք	6,99%	0,49%	0,65%	0,44%	0,30%	0,20%	0,18%	0,09%
Գիտնականներ	1,92%	0,24%	0,15%	0,10%	0,05%	0,03%	0,02%	0,02%
<b>Ընդամենը</b>	<b>67,71%</b>	<b>6,49%</b>	<b>5,55%</b>	<b>3,35%</b>	<b>2,31%</b>	<b>1,39%</b>	<b>1,20%</b>	<b>0,80%</b>

Աղբյուր՝ «ZoomInfo»:

Ըստ Երկրների՝ բժշկական ոլորտի մասնագետների ավելի քան մեկ Երրորդն աշխատում է Ամերիկայի Միացյալ Նահանգներում, ևս մեկ Երրորդ՝ Հայաստանում: Միջուկային ֆիզիկոսները նոյնպես կենտրոնացած են Հայաստանում, որից հետո նման մասնագետների համար մրցում են ԱՄՆ-ն և Ռուսաստանի Դաշնությունը: Բացի այդ, Միացյալ Նահանգներին բաժին է ընկնում սփյուռքի ինժեներների, քիմիկոսների և SS ոլորտի մասնագետների կեսը: Ռուսաստանի Դաշնությունում բնակվում է հայկական ծագմամբ իրավաբանների, արվեստագետների և պատմության դասախոսների մեծ մասը: Բացի այդ, Երեք հիմնական նպատակակետ Երկրներից՝ Միացյալ Թագավորության, Կանադային և Գերմանիային բաժին են ընկնում սփյուռքի տաղանդավոր անդամների հաջորդ ամենաբարձր տոկոսը՝ հիմնականում բժշկական և ֆիզիկայի ոլորտներում, թեպետև հսրայելը գրավիչ է եռել հայ ինժեներների մոտավորապես մեկ Երրորդի համար: Ըստ գտնվելու վայրի՝ առավել ցրված պատկեր ունեն ճարտարագիտական մասնագիտությունները, որոնց հաջորդում են գործառնական մասնագիտությունները:

**Աղյուսակ 12****Նպատակակետ նահանգներ և գավառներ,  
հմուտ մասնագետներ**

«ZoomInfo»			Ամերիկյան համայնքի հետազոտություն		
Նահանգ	Գնահատական	Ընդհանուր տոկոս	Նահանգ	Գնահատական	Ընդհանուր տոկոս
Կալիֆոռնիա	44 343	20,62%	Կալիֆոռնիա	254 262	55,76%
Նյու Յորք	15 042	6,91%	Մասաչուսեթս	30 588	6,71%
Տեխաս	9 579	4,35%	Նյու Յորք	26 366	5,78%
Ֆլորիդա	7 850	3,59%	Նյու Ջերսի	15 984	3,35%
Մասաչուսեթս	7 773	3,55%	Միչիգան	14 062	3,08%
Օնտարիո, Կանադա	7 767	3,38%	Ֆլորիդա	12 249	2,69%
Փենսելվանիա	7 261	3,30%	Փենսելվանիա	9 485	2,08%
Իլինոյս	7 047	3,24%	Իլինոյս	8 869	1,94%
Օհայո	5 359	2,44%	Վաշինգտոն	7 629	1,67%
Միչիգան	4 650	2,10%	Տեխաս	7 447	1,63%

Աղյուս «ZoomInfo» և ԱՀՀ, 2013-2017թթ.:

Քանի որ տվյալների շտեմարանում ընդգրկված մեր մասնագետները հիմնականում (67,7%) գտնվում են Միացյալ Նահանգներում, ուստի մենք վերևում տրամադրում ենք բնակության հիմնական նահանգները, ինչպես նաև Կանադայի մեկ նահանգ: Միացյալ Նահանգներից հետո ամենամեծ բաժինը ընկած է Ավստրալիային, Կանադային և Մեծ Բրիտանիային: Ինչպես վերևում նշվեց, «ZoomInfo» տվյալների շտեմարանում գերակշռում են արևմտյան երկրները:

Աղյուսակ 12 ներկայացված «ZoomInfo»-ն համեմատվում է Ամերիկյան համայնքային հետազոտության հետ, որը վերցվել է վերը նշված Աղյուսակ 8: Երկու տվյալների շարքերի համեմատությունից մենք կարող ենք տեսնել, որ Կալիֆոռնիան պահպանում է սփյուռքի ամենամեծ բնակչություն ունեցող նահանգի դիրքը: ԱՀՀ-ն ցույց է տալիս ավելի մեծ կենտրոնացումներ Մասաչուսեթս և Նյու Ջերսի նահանգներում, քան նշված «ZoomInfo» տվյալների շտեմարանում, բայց կարևոր է նշել, որ մարդահամարը պարունակում է գրառումներ աշխատություն մաս չկազմող թոշակառու և երիտասարդ բնակչության վերաբերյալ: Սա կարող է վկայել այն մասին, որ Կալիֆոռնիայում և Մասաչուսեթսում կա չաշխատող տարիքի ավելի մեծ սփյուռքի բնակչություն, թեպես Ֆլորիդայի, Միչիգանի և Նյու Յորքի թվերը համեմատաբար կայուն են երկու տվյալների շտեմարաններում:

## Մասնագիտություններ

### Աղյուսակ 13

### Մասնագիտություններ ըստ հայագի մասնագետների և ընդհանուր բնակչության, հմուտ մասնագետներ

Մասնագիտություն	Հայագի	Բոլոր ծագումների
Գործառնական ոլորտ	16,38%	18,51%
ճարտարագիտական և տեխնիկական ոլորտներ	14,78%	17,13%
ֆինանսներ	13,79%	11,10%
Վաճառք	10,82%	12,55%
Բժշկություն և առողջություն	10,77%	8,16%
Ընդհանուր կառավարում	8,94%	8,44%
Շուկայավարում	5,35%	5,66%
Իրավական ոլորտ	4,22%	3,21%
Խորհրդի անդամներ	4,22%	3,98%
Խորհրդատուններ	4,14%	4,94%
Մարդկային ռեսուրսներ	3,70%	3,39%
Գիտնականներ	2,89%	2,93%
Ընդամենք	100%	100%

Աղյուր՝ «ZoomInfo»:

Տվյալների շտեմարանում որպես հայկական նույնականացված շարքը մասնագիտությունների առումով սերտորեն համապատասխանում է ամբողջական տվյալների շտեմարանին: Մասնագիտությունների շարքում առաջին տեղերն են վրարեցնում գործառնական, ճարտարագիտական և տեխնիկական, ինչպես նաև ֆինանսների և վաճառքի ոլորտները: Հայերն ավելի մեծ հավանականությամբ ներկայացված կլինեն բժշկական ոլորտներում, քան տվյալների շտեմարանում ընդգրվկած մնացած անձինք, և ավելի հավանական է, որ նրանք լինեն խորհրդի անդամներ կամ ունենան իրավաբանական մասնագիտություն: Եվ հակառակ՝ հայկական ծագմամբ անուններն ավելի քիչ են հանդիպում ճարտարագիտական, տեխնիկական և գործառնական բնույթի մասնագիտություններում, քան ընդհանուր բնակչության շրջանում: Ազգային մակարդակով մեր երկու ֆոկուսային երկրներում մասնագիտությունները բաշխվում են հետևյալ կերպ՝

## Աղյուսակ 14

### Հայկական մասնագիտություններ ԱՄՆ-ում և Ֆրանսիայում, հմուտ մասնագետներ

Մասնագիտություն	Միացյալ Նահանգներ	Ֆրանսիա
Գործառնական ոլորտ	16,04%	20,39%
Ճարտարագիտական և տեխնիկական ոլորտներ	13,55%	14,53%
Ֆինանսներ	13,18%	10,50%
Վաճառք	10,32%	12,33%
Բժշկություն և առողջություն	13,67%	1,59%
Ընդհանուր կառավարում	8,93%	7,45%
Շուկայավարում	4,54%	11,48%
Իրավական ոլորտ	4,64%	3,79%
Խորհրդի անդամներ	5,02%	1,10%
Խորհրդատուններ	3,61%	9,52%
Մարդկային ռեսուրսներ	3,67%	3,79%
Գիտնականներ	2,83%	3,54%
Ընդամենը <sup>17</sup>	100%	100%


Աղյուս՝ «ZoomInfo»:

Զարմանալի է, որ Ֆրանսիայում հայազգի աշխատողները շատ պակաս հավանականությամբ ներգրավված կլինեն բժշկական և առողջապահական մասնագիտություններում, քան իրենց հայրենակիցները Միացյալ Նահանգներում, ըստ որում Ֆրանսիայում այդ մասնագիտությունները կազմում են ընդամենը 1,59 տոկոս, իսկ Միացյալ Նահանգներում՝ 13,67 տոկոս: Ֆրանսահայերն ավելի մեծ հավանականությամբ կաշխատեն շուկայավարման ոլորտում (11,48-ից 4,54%) և ավելի պակաս հավանականությամբ հանդես կգան որպես խորհրդի անդամներ: Ֆրանսիայում գիտնականներ ու խորհրդատուններ հայտնաբերվել են ավելի մեծ հաճախականությամբ, քան Միացյալ Նահանգներում:

Գծապատկեր 16 ցուցադրված է անհավասար գենդերային բաշխումը ֆրանսահայ և ամերիկահայ մասնագետների շրջանում, մասնավորապես՝ իրավաբանական և կադրային մասնագիտությունների գծով: Ֆրանսիայում ընդհանուր կառավարման գործառույթներում գերակշռում են տղամարդիկ, ովքեր կազմում են ընդհանուր թվի 75 տոկոսը, մինչդեռ իրավաբանական և կադրային ոլորտի պաշտոնները վրադեցնում են կանայք՝ համապատասխանաբար 80 և 77 տոկոս հարաբերակցությամբ: Միացյալ Նահանգներում դիտվում է նույն միտումը տղամարդկանց կողմից գերակշռվող կառավարման և ճարտարագիտական ոլորտներում, թեպետև միջինից ավելի համեստ շեղումով՝ 8 տոկոսի չափով, ըստ որում նույն ցուցանիշը Ֆրանսիայում կազմում է 16 տոկոս: Միացյալ Նահանգներում իրավաբանական և շուկայավարման ոլորտները զգալիորեն ավելի հավասարաշահ են ներկայացված, թեպետև ԱՄՆ-ում տղամարդիկ մեծամասնություն են կազմում բոլոր մասնագիտություններում բացի մեկից՝ մարդկային ռեսուրսներից:

<sup>17</sup> «ZoomInfo»-ի վերլուծության գնահատականով հայազգի բնակչության թիվը կազմում է ԱՄՆ-ում 181 859 մարդ, իսկ Ֆրանսիայում՝ 2 150 մարդ:

## Գծապատկեր 16 Մասնագիտությունների բաշխումը ըստ սեռի և երկիքի, հմուտ մասնագետներ



Աղյուր՝ «ZoomInfo»:

## Գիտական համայնք

«ORCID» տվյալների շտեմարանն ապահովում է մեր բոլոր տվյալների շարքերի մանրամասների ամենաբարձր մակարդակը՝ առաջարկելով վբաղվածության և կրթության վայրը և ոլորտն ըստ տարիների: Մեր Վերլուծությունը նախ ընդգրկում է հայկական ծագում ունեցող հմուտ աշխատողների ընդհանուր միտումները՝ ըստ ոլորտի և պաշտոնի: Այսուհետև ժամանակային տվյալների կետերն օգտագործվում են փաստացի «ռեզյումե» կազմելու համար՝ ժամանակի ընթացքում կրթական կամ աշխատանքային միգրացիան քարտեզագրելու նպատակով և յուրաքանչյուր անհատին հատկացնելով տվյալների եզակի միավորներ: <sup>18</sup> Այս կետերի հիման վրա մենք կարողենք կառուցել սփյուռքի անդամների հետևյալ պրոֆիլները.


1. Արտաքնակներ՝ նրանք, ովքեր ուսումը սկսել են Հայաստանում, տեղափոխվել են արտերկիր հետագա կրթության կամ աշխատանքի նպատակով և այլս չեն վերադարձել:
2. Վերադարձներ՝ նրանք, ովքեր սկսել են կրթությունը Հայաստանում, տեղափոխվել են արտերկիր հետագա կրթություն կամ աշխատանքային փորձ ստանալու համար և, ի վերջո, վերադարձել են Հայաստան՝ աշխատանքի կամ ուսման նպատակով:
3. Սփյուռք՝ նրանք, ովքեր երթեք չեն աշխատել կամ սովորել Հայաստանում:

Վերլուծված հատկանշական մասնագիտական ուղին կարող է ունենալ հետևյալ տեսքը՝  
1995-1999թթ. Բակալավրի կոչում Վանաձորում կենսաքիմիայի ոլորտում  
1999-2003թթ. Մագիստրոսի կոչում ԱՄՆ-ի Վաշինգտոն քաղաքում հանրային առողջապահության ոլորտում  
2004-2006թթ. Բժշկական օրդինատուրա Վիրջինիա նահանգի Արլինգթոն քաղաքի պետական հիվանդանոցում  
2007թ. - Ներկա Մասնավոր բժշկական պրակտիկա Լոնդոնում, Միացյալ Թագավորություն

<sup>18</sup> Գործընթացի որևէ փուլում հետապոտողին որևէ անոն չի հայտնվել: Այսուամենայնիվ, հաշվի առնելով մասնագիտական ուղու կամ աշխատանքային կենսագրության խիստ անձնական բնույթը, այդ գրառումները ՄՄԿ-ի կողմից չեն տրամադրվել կամ հայտնվել որևէ երրորդ կողմի:

## Ուղղություններ

### Գծապատկեր 17 Հիմնական նպատակակետ երկրները՝ ըստ միգրացիայի նպատակի, ակադեմիական համայնք




Աղյուր՝ «ORCID»:

Երկրների մակարդակով ամբողջ տվյալների (հայերի և ոչ հայերի) շտեմարանում դիտվում է միտում դեպի Միացյալ Նահանգները (15%), որին հաջորդում են Բրազիլիան (7,7%), Միացյալ Թագավորությունը (5%), իսկ Իսպանիան, Չինաստանը, Հնդկաստանը, Ռուսաստանի Դաշնությունը և Խոալիան տատանվում են 5-ից 3 տոկոսի միջակայքում: Հայկական անունների ճանաչման նպատակով դիտարկվող շտեմարանի կազմը շեշտակիորեն հակված է հօգուտ հինգ երկրների՝ Ռուսաստանի Դաշնության (26,6%), Հայաստանի (26%), Միացյալ Նահանգների (13%), Ուկրաինայի (6,82%) և Իրանի Իսլամական Հանրապետության (3,8%):

Հայերի և հայկական սփյուռքի համար առաջին քաղաքներն ու երկրները ցուցադրված են Գծապատկեր 18 և բաժանված են հատվածների ըստ միգրացիայի նպատակի (կրթություն կամ աշխատանք): Բնակչության այս երկու խմբերի (արտաքինակներ և վերադարձողներ) ելքային թվերում կրթության առումով դիտվում է շեշտակի նախապատվություն հօգուտ Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի, ընդ որում հայերի գրեթե 27 տոկոսը բարձրագույն կրթությունը ստանում է ուսուական բուհերում, որոնց անմիջապես հաջորդում են Հայաստանի բուհերը: Ռուսաստանի Դաշնությունը նախընտրելի աշխատաշուկա է, և այս եզրակացությունը համապատասխանում է համաշխարհային միտումներին և պաշտոնական տվյալներին: Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) շրջանակներում աշխատանքային միգրացիայի բարենպաստ քաղաքականությունները, ամենայն հավանականությամբ, նպաստում են Ռուսաստանի քաղաքացիություն չունեցող հայերի կացության ու աշխատանքին Ռուսաստանի Դաշնությունում:

## Գծապատկեր 18 Հիմնական նպատակակետ քաղաքները՝ ըստ միգրացիայի նպատակի, ակադեմիական համայնք



Աղյուր՝ «ORCID»:

Քաղաքային մակարդակով հմուտ հայերի կբաղվածության ցուցանիշն ամենաբարձրն է այսպիսի խոշոր քաղաքներում, ինչպիսիք են՝ Երևանը (23%), Մոսկվան (12%), Դոնի Ռուսությունը և Սանկտ Պետերբուրգը (2,9% և 2,8%): Զբաղվածության հնարավորություններ առաջարկող այլ նշանավոր քաղաքներից են՝ Ուկրաինայում Խարկով և Կիև, Իրանի հայամական Հանրապետությունում Թեհրան և Բելառուսում Վիտեբսկ քաղաքները: Համեմատական կարգով հմուտ մասնագետների շրջանում Երևանը միայն մի փոքր ավելի ցանկալի է վայր է կրթության, քան աշխատանքի համար (տես Գծապատկեր 18), մինչդեռ մյուս խոշոր քաղաքների մեծ մասը դրսնորում է միգրացիայի պատճառների նոյնընթաց փոքր շեղում:

Հարկ է նշել, որ թեև մեծ ուշադրություն է դարձվում սփյուռքահայ համայնքի ներգրավման նախաձեռնություններին Գլենդելի (Լոս Անջելես), Բրոստոնի և Փարիզի պես խոշոր կենտրոններում, սակայն այդ քաղաքներին բաժին է ընկնում հմուտ սփյուռքի փոքր մասը՝ ընդամենը 2 տոկոսից փոքր-ինչ ավել: Փարիզը հանդես է գալիս որպես բարձր հմտություններ ունեցող հայերի համար 7-րդ խոշորագույն քաղաքը, սակայն Լոս Անջելեսը և Կալիֆորնիայի այլ քաղաքները դասվում են Բեյրութից, Վիտեբսկից, Սան Դιանունից, Խարկովից և Թեհրանից ցածր: Ռուսաստանի Դաշնությունը չպետք է բնորոշվի միայն որպես ցածր հմտություններ ունեցող աշխատուժի համար շրջանաձև միգրացիայի նպատակակետ երկիր կամ «հրեշտակային» Ներդրումների աղբյուր: Հայկական սփյուռքը Ռուսաստանում կարող է իրականում ավելի լավ դիրքում գտնվել, քան ավելի հեռավոր արտասահմանում բնակվողները՝ նպաստելով գիտելիքների վրա հիմնված տնտեսության զարգացմանը և խթանելով գիտական գործընկերությունը:

## Զբաղվածություն

Ինչպեսնշված է Աղյուսակ 15՝ սկիզբուն օժտված է փորձագիտական բարձր մակարդակով բժշկական, բուժքույրական և առողջապահական ոլորտներում, ինչպես նաև կենսաքիմիայի, ֆիզիկայի և ճարտարագիտության պես ճշգրիտ գիտություններում: Թեև «ORCID»-ի տվյալները վկայում են բժշկական և բուժքույրական ոլորտի մասնագետների ավելի մեծ մասնաբաժնի մասին, քան ամրագրված է մասնագիտական տվյալների շտեմարանում (ZoomInfo), մենք կարող ենք նաև ենթադրել, որ առողջապահության աշխատողները և գիտնականները, բացառությամբ սեփական մասնավոր պրակտիկան ունեցողների, դժվար թե պահանջեն «Ճեռնարկությունից Ճեռնարկություն» ձևաչափով ծառայություններ և, հետևաբար, պակաս հավանականությամբ կիայտնվեն մասնագետների տվյալների շտեմարանում:

### Աղյուսակ 15

### Մասնագիտություններ, ակադեմիական համայնք


Մասնագիտություն (Ներկայիս աշխատանք)	Հայկական գրառումների տոկոս
Բժշկական, բուժքույրական, առողջապահական ոլորտներ	22,96%
Կենսաբանություն, կենսաքիմիա, բնագիտություն	17,86%
Ֆիզիկա և միջուկային ֆիզիկա	10,57%
Ճարտարագիտություն	7,18%
Բիզնես և տնտեսագիտություն	6,62%
Հասարակական և քաղաքական գիտություններ	6,07%
Քիմիա	5,88%
Մաթեմատիկա, հաշվապահություն	4,35%
Պատմություն, բանահրություն, միջազգային հարաբերություններ	3,80%
Տեղեկատվական տեխնոլոգիաներ	3,01%
Կերպարվեստ	2,16%
Ինստիտուտ, կենտրոն կամ գիտական ֆակուլտետ	1,71%
Վարչարարություն և կառավարում	1,56%
Կրթություն	1,49%
Իրավական ոլորտ	1,41%
Կառուցում, շինարարություն և ճարտարապետություն	1,30%
Գյուղատնտեսություն	0,63%
Այլ գիտություններ	0,52%
Աստղաֆիզիկա	0,37%
Էներգետիկա	0,26%
Կիբեռնետիկա	0,26%

Աղյուսակ՝ «ORCID»:

## Կրթություն

Հայկական սփյուռքի հետազոտության (ՀՍՀ) արդյունքում պարզվել է, որ հարցվածների 31 տոկոսը ունի բակալավրի կոչում, 19 տոկոսը՝ մագիստրոսի կոչում, իսկ հարցվածների 8 տոկոսը՝ դոկտորի կոչում կամ նախավերջին գիտական աստիճան, օրինակ՝ իրավագիտության մագիստրոսի կոչում («LLM») կամ բժշկի որակավորում (MD) (ՀՍՀ, 2019թ., էջ 61): «ORCID» տվյալների շտեմարանը հիմնականում պարունակում է գիտական կոչումներ ունեցողների և իր բոլոր գրառումներում 32:21:16 հարաբերակցությամբ ունի տվյալներ դոկտորի, մագիստրոսի և բակալավրի կոչում ունեցողների վերաբերյալ, ընդ որում հայերին առնչվող գրառումների պարագայում՝ 37:24:14 հարաբերակցությամբ: Դոկտորական կոչումների 5 տոկոսը ստացված են բժշկական կամ առողջապահական մասնագիտությունների, 5 տոկոսը՝ կենսաբանական գիտությունների, 3,4 տոկոսը՝ ֆիզիկայի, իսկ 2,7 տոկոսը՝ ձարտարագիտության ոլորտումներում: Բժշկության և առողջապահության ոլորտի գիտական աստիճանները կազմում են մագիստրոսի կոչումների 3,9 տոկոսը, ընդ որում կենսաբանական գիտությունները կազմում են 4 տոկոս, ֆիզիկան՝ 3 տոկոս, իսկ ձարտարագիտությունը՝ 1,3 տոկոս:

### Գծապատկեր 19 Դոկտորական կոչումներ՝ ըստ ուսուցման ոլորտի և երկիրի



Աղյուր՝ «ORCID»:

Ինչպես երևում է Գծապատկեր 19, դոկտորական կոչումները ստացվել են միայն 4 երկր-ներում, այն է՝ ԱՄՆ-ում, Միացյալ Թագավորությունում, Ռուսաստանի Դաշնությունում և Հայաստանում: Թեև բարձրագույն կրթության ավելի ցածր՝ բակալավրի և մագիստրոսի կոչումները, շատ ավելի բավարար են վայրի և ոլորտի առումով, սակայն ունեցած տվյալները վկայում են այն մասին, որ քիմիայի և հասարակագիտության ոլորտներում գիտական աստիճանները սովորաբար ստացվում են Հայաստանում կամ Միացյալ Նահանգներում: Դոկտորական բիկլեսի և տնտեսության ոլորտներում անցնում են Ռուսաստանի Դաշնությունում կամ Հայաստանում, մինչդեռ բժշկական և առողջապահական մասագիտություններով դոկտորական ծրագրերում որևէ հատուկ նախապատվություն կամ օրինաչափութուն չի հայտնաբերվել: Ընդհանուր առմասի, դոկտորական կոչումների ավելի քան 40 տոկոսը ստացվում է Հայաստանում՝ համեմատած ԱՄՆ-ում՝ 30 տոկոսի, Ռուսաստանի Դաշնությունում՝ 17 տոկոսի, Ֆրանսիայում՝ 6 տոկոսի և Մեծ Բրիտանիայում՝ 3 տոկոսից պակաս:

Հայերը ԱՄՆ-ում ուսուցանելու համար առավել հաճախ ընտրում են Կալիֆոռնիայի Լոս Անջելես քաղաքը, ընդ որում ԱՄՆ-ի այլ քաղաքների միջև դիտվում է համեմատաբար հավասար բաշխում: Յուրաքանչյուր ուսումնառության վայրում դիտվել են սակավաթիվ առանձնահատկություններ, բացառությամբ ինֆորմատիկայի: Ըստ ունեցած տվյալների՝ ամերիկահայերի 45 տոկոսն ինֆորմատիկայի ոլորտում կրթություն է ստանում Լոս Անջելեսում, որին հաջորդում են Վիսկոնսին նահանգի Մեդիսոն և Մինեսոտա նահանգի Մինեապոլիս քաղաքները: Նմանապես, կենսաբանության և կենսաբանական գիտությունների մասնագետները, ամենայն հավանականությամբ, կրթություն կստանան Լոս Անջելես, Իթակա, Քեմբրիջ կամ Լա Խոյա քաղաքներում:

## Աղյուսակ 16

### Միացյալ Նահանգների հիմնական քաղաքներ՝ ըստ միգրացիայի նպատակի, ակադեմիական համայնք

Ընդամենը		Կրթություն			Զբաղվածություն		
Քաղաք, նահանգ	Գնահատա- կան	Քաղաք, նահանգ	Գնահա- տական	Ընդհանուր տոկոս	Քաղաք, նահանգ	Գնահա- տական	Ընդհանուր տոկոս
1. Լյու Յորը, Լյու Յորը	185	1. Լոս Անջելես, Կալիֆոռնիա	111	7,83%	1. Լյու Յորը, Լյու Յորը	150	7,02%
2. Բոստոն, Մասաչուսեթս	185	2. Բոստոն, Մասաչուսեթս	66	4,66%	2. Բոստոն, Մասաչուսեթս	119	5,57%
3. Լոս Անջելես, Կալիֆոռնիա	145	3. Ֆիլադելֆիա, Փենսելվանիա	46	3,25%	3. Քեմբրիջ, Մասաչուսեթս	87	4,07%
4. Քեմբրիջ, Մասաչուսեթս	110	4. Բերկլի, Կալիֆոռնիա	41	2,89%	4. Փասադենա, Կալիֆոռնիա	72	3,37%
5. Ֆիլադելֆիա, Փենսելվանիա	87	5. Բալթմոր, Մերիլենդ	39	2,75%	5. Գեյնսվիլ, Ֆլորիդա	46	2,15%
6. Փասադենա, Կալիֆոռնիա	83	6. Էն Արբոր, Միչիգան	37	2,61%	6. Բիրմինգհեմ, Ալաբամա	46	2,15%
7. Բալթմոր, Մերիլենդ	76	7. Լյու Յորը, Լյու Յորը	35	2,47%	7. Թալահասի, Ֆլորիդա	45	2,11%
8. Իթակա, Լյու Յորը	71	8. Ուիլմինգթոն, Դելավեր	34	2,39%	8. Ուորենթեր, Մասաչուսեթս	44	2,06%
9. Չիկագո, Իլինոյս	71	9. Մեդիսոն, Վիսկոնսին	34	2,39%	9. Լյու Հեյվեն, Կոնեկտիկուտ	42	1,97%
10. Բերկլի, Կալիֆոռնիա	70	10. Չիկագո, Իլինոյս	31	2,39%	10. Ֆիլադելֆիա, Փենսելվանիա	41	1,92%
11. Լյու Հեյվեն, Ռոդ Այլենդ	63	11. Մինեապոլիս, Մինեսոտա	30	2,12%	11. Իթակա, Լյու Յորը	41	1,92%
12. Գեյնսվիլ, Ֆլորիդա	60	12. Ջինզուսոն, Ռոդ Այլենդ	30	2,12%	12. Գեյնտել, Կալիֆոռնիա	40	1,87%

Ընդամենը		Կրթություն			Զբաղվածություն		
Քաղաք, Նահանգ	Գնահատա- կան	Քաղաք, Նահանգ	Գնահա- տական	Ընդհանուր տոկոս	Քաղաք, Նահանգ	Գնահա- տական	Ընդհանուր տոկոս
13. Մեղիսոն, Վիսկոնսին	58	13. Իթակա, Նյու Յորք	30	2,12%	13. Չիկագո, Իլինոյս	40	1,87%
14. Էն Արբոր, Միչիգան	49	14. Իրվին, Կալիֆոռնիա	24	1,69%	14. Թուսոն, Արիզոնա	39	1,83%
15. Թալսիասի, Ֆլորիդա	48	15. Լա Խոյա, Կալիֆոռնիա	23	1,62%	15. Փլիվլենդ, Օհայո	37	1,73%

### Աղյուր՝ «ORCID»:

Միացյալ Նահանգներում բարձր հմտություններ ունեցող ամերիկահայերի համար զբաղվածության հնարավորությունները զգալիորեն շեղվում են կրթության հիմնական քաղաքներից: Զբաղվածության առումով Նյու Յորքը գրավում է սփյուռքի 7 տոկոսը՝ հիմնականում բժշկական ոլորտում: Նմանապես, զբաղվածության առումով Բոստոնի հիմնական գործառուները հիվանդանոցներն են և բժշկական հաստատությունները, թեպետև գետի մյուս ափին՝ Ջեմբրիջում գրավիչ են Հարվարդն ու Մասաչուսեթսի Տեխնոլոգիական հնստիտուտը: Հարվային նահանգներում (5-րդ, 6-րդ և 7-րդ կետեր) գիտական ոլորտի մասնագետներն աշխատանքի են ընդունվում որպես դասախոսներ, մինչդեռ Փասադենայում աշխատանքը կենտրոնացած է լաբորատորիաների, տեղեկատվական տեխնոլոգիաների և խորհրդատվության շուրջ:

Թեև չի կարելի ասել, որ հատուկ հաստատություններ ներկայացնող քաղաքները բազմաթիվ են, սակայն վերը նշված քաղաքներից մի քանիսը հայտնի են նրանով, որ հեղինակավոր համալսարաններ և քոլեջներ ունենալու շնորհիվ պատրաստում են վերնախավը: Օրինակ, Մասաչուսեթս նահանգի Ջեմբրիջ քաղաքը (Հարվարդի համալսարան և Մասաչուսեթսի Տեխնոլոգիական հնստիտուտ), Մեծ Բրիտանիայի Օքսֆորդ քաղաքը, Կոնեկտիկուտ նահանգի Նյու Հեյվեն քաղաքը (Յելլի համալսարան) և Նյու Յորք նահանգի Իթակա քաղաքը (Քորնելի համալսարան) բոլորն ել բարձրագույն կրթության առաջնակարգ հաստատություններ ունեցող համայնքներ են: Սփյուռքի համար Միացյալ Նահանգներում առաջնային ուսումնական հաստատություններն են՝ Հարավային Կալիֆոռնիայի Համալսարանը, Լոս Անջելեսում Կալիֆոռնիայի համալսարանը, Հյուսիսարևելյան համալսարանը, Թաֆթս համալսարանը, Բերկլի քաղաքում Կալիֆոռնիայի համալսարանը, Ջոնս Հոփքինսի համալսարանը և Մեդիսոնում Վիսկոնսինի համալսարանը: Ֆրանսիայում հայկական ծագում ունեցողների (78) մոտավորապես 31 տոկոսը կրթություն է ստանում Փարիզում, որին հաջորդում են Վիլյորբանը, Սոֆիա Անտիպոլիսը և Մարսելը, թեպետև Մարսելն ավելի շատ տարածված ուղղություն է աշխատանքի (18%), քան կրթության (5,58%) համար: Նմանապես, Վիլյորբանը կրթության համար ավելի տարածված ուղղություն է, որին բաժին է ընկնում բնակչության 12,35 տոկոսը, ի տարբերության քաղաքում աշխատող 3,61 տոկոսի: Ի տարբերություն Միացյալ Նահանգների՝ ֆրանսահայ սփյուռքում չեն արձանագրվել որևէ հստակ նախապատվություններ, բացառությամբ Սոֆիա Անտիպոլիս և Փարիզ քաղաքների:

**Աղյուսակ 17****Ֆրանսիայի հիմնական քաղաքներ՝ ըստ միգրացիայի  
նպատակի, ակադեմիական համայնք**

Ընդամենը		Կրթություն			Զբաղվածություն		
Քաղաք	Գնահատա- կան	Քաղաք	Գնահա- տական	Ընդհանուր տոկոս	Քաղաք	Գնահա- տական	Ընդհանուր տոկոս
1. Փարիզ	241	1. Փարիզ	78	31,08%	1. Փարիզ	160	30,93%
2. Մարսել	109	2. Վիլյորբան	31	12,35%	2. Մարսել	95	18,03%
3. Օրն	57	3. Սոֆիա Անտիպոլիս	22	8,76%	3. Օրն	45	8,54%
4. Վիլյորբան	50	4. Մարսել	14	5,58%	4. Թուլուզ	23	4,36%
5. Լիոն	29	5. Օրն	12	4,78%	5. Պլուվանե	20	3,80%
6. Թուլուզ	24	6. Մարն լա Վալե	10	3,59%	6. Լիոն	20	3,80%
7. Սոֆիա Անտիպոլիս	22	7. Լիոն	10	3,59%	7. Վիլյորբան	19	3,61%
8. Պլուվանե	20	8. Կերմոն-Ֆեռանդ	10	3,19%	8. Նանշ	18	3,42%
9. Նանշ	18	9. Վերսալ	10	2,79%	9. Լե Կրեմլեն Բիստրո	15	2,85%
10. Ռեն	16	10. Դիժոն	10	2,79%	10. Պալեյո	14	2,66%

Աղյուր՝ «ORCID»:

Ըստ Ֆրանսիայում աշխատանքի և ուսման հատվածների, վերժումբաժանված քաղաքները վկայում են հմուտ սփյուռքի շրջանում մի հետաքրքրական ցրվածության մասին, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ ակադեմիական համայնքի ներկայացուցիչները չեն մնում իրենց մայր բուհում աշխատելու նպատակով, այլ պատրաստակամ և ի վիճակի են տեղափոխվել այստեղ, որտեղ կան հմտություններ պահանջող աշխատատեղեր: Թեև կրթության և զբաղվածության առումով հիմնական քաղաքները խոշոր քաղաքային կենտրոններ են, սակայն աշխատողների թվով իինգերորդ ամենաբարձր կենտրոնացումը դիտվել է Բրեստան Երկրամասի մի փոքր ափամերձ քաղաքում: Պլուվանե քաղաքում ապրում է մեր տվյալների շտեմարանում ընդգրկված (20 հոգի) ֆրանսահայ հմուտ աշխատողների 3,8 տոկոս, ընդ որում 2019 թվականի դրությամբ քաղաքի համայնքային բնակչությունը կազմում էր 12 000 մարդ: Պլուվանե քաղաքում գտնվում են մի շարք հետազոտական ինստիտուտներ, որոնք մասնագիտացած են ճարտարագիտության և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում, օրինակ՝ «Տելեկոմ Բրեստան»-ը և Բրեստի ազգային ճարտարագիտական դպրոցը («ENIB»), ինչպես նաև ծովային հետազոտությունների մի շարք ինստիտուտներ: Փաստորեն, վերոհիշյալ մի քանի վայրերում, այն է՝ Փարիզի համայնքներ լե Կրեմլեն Բիստրում և Պալեյոյում տեղակայված են հեղինակավոր հաստատություններ, որոնք կապված են ազգային տեխնիկական, բժշկական և գիտական ասոցիացիաների հետ:

## Անդադարձ սիյուռքի ներգրավվածության վրա

Համագործակցության հնարավորություններ գտնելու համար կարելի է դիմել կազմակերպություններ, որոնք մասնագիտացված են ինստիտուտների (օրինակ՝ «ParisTech»), գիտական համալսարանների և մասնագիտական ցանցերի միջև համագործակցության մեջ: Զբաղվածության առումով տարբեր հաստատություններ են գտնվում բարձր հմտություններ ունեցող հայագի մասնագետների ուշադրության կենտրոնում, այն է՝ Մարսելի պարզացման հարցերով ֆրանսիական հետազոտական ինստիտուտը, Փարիզի Գիտական հետազոտությունների ֆրանսիական ազգային կենտրոնը («CNRS»), գյուղատնտեսական հետազոտությունների ինստիտուտները, Փարիզի առողջության և բժշկական հետազոտությունների ազգային ինստիտուտը, ինչպես նաև Երկրի անվանի բուհերը, որոնք կենտրոնացած են ճարտարագիտության և կիրառական գիտությունների վրա: Այս հաստատությունները կարող են դառնալ հայ գործնկերների հետ համագործակցության և փոխանակումների աղբյուր և ծառայել կարողությունների կատարելագործմանն ու հմտությունների փոխանակումների խթանմանը:

Ֆրանսիայում համալսարանական քաղաքների յուրահատուկ բաշխումը թույլ է տալիս լրացնիշ պատկերացում կազմել սիյուռքի համար նախընտրելի դպրոցների մասին, քանի որ այն զգալիորեն տարբերվում է ընդհանուր բնակչությունից: Տվյալների ամբողջ շտեմարանում, որտեղ ընդգրկված են նաև հայկական ծագում չունեցողների տվյալները, որպես ուսումնառության համար նախընտրելի վայրեր նշված են Փարիզ, Թուլուզ, Սուսելյե, Սուրասբուրգ և Մարսել քաղաքները: Մրանից կարելի է ենթադրել, որ Վիլյորբանը, Սոֆիա Անտիպոլիսը և Մարտին Լա Կալեն նախընտրելի տարբերակներ են սիյուռքում: Սոֆիա Անտիպոլիսի համայնքը տեխնոլոգիական պարկ է Նիցցա և Անժեր քաղաքների միջև ընկած տարածքում և միավորում է ազգային և միջազգային նորաստեղծ ձեռնարկությունները, ընկերությունները և գիտահետազոտական ստորաբաժանումները:

## Արտաբևակներ, վերադարձողներ և սիյուռք

Արտաբևակների և վերադարձողների չափագրման համար հետևյալ տվյալներն արտացոլում են նրանց, ում տվյալների առաջին կետը (առաջին աշխատանքը կամ համալսարանը) ծագում է Հայաստանում, և ովքեր իրենց աշխատանքային կամ կրթական պատմության մեջ նշել են որևէ երկրորդ երկիր: Սա թույլ է տալիս ստանալ յուրաքանչյուր առանձին անհատի հետագիծը՝ ռեզյումեի օրինակով: Մեր Նմուշում արտագաղթածների 33 տոկոսն (դասակարգված են որպես «վերադարձողներ») աշխատանքային փորձից կամ արտասահմանում սովորելուց հետո վերադարձել է Հայաստան՝ այստեղ բնակություն հաստատելու նպատակով, իսկ 66 տոկոսը կամ դեռ պետք է վերադառնա, կամ չունի նման մտադրություն (արտաբևակներ):

Մենք գտնում ենք, որ այս երկու խմբերից Հայաստանից բարձր հմտություններ ունեցող միգրանտների 24 տոկոսը մեկնում են Ռուսաստանի Դաշնություն, 15 տոկոսը Միացյալ Նահանգներ, 7 տոկոսը՝ Գերմանիա, իսկ 5 տոկոսը՝ Իտալիա: Վերադարձածներից բոլորը մեկնել են բարձրագույն կրթություն ստանալու նպատակով (իմանականում՝ Ռուսաստանի Դաշնություն և Միացյալ Նահանգներ) և վերադարձել են Հայաստանում աշխատանքի հնարավորությունների համար, բացառությամբ Ավստրիայի և Գերմանիայի, որտեղ միգրանտները ձեռք են բերել աշխատանքային փորձ: Աղյուսակ 18 արտացոլված են այն երկրները, որոնք ունեն կրթություն ստանալու կամ մասնագիտական փորձից հետո Հայաստան վերադառնալու ամենաբարձր ցուցանիշներ:

Վերադարձի ցուցանիշների վրա կարող են ապել ընդունող երկրների տնտեսական պայմանները, անձնական գործոնները կամ ծրագրի ավարտից հետո արտագևանա աշխատանքի համար բարենպաստ քաղաքականությունները: Վերադարձի բարձր ցուցացիշները կարող են վկայել Եվրամիությունում և Միացյալ Նահանգներում աշխատանքային միգրացիայի համար անբարենպաստ քաղաքականությունների կամ Ռուսաստանի Դաշնությունում տնտեսական ծանր պայմանների մասին: Օրինակ, ԱՄՆ-ում արտասահմանցի շրջանավարտների համար սովորաբար պահանջվում է գործատուի հովանավորությունը, բայց շատ երկրներում որոշ մաս-

### Աղյուսակ 18

#### Ուսման կամ աշխատանքի երկրներ և հայազգի վերադարձողների տոկոս

Ուսման կամ աշխատանքի երկիր	Ռուսաստանի Դաշնություն	Սլովենիա	Լիեխենստան	Իսպանիա	Իտալիա	Միացյալ Նահանգներ
Վերադարձի միջին ցուցանիշ	<b>39%</b>	<b>50%</b>	<b>50%</b>	<b>30%</b>	<b>40%</b>	<b>46%</b>

Աղյուր՝ «ORCID»:

Նագիտությունների գծով շրջանավարտներին առաջարկում են ուսանողական վիզայի ավարտից հետո ձեռք բերել ժամանակավոր կացության իրավունք:

Արտերկրում վրադաշնորհյան հնարավորություններն արտաքինակների և վերադարձողների համար գրեթե բացառապես ճշգրիտ գիտությունների ոլորտում են: Բացի Գերմանիայից և Միացյալ Նահանգներից, որոնք հետապոտական ինստիտուտների հումանիտար գիտությունների բաժիններում ընդունում են մի շարք հասարակագետերի, և Միացյալ Թագավորության, որտեղ հայերը աշխատում են գրեթե բացառապես համալսարաններում, երկիրը լքող հմուտ աշխատութիւն մեծ մասն ինժեներներ են: Արտերկրում գտնվող աշխատութիւն մասով Գերմանիան հյուրընկալում է բարձր հմտություններ ունեցող հայերի 11,6 տոկոսը, իսկ ԱՄՆ-ու Ուսուաստանը՝ յուրաքանչյուրը 6,5-ական տոկոս: Իրանի հսկամական Հանրապետությունում, Միացյալ Նահանգներում և Ռուսաստանի Դաշնությունում աշխատում են հայ ինժեներներ, խորհրդատուներ, բժիշկներ, ֆիզիկոներ, մաթեմատիկոներ և աստղաֆիզիկոներ:

Եթե վերջնական դասակարգմամբ սահմանվել է, որ «ORCID» տվյալների շտեմարանում որպես «սփյուռք» նշված անձինք երբեւ չեն սովորել կամ աշխատել Հայաստանի Հանրապետությունում: Ի տարբերություն արտաքինակների և վերադարձողների, այս գրառումներում արտացոլված են նրանք, ովքեր պակաս շոշափելի կապեր ունեն Հայաստանի հետ և կարող են ավելի մեծ դժվարությամբ ներգրավվել կարգացման նախաձեռնություններում: Բացառությամբ Հայաստանում սովորածների կամ աշխատածների՝ տվյալների շտեմարանը հաստատում է, որ աշխատանքի և ուսման նպատակով սփյուռքի ամենամեծ թվաքանակը գտնվում է Միացյալ Նահանգներում (67 աշխատող և 156 ուսանող), որին հաջորդում են Ռուսաստանի Դաշնությունը (23 աշխատող, 124 ուսանող) և Ֆրանսիան (9 աշխատող, 40 ուսանող): Ըստ սփյուռքի դասակարգման ամենատարածված ուսման ոլորտներն են՝ ֆիզիկան, մաթեմատիկան, ինժորմատիկան, քաղաքագիտությունը և էլեկտրատեխնիկան, ընդ որում ճարտարագիտական ոլորտներն առավել տարածված են Միացյալ Նահանգներում և Իրանի հսկամական Հանրապետությունում: Քիմիան Ֆրանսիայում սփյուռքի շրջանում ուսման և վրադաշնորհյան առաջնակարգ ոլորտ է: Երբեւ Հայաստանի Հանրապետությունում չաշխատած կամ չսովորած սփյուռքին առնչվող տվյալների այս ենթախմբում դրկտորանտների ամենաբարձր թիվը գտնվում է Միացյալ Նահանգներում, Ռուսաստանի Դաշնությունում և Մեծ Բրիտանիայում (համապատասխանաբար՝ 42, 18 և 11), ընդ որում մագիստրոսի կոչումներ ունեցողների մեծ մասը ապրում է ԱՄՆ-ում, Իրանի հսկամական Հանրապետությունում և Ռուսաստանի Դաշնությունում (30, 13 և 9): Հետապոտողների ամենամեծ թիվն արձանագրվել է Միացյալ Նահանգներում, Ռուսաստանի Դաշնությունում և Նիդեռլանդներում, մինչդեռ ԱՄՆ-ին բաժին է ընկնում պրոֆեսորների ու այցելու գիտնականների ճնշող մեծամասնությունը:

## ԵՎՐԱՖԱԿԻՑ ԴԻՍԹՈՂՈԼԹՅՈՒՆՆԵՐ և առաջարկություններ

Ժամանակին պետություններն ափսոսանքով տաղանդավոր մասնագետների կորուստ էին համարում ավելի գրավիչ հեռանկարներով և հնարավորություններով պայմանավորված աշխատուժի արտահոսքն արտերկիր: Աշխարհի աճող գլոբալացման պայմաններում կարող է պատահել այնպես, որ երկրները ներդրումներ կատարեն իրենց քաղաքացիների մեջ, սակայն վերջիններս ի վերջո փնտրեն կրթական կամ աշխատանքային հնարավորություններ արտերկրում: Այդուհանդեռձ, մենք այժմ գիտենք, որ հմուտ աշխատուժի շարժունակությունը ստեղծում է փոխահավետ համակարգեր: Այսօր մարդիկ գիտակցում են, որ արտագաղթողները կարող շաղկապ են տնտեսությունների, կառավարությունների և կազմակերպությունների միջև: Հնարավոր է, որ Հայաստանի Հանրապետությունից դուրս աշխատող ինժեներներն ու բժշկական ոլորտի մասնագետները թեթևացնում են գերբեռնված հայրենական աշխատաշուկան՝ միաժամանակ ձեռք բերելով հայրենիքում փոխանցվելիք արժեքավոր փորձ: Ինչպես վերջերս արտագաղթածները, այնպես էլ սփյուռքը կարող են կամուրջ դառնալ հասարակությունների միջև՝ խրախուսելով անդրագային գործարար կապերի վարգացումը, նորարարությունը և ներդրումները մարդկային կապիտալում:

Զինված լինելով հմուտ աշխատուժի շարժունակության օրինաչափությունների, նպատակակետ երկրների և ընտրված մասնագիտությունների վերաբերյալ տվյալներով՝ հնարավոր կլինի մշակել փոխահավետ գործընկերություններ և հնարավորություն ընձեռել Հայաստանի Հանրապետության օգտագործել արտերկրի լավագույն հաստատությունների և կազմակերպությունների ռեսուրսներն իշահ հայ տաղանդավոր մասնագետների կարգացմանն ու պատրաստմանը: Մեծ տվյալների վերլուծությունն առաջարկում է այդ օրինաչափությունները և դրդապատճառները հասկանալու նոր մեթոդներ: Մեծ տվյալների շնորհանդերքի նախնական վերլուծության հիման վրա հարկավոր է մշակել ավելի թիրախային ուսումնասիրություններ՝ նպատակ ունենալով ավելի մեծ խորությամբ քննության առնել հետաքրքրություն ներկայացնող ոլորտները: Այս նախագծի շրջանակներում մեր իրականացված աշխատանքի հիման վրա՝ կարող ենք հաստատել, որ Լու Անշելեսի, Բոստոնի և Փարիզի սփյուռքի հենակետերը շարունակում են մնալ սփյուռքի գործունեության և զբաղվածության օջախներ: Այսուամենայնիվ, դրանք ավելի փոքր են, քան Մոսկվայի և Ռուսաստանի Դաշնության այլ քաղաքների, ինչպես նաև Մերձավոր Արևելքի ավելի մեծ համայնքները:

Հաշվի առնելով Հայաստանում պայմանների բարելավման, ինչպես նաև սփյուռքի և Հայաստանի միջև ավելի սերտ կապերի հաստատման գործում սփյուռքի մեծ խանդավառությունը և պատրաստակամությունը՝ ՀՀ կառավարությունը պետք է միջնորդ դառնա հնարավոր գործընկերների միջև՝ ծառայելով որպես օժանդակ, ապաքաղաքական ռեսուրս լավագույն փորձի փոխանակման և ինկուբացիոն նախաձեռնությունների համար: Հիմք ընդունելով սույն կեկուցում բերված մեր վերլուծությունից քաղված դասերը՝ ներկայացնում ենք ՀՀ կառավարության հետագա քայլերի վերաբերյալ հետևյալ առաջարկությունները:

- Հարկավոր է մանրամասն ուսումնասիրել ֆրանսիական սփյուռքի համար նախատեսված **Երիտասարդական ծրագրերը**, ինչպես նաև Միացյալ Նահանգներում 45 տարեկանից բարձր անձանց ներգրավում՝ լավագույն փորձն այլ երկրներում կիրառելու նկատառումով:
- Միացյալ Նահանգների և ֆրանսիայի սփյուռքի տարբեր հետաքրքրության խմբերին ուղղված ներգրավման **անհատականացված մոտեցումներում** պետք է հաշվի առնել համացանցային վերլուծություններից ստացված վարքագծային տվյալները, օրինակ՝ հաղորդակցման նախընտրելի միջոցները, լեզվական նախասիրությունները և շուկայավարման կատեգորիաները:
- Հմտությունների և գիտելիքների փոխանցման նախաձեռնություններում հարկավոր է առաջնահերթություն տալ **սահմանված այն ուժեղ ոլորտներին**, որոնցում հայ սփյուռքը ունի համեմատական առավելություններ, օրինակ՝ ճարտարագիտությանը և բժշկական գիտություններին:
- Ըստ ստացված տեղեկությունների հայ սփյուռքի մեծ կենտրոնացումներ ունեցող **բուհերը** (օրինակ՝ Փարիզի տեխնիկական և ճարտարագիտական համալսարանները) պետք է հաստատեն գործընկերություններ, որոնք կոչված կլինեն ուսանողների և անձնակազմի համար դյուրացնել գիտելիքների փոխանցման և տարածման հնարավորությունները:
- Հաշվի առնելով հայոց լեզվի իմացության տարբեր մակարդակը** և լեզվին տիրապետելու հարցում ցուցաբերված հետաքրքրությունը՝ լեզվական բաղադրիչներ ներառող նախաձեռնությունների մշակումը կարող է խրախուսել սփյուռքի ավելի մեծ ակտիվացումը:
- Քանի որ Ռուսաստանի Դաշնությունը սահմանվել էրաբես սփյուռքի համար նախընտրելի աշխատաշուկա**, իսկ ընթերցողների շրջանում ռուսաց լեզվի իմացությունը շատ տարածված է, ուստի պետք է ակտիվորեն խրախուսել հմտությունների և գիտելիքների փոխանակման համար ընդլայնված գործընկերության ստեղծման ջանքերը, քանի դրանք կարող են լինել ավելի արդյունավետ և պակաս ծախսատար, քան փոխանակումներն ավելի հեռավոր երկրների հետ: Ռուսաստանի Դաշնության հետ մշակութային և տնտեսական մերձեցման բարձր մակարդակը, ինչպես նաև հմուտ արտաքնակների և վերադարձների 24 տոկոսի կրթական միգրացիան դեպի Ռուսաստանի Դաշնություն ենթադրում են համագործակցության զգալի ներուժ:
- Տառայելրաբես կենտրոնացված և արագաշարժ հանգույց** սփյուռքի կապն ու համակարգումը դյուրացնելու համար: Նախաձեռնությունների իրականացման հարցում գլխավոր մտահոգություններից են սփյուռքի պառակտված բնույթը և համագործակցության ցածր խրախուսումը կամ պատրաստակամությունը: Այնպիսի միջավայրի խթանումը, որի միջոցով սփյուռքը կարողանա կիսվել իր լավագույն փորձով և միավորել իր ռեսուրսները, կօգնի կազմակերպիչներին տեղեկանալ զուգահեռ նախագծերի մասին:
- Աշխատել գոյություն ունեցող նախաձեռնությունների և գործընկերությունների շրջանակներում՝** նպատակ ունենալով ստեղծել սփյուռքի համար Հայաստանի Հանրապետությունում կարճաժամկետ կամ երկարաժամկետ հիմունքներով աշխատելու գրավիչ հնարավորություններ և նվազեցնել խոչընդոտները՝ անդրադառնալով այնպիսի կարևոր մտահոգիչ խնդիրներին, ինչպիսիք են՝ լեզվի իմացությունը կամ հեղինակավոր հաստատություններում պրակտիկայի հնարավորությունները և ստեղծելով փոխշահավետ աշխատանքային փորձ ստանալու պայմաններ, որոնք կնպաստեն սփյուռքի անհատական և մասնագիտական զարգացմանը:

## ՄԵԶԲԵՐՎՈՂ աշխատություններ

Aguinas, D.R. and K. Newland

2012 Developing a Road Map for Engaging Diasporas in Development: A handbook for policymakers and practitioners in home and host countries, International Organization for Migration, Geneva.

<https://publications.iom.int/books/developing-road-map-engaging-diasporas-development-handbook-policymakers-and-practitioners>.

Agribusiness Teaching Center 2019

International Center for Agribusiness Research and Education. Accessed 20 May 2019.  
<https://icare.am/atc>.

Ananian, S. 1999

30 Ans Ecole Bilingue Saint Mesrop, Alfortville 1978-2008. Alfortville: Collection Alfortville-Mémoires.

Aslanov, L. 2018

“Armenian Studies Takes A New Turn”. Armenian Diaspora Survey, November 15, 2018. [www.armeniandiasporasurvey.com/newsandviews/2018/11/15/armenian-diaspora-studies-takes-a-new-turn](http://www.armeniandiasporasurvey.com/newsandviews/2018/11/15/armenian-diaspora-studies-takes-a-new-turn).

Bakalian, A. 1993

Armenian—Americans. From Being to Feeling American. Transaction Publishers, New Brunswick.

Berberyan A., and O. Tuchina, 2018

Исследование национальной идентичности и исторического опыта личности в титульном армянском этносе и сопряженной армянской диаспоре в России. Российский психологический журнал, 15(2), 190–214.

Belmonte, L. 1999

De “La Petite Arménie” au Boulevard des Grands Pins : évolution de l'espace communautaire arménien d'un quartier de Marseille des origines a nos jours. Marseille: Tacussel.

Bozorgmehr M., G. Sabagh and C. Der-Martirosian, 1990

Subethnicity: Armenians in Los Angeles. Department of Sociology, University of California, Los Angeles.

Bulbulian, B. 2001

The Fresno Armenians: History of a Diaspora Community. Sanger: Word Dancer Press.

- Chaloff J. and Lemaotre G. 2009  
 Managing Highly Skilled Labour Migration. A Comparative Analysis of Migration Policies and Challenges in OECD Countries.
- Fonds ARAM 2019  
 Mission de l'UMAF après le séisme en Arménie. ARAM. Accessed 15 May 2019.  
<https://webaram.com/biblio/iconographie/deplacement-de-lumaf-apres-le-seisme-en-armenie>.
- Florida, R., 2006  
 "Where the Brains Are". The Atlantic, October 2006.  
 2014. "High-School Dropouts and College Grads are Moving to Very Different Places". City Lab. June 16, 2014. [www.citylab.com/life/2014/06/high-school-drop-outs-and-college-grads-are-moving-to-very-different-places/372065/](http://www.citylab.com/life/2014/06/high-school-drop-outs-and-college-grads-are-moving-to-very-different-places/372065/).
- Gevorkyan, A. and V. Grogorian, 2003  
 Armenia and its Diaspora: is there a scope for a stronger economic link?  
 Armenian International Policy Research. Working Paper No. 03/10., April 2003.
- Gevorkyan, A.V., 2019  
 Lessons from an Armenian Diaspora Online Survey A Diaspora Portal and Non-Monetary Development Initiatives in Small Economies. EVN Report (May 2016) [www.evnreport.com/raw-unfiltered/lessons-from-an-armenian-diaspora-online-survey](http://www.evnreport.com/raw-unfiltered/lessons-from-an-armenian-diaspora-online-survey).
- Gregorian V. 1974  
 Minorities of Isfahan: the Armenian community of Isfahan 1587–1722.  
*Iranian Studies*, 7(3–4):652–680.
- Jones, M., Coveiello, N., Tang, Y., 2011  
 International entrepreneurship research (1989-2009): a domain ontology and thematic analysis. *J Bus Ventur* 26(6):632–659.
- Hovanessian, M. 1988  
 "Soixante ans de présence arménienne en région parisienne (le cas d'Issy-les-Moulineaux)". *Revue Européenne des Migrations Internationales* 4(3):73–95.
- Kapur, D. 2010  
 Diaspora, Development, and Democracy: The Domestic Impact of International Migration from India. Princeton; Oxford. Princeton University Press.
- Kuznetsov, Y. 2008  
 Mobilizing intellectual capital of diasporas: from first movers to a virtuous cycle.  
 World Bank Institute, Washington, D.C.
- Kuznetsov, Y. and C. Sabel 2006  
 International Migration of Talent, Diaspora Networks, and Development: Overview of Main Issues. In: Kuznetsov, Y., Ed., Diaspora Networks and the International Migration of Skills: How Countries Can Draw on Their Talent Abroad, World Bank Institute, Washington, pp. 3–20.
- Larner, W. 2007  
 Expatriate experts and globalizing governmentality: The New Zealand diaspora strategy. *Transactions of the Institute of British Geographers* 32.

- Le Tallac, C. 2001  
La Communauté Arménienne de France 1920–1950. Paris : L'Harmattan.
- Mahroum, S. 2001  
Europe and the immigration of highly skilled labour. *International Migration* 39 (5): 27–43.
- Mirak, R. 1983  
Torn between two lands: Armenians in America, 1890 to World War I. Cambridge, MA: Harvard University Press.
- Organisation for Economic Co-operation and Development (OECD) 2019  
Unemployment rate (indicator). doi: 10.1787/997c8750-en.  
Accessed 9 December 2019.
- Organisation for Economic Co-operation and Development (OECD) 2008  
The Global Competition For Talent: Mobility of the Highly Skilled.  
September 2008. Available at:  
[www.oecd.org/sti/inno/theglobalcompetitionfortalentmobilityofthehighlyskilled.htm](http://www.oecd.org/sti/inno/theglobalcompetitionfortalentmobilityofthehighlyskilled.htm).
- Sanamyan, E. 2016  
“The Armenian Diaspora and Armenia: A New Relationship?” EurasiaNet, November 14 2016.  
<https://eurasianet.org/armenian-diaspora-and-armenia-new-relationship>.
- Smith, T. 2000  
Foreign attachments: The power of ethnic groups in the making of American foreign policy. Harvard University Press, Cambridge MA.
- Tchilingarian, H. (Ed.). 2019  
Armenian Diaspora Survey. Armenian Institute. London.  
[https://static1.squarespace.com/static/5bc88a4c809d8e7540bcce82/t/5f5382df75dd3715b1125b37/1599308587911/Armenian\\_Diaspora\\_Survey\\_2019\\_results\\_book\\_05092020v2.pdf](https://static1.squarespace.com/static/5bc88a4c809d8e7540bcce82/t/5f5382df75dd3715b1125b37/1599308587911/Armenian_Diaspora_Survey_2019_results_book_05092020v2.pdf)
- Temime, E. 2007  
“Les Arméniens à Marseille : Des années vingt à aujourd’hui.” Hommes et Migrations 1265:22–32.
- Ter Minassian, A. 1997  
Histoires croisées: diaspora, Arménie, Transcaucasie, 1890-1990. Toulouse, Éditions Parenthèses.
- Tintori, G., A. Alessandrini and F. Natale 2018  
“Diversity, residential segregation, concentration of migrants: a comparison across EU cities. Findings from the Data Challenge on Integration of Migrants in Cities (D4I).” JRC Technical Reports. European Union. Luxembourg.
- Tölöyan, K. 2006  
“A General Introduction to Exile”. *Les diasporas dans le monde contemporain*: 195–209.
- Tölöyan, K. 1999  
Diaspora as a Concept and a Metaphor. Barnard Forum on Migration, Barnard College.

- Tölölyan, K. and Papazian, T., 2014  
“Armenian Diasporas and Armenia: Issues of Identity and Mobilization.”  
*Études Arméniennes Contemporaines* 3:83–101.
- Vassilian, H. 1990  
Armenian American Almanac. Glendale: Armenian Reference Books Co.
- Vertovec, S. 2005  
“The Political Importance of Diasporas.” Migration Information Source.  
[www.migrationpolicy.org/article/political-importance-diasporas](http://www.migrationpolicy.org/article/political-importance-diasporas).
- Wertsmen, V. 1978  
The Armenians in America 1618-1976. Dobbs Ferry.
- Yousefian, Sevan N., 2014  
“Picnics for Patriots: The Transnational Activism of an Armenian Hometown Association.” *Journal of American Ethnic History* 34, no. 1 (Fall):31–52.

ՀԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒՄ  
ՄԵԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՕԳՆՈՒԹՅԱՄԲ

**ՄԻԱՅՅԱԼ ԼԱՀԱՆԳԵՐՈՒՄ ԵՎ ՖՐԱՆՏԱՅՈՒՄ  
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ**

